

W 3-19231

Հ. Ս. Խ. Հ.

ԲԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՈՐԵՆՍՊԻՐԲ

ԵՆՐԵՎԱՆ

Յրեւսի Ս. Ռաքիբ Բալաբեկ

1928

Հ. Ս. Խ. Հ.

ԴԵԿՐԵՏՆԵՐԻ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ

ՀԱՎԱՔԱԾՈՒ


1923

Մ Ա Ր Տ

№ 3

1923
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՈՐԵՆՍԳԻՐՔ

ԸՆԴՈՒՆՎԱԾ Ե ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԺԱԳԻՐ ԿՈՄԻՏԵԻ
ՏԵՒ 1923 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ՆԻՍՏՈՒՄ



ՎՈՐՈՅՈՒՄ

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՈՐԵՆՍԳՐԲԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Քաղաքացիական Որենսգրքը գործադրվում է 1923 թվի Ապրիլի 10-ից:

2. Հանրապետության դատաստանական և այլ հիմնարկությունները չեն ընդունում նաեւ 1920 թ. Նոյեմբերի 29-ից առաջ ծաղած և վոչ մի վեճ՝ քաղաքացիական իրավահարաբերությունների վերաբերյալ:

3. Քաղաքացիական իրավահարաբերությունների վերաբերյալ այն վեճերը, վոր ծագել են 1920 թ. Նոյեմբերի 29-ից հետո մինչև Հ.Ս.Խ.Հ. Քաղաքացիական Որենսգրքի գործադրությունը, կարգավորվում են այն որենքներով, վոր գործում են նրանց ծագման պահուն:

4. Այն իրավահարաբերությունների նկատմամբ, վոր թույլ են տրվում նրանց ծագման պահուն գործող որենքներով, յեթե յիշյալ որենքներով լիովին չեն կարգավորվում, կիրարկվում են Հ. Ս. Խ. Հ. Քաղաքացիական Որենսգրքի վորոշումները:

5. Հ. Ս. Խ. Հ. Քաղաքացիական Որենսգրքի տարածական մեկնությունը թույլատրելի յե այն դեպքում միայն, յերբ այդ պահանջում է Բանվորա-Փյուղացիական Պետության և աշխատավոր մասաների շահերի պաշտպանությունը:

6. Արգելվում է Որենսգրքի վորոշումների մեկնությունը՝ տապալված կառավարությունց որենքների և հեղափոխությունից առաջ յեղած դատարանների գործունեության հիման վրա:

7. Քաղաքացիական դատերի ընդհանուր յեռամյա վաղեմությունը տարածվում է նաև նախ քան Հ. Ս. Խ. Հ. Քաղաքացիական Որենսգրքի գործադրությունը առաջ յեկած իրավահարաբերությունների վրա:

8. Ոտար պետությունց քաղաքացիների իրավունքները կարգավորվում են մասնավոր համաձայնություններով: Յեթե ոտարելակացիների իրավունքները նախատեսված չեն համապատասխան

կառավարութեանց հետ կնքված համաձայնութիւններով և հատուկ
որենքներով, ոտաբերկրացիների իրավունքները ազատ տեղափո-
խութեան համար Հ. Ս. Խ. Հ. հողի վրա, գրադմունք ընտրելու
առևտրա-արդյունաբերական ձեռնարկութիւններ բանալու և ձեռք
բերելու, շէնքերի և հողամասերի ընչական իրավունքներ վայելելու
կարող են սահմանափակվել Հ. Ս. Խ. Հ. կառավարութեան ձեռն-
հաս կենտրոնական մարմինների վորոշումներով, Արտաքին Գործերի
Ժողովրդական Կոմիտարիատի համաձայնութեամբ:

Ծանոթութեան.—1. Ոտաբերկրյա բաժնետիրական և այլ ընկե-
րութիւնները Հ. Ս. Խ. Հանրապետութեան մեջ իրավական անձի ի-
րավունքներ են ձեռք բերում, Հ. Ս. Խ. Հ. կառավարութեան մասնա-
վոր թույլտվութեամբ:

Ծանոթութեան.—2. Ոտաբերկրյա իրավական անձինք, վոր Խ. Ս.
Հանրապետութիւնների Միութեան սահմաններում գործառնութիւն-
ների թույլտվութեան չունին, դատական պաշտպանութեան իրավունք
են վայելում Հ. Ս. Խ. Հանրապետութեան մեջ այն պահանջների նկատ-
մամբ, վոր առաջ են դալիս Խ. Ս. Հ. Միութեան սահմաններից դուրս
և վերաբերում են նրա սահմաններում ապրող պատասխանատուներ
ին, միմիայն փոխադարձութեան հիմունքներով:

9. Քաղաքացիական Որենսդրքի ներգործութիւնը տարածվում
է Հ. Ս. Խ. ամբողջ Հանրապետութեան վրա:

Հ. Ս. Խ. Հ. Կենտրոնական Գործադիր

Կոմիտեի Նախագահի տեղակալ՝ Ա. Կարինյան

Արդարադատութեան Ժողովրդական

Կոմիտար՝ Դ. Շանվերդյան

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի

Քարտուղար՝ Հ. Տառյան

1923 թ. Փետրվարի 13

Յերևան

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՈՐԵՆՍՊԻՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

I. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Քաղաքացիական իրավունքները պաշտպանվում են որենքով բացի այն դեպքերից, յերբ նրանց գործադրությունը հակասում է իրենց սոցիալ-տնտեսական նպատակին:

2. Քաղաքացիական իրավունքի վերաբերյալ վեճերը լուծվում են դատական կարգով: Դատարանի դիմելու իրավունքից հրաժարվելը անվավեր է:

Ծանոթություն.— Պետական մարմինների միջև ծագած ստացված ծային վեճերը լուծվում են հատուկ վորոշմամբ սահմանված կարգով:

3. Հողային հարաբերությունները, ինչպես և բանվորական ույթ վարձելուն վերաբերյալ և ընտանեկան հարաբերությունները կարգավորվում են մասնավոր որենքներով:

II. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՑԵՆՔԱԿԱՆԵՐԸ (ԱՆՁԵՐԸ)

4. Յերկրի արտադրական ույթերի պարզացման նպատակով Հ. Ս. Խ. Հանրապետությունը քաղաքացիական իրավունահոսթյան (քաղաքացիական իրավունքներ և օտարականություններ ունենալու ունակություն) է տալիս բոլոր այն քաղաքացիներին, վորոնց իրավունքները սահմանափակված չեն դատարանով:

Սեռը, ցեղը, ազգությունը, կրոնական նախասիրտը, ծագումը վոչ մի ազդեցություն չունին քաղաքացիական իրավունակության վրա:

5. Հ. Ս. Խ. Հանրապետության և դաշնակից Խորհրդային Հանրապետությունների յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ազատորեն յերթևեկելու Հ. Ս. Խ. Հ. սահմաններում, ընտրելու որենքով չարգելված զբաղմունքներ և արհեստներ, ձեռք բերելու և ուսարացնելու գույքեր, որենքով մատնանշված սահմանափակումներով գործարքներ կատարելու և պարտավորություններ հանձն առնելու:

կազմակերպելու արդյունաբերական և առեվտրական ձեռնարկու-
թյուններ, համաձայն արդյունաբերական և առևտրական գործունե-
ությունը կարգավորող և աշխատանքի կիրարկությունը պաշտպա-
նող վորոշումներին:

6. Վոչ վոքի կարելի չե զրկել քաղաքացիական իրավունքնե-
րից և վոչ սահմանափակել վորևե մեկի իրավունքները այլ կերպ՝
բայց յեթե որենքով վորոշված դեպքերում և կարգով:

7. Չափահաս դառնալուց հետո միայն վորևե մեկը լիովին
ձեռք ե բերում իր գործողություններով քաղաքացիական իրավունք-
ներ ձեռք բերելու և քաղաքացիական պարտավորություններ հանձն
առնելու ունակություն, (գործունակություն):

Չափահաս համարվում են 18 տարին լրացրածները:

8. Ձեռնհաս հիմնարկությունները կարող են անչափահաս հայ-
ատարներ չափահաս անձանց 1). յեթե նրանք հոգեկան հիվանդու-
թյան կամ տկարամտության հետևանքով անընդունակ են խելացի
կերպով վարելու իրենց գործերը. 2). յեթե նրանք իրենց ծայրա-
հեղ շռայլությամբը վատնում են իրենց տրամադրության տակ յե-
ղած գույքը:

9. 14 տարին լրացրած անչափահասները և վորպես վատնիչ-
ներ խնամակալության տակ առնված անձինք գործարքներ կարող
են կատարել իրենց որինական ներկայացուցիչների (ծնողների կամ
խնամակալների) համաձայնությամբ: Նրանք իրավունք ունին ինք-
նազուխ տնորինելու իրենց ստացած աշխատավարձը և պատաս-
խանատու յեն իրենց գործողություններով ուրիշներին հասցրած
ֆուսաների համար:

10. Անվավեր են այն բոլոր գործարքները, վորոնց նպատակն
ե սահմանափակել իրավունակությունը կամ գործունակությունը:

11. Բնակավայր ե համարվում այն տեղը, ուր մեկը յուր ծա-
ռայության, մշտական զբաղմունքների կամ իր գույքի գտնվելու
հանգամանքովը՝ մշտապես կամ ընդհանրապես ապրում ե:

Անչափահասների կամ խնամակալության տակ գտնվողների
բնակավայր համարվում ե նրանց որինական ներկայացուցիչների
կամ խնամակալների բնակավայրը:

12. Անհայտ բացակայող մեկը կարող է մեռած հայտարարվել, յեթե նրա բացակա ճանաչելու մասին արված հայտարարութիւնից անցել է ամբողջ հինգ տարի: Այսպիսի անձը, վորպես մեռած՝ քաղաքացիական ակտերի մեջ տոմարագրվում է դատական վճռի հիման վրա և մահվան թվականը համարվում է դատավճռի ույժի մեջ մտնելու որը:

Ծանոթութիւն.— Մեկին բացակա կամ մեռած ճանաչելուն վերաբերող կանոնները սահմանվում են հատուկ որենքով:

13. Իրավական անձ համարվում են այն անձանց հավաքակա-
նությունները, հաստատությունները կամ կազմակերպությունները,
վորոնք վորպես այդպիսին՝ կարող են ձեռք բերել զույքի վերա-
բերյալ իրավունք, հանձն առնել պարտավորություններ, կողմ լինել
դատարանում:

14. Իրավական անձը պետք է ունենա իշխանության լիազոր-
ված մարմնի կողմից հաստատված, իսկ հարկ յեղած դեպքերում,
տոմարագրված կանոնադրություն: Որենքով վորոշված այն ընկե-
րությունների տեսակները, վոր տնտեսական նպատակներ ունին, կա-
նոնադրության վոխարեն կարող են ունենալ սահմանված կարգով
տոմարագրված ընկերական պայմանագիր:

Իրավական անձի իրավունակությունը ծագում է կանոնադրու-
թյան հաստատման, իսկ այն դեպքերում, յերբ որենքը պահանջում
է իրավական անձի տոմարագրությունը, այդ տոմարագրության
որից:

15. Իրավական անձի իրավունքներ ունեցող մասնավոր հիմ-
նարկությունները, այն է հիվանդանոցներ, թանգարաններ, գիտա-
կան հաստատություններ, հանրային գրադարաններ և այլն կարող
են հիմնվել իշխանության պատշաճ մարմինների թույլտվությամբ:

16. Իրավական անձինք մասնակցում են քաղաքացիական գոր-
ծառնությունների և գործարքներ են կատարում իրենց մարմին-
ների կամ ներկայացուցիչների միջոցով:

17. Հ. Ս. Ս. Հանրապետության սահմաններում գտնվող ան-
ձինք, իրավական թե ֆիզիքական, արտաքին առևտրին մասնակ-
ցում են միայն պետության միջոցով, հանձին Արտաքին առևտրի
Ժողովրդական կոմիտարիատի: Արտաքին շուկայում ինքնուրույն

կերպով հանդես գալը թույլ ե տրվում միայն որեւորով հասկապես մասնանշված դեպքերում և միայն Արտաքին տոկարի ժողովրդական կոմիտեի անդամների վերահսկողութեան տակ:

18. Պետական իշխանութեան ձեռնհաս մարմինը կարող ե վերջ տալ իրավական անձի գոյութեանը, յետե հա շեղվում ե կանոնադրութեամբ կամ պայմանադրով նախատեսված նպատակից և կամ յետե հրա մարմինների (ընդհանուր ժողով, վարչութեան) գործունեութեանը ուղղված ե ի փաստ պետութեան շահերի:

19. Այն պետական տնտեսական ձեռնարկութեանները և նրանց միութեանները, վոր իրենց սեփական տնտեսական հաշվովն են ապրում և նախահաշվի կարգով պետութեանից դրամական միջոցներ չեն ստանում, քաղաքացիական գործառնութեանների մեջ հանդես են գալիս վորպես ինքնուրույն և պետական գանձարանի հետ չըկապված իրավական անձինք: Նրանց պարտքերի համար պատասխանատու յե միայն նրանց ազատ տնտրիւնութեան տակ գտնվող գույքը, այսինքն այն գույքը՝ վոր համաձայն 21 և 22-րդ հոդվածների, շրջանառութեանից դուրս չե հանված:

Այս կանոնի բացառութեանները հասկապես մասնանշվում են որեւորով:

III ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ (ԳՈՒՅՔԵՐԸ)

20. Քաղաքացիական շրջանառութեանից դուրս հանված գույքը քաղաքացիական իրավունքի առարկա կարող ե լինել այն սահմաններում միայն, վոր դրականապես մասնանշված են որեւորով:

21. Հողը պետութեան սեփականութեանն ե յեվ չի կարող մասնավոր շրջանառութեան առարկա լինել: Հողատիրութեանը թույլ ե տրվում միայն ոգտատիրութեան իրավունքով:

Ծանոթութեան.— Հողի մասնավոր սեփականութեան վերացմամբ, վերանում ե գույքը շարժականի կամ անշարժի բաժանելը:

22. Ազգայնացրած և մուկիցիպալիզացիայի յենթարկված ձեռնարկութեանները, նրանց սարքն ու կարգը, յերկաթուղիները և նրանց զնացքների կազմը, ազգայնացրած հովերը, այլև ազգայնացրած և մուկիցիպալիզացիայի յենթարկված շենքերը դուրս են հանված մասնավոր շրջանառութեանից և չեն կարող ոտարացվել և

գրով գրվել այն մարմինների կողմից, վորոնց տեսչութեանն են հանձնված դրանք, ինչպես և շեն կարող գործածվել պարտապահանջներին բավարարելու համար: Ազգայնացրած և մուսիցիպալիզացիայի յենթարկված ձեռնարկությունները, շենքերն ու նավերը կարող են վարձու տրվել որեւքով սահմանված կարգով:

Ծանոթութիւն. — Այս հոդվածներում մատնանշված գույքի անպետք կամ հնացած մասերի ոտարացումը կարգավորվում և մասնավոր կանոններով:

23. Ձենքը, պայթուցիկ նյութերը, զինվորական սպառազինությունը, սավառնակները, հեռագրի և ռադիո-հեռագրի գույքը, վոչնչացրած արժեթղթերը, որեւքով սահմանվածից ավելի թունդ վոգելից ըմպելիքները և խիստ ազդեցիկ թույնները մասնավոր շրջանառությունից հանված են:

Ծանոթութիւն. — Վորսորդութեան զենք և հրանյութեր ձեռք բերելը կարգավորվում և մասնավոր կանոններով:

24. Վոսկի և արծաթի դրամը և ոտարյերկրյա վալյուտան հանված են ազատ շրջանառությունից և կարող են գործարքների առարկա լինել միայն հատուկ որեւքներով մատնանշված կարգով սահմաններում:

25. Պատկանյալ մաս համարվում է այն իրը, վորի կոչումն է ծառայել գլխավոր առարկային և վոր կապված է վերջինիս հետ, ընդհանուր տնտեսական նպատակով:

Պատկանյալ մասն ունի գլխավոր առարկայի վիճակը, յեթե պայմանագրի կամ որեւքի մեջ դրա հակառակ մասնավոր հիշատակություն չկա:

26. Գործարքները, այսինքն այն գործողությունները, վորոնց նպատակն է քաղաքացիական իրավահարաբերություններ սահմանելը, փոփոխելը կամ կարճելը, կարող են լինել միակողմ և փոխադարձ (պայմանագրներ):

27. Գործարքները կարող են կատարվել բերանացի կամ գրավոր: Գրավոր գործարքներ, լինում են. 1). հասարակ, 2). վավերացրած, 3). նոտարական, այսինքն նոտարիատում կատարված և նոտարական ազտերի մատյանի մեջ մուծված:

28. Գրավոր ձևով կատարված գործարքը պիտի ստորագրված լինի գործարքը կատարած և ում նրա ներկայացուցչի կողմից:

Այն անձը, վոր անդրադիտության, ֆիզիքական ուսկառության կամ հիվանդության պատճառով չի կարող անձամբ ստորագրել, կարող է ուրիշին հանձնարարել յուր փոխարեն ստորագրել գործարքը: Վերջնի ստորագրությունը պետք է վավերացվի պատշաճ կարգով և ցույց տրվի այն պատճառը, վորի հետևանքով գործարք կատարողը չէ կարողացել անձամբ ստորագրել:

29. Յեթե որեւորով պահանջվող ձևը պահված չէ, գործարքը անվավեր է այն դեպքում միայն, յերբ որեւորով ուղղակի մասնա-նշված է ձևը չպահպանելու այդ հետևանքը:

IV Գ Ո Ր Ծ Ա Ր Բ Ն Ե Ր

30. Անվավեր է այն գործարքը, վոր կատարված է որեւորի հակառակ նպատակով կամ ի խույս որինաց. նաև այն գործարքը՝ վոր ակնհայտնի կերպով ուղղված է ի միաս պետության:

31. Անվավեր է այնպիսի անձի ձեռքով կատարված գործարքը, վոր միանգամայն գուրկ է գործունակությունից կամ ժամանակա-վորապես գտնվում է այնպիսի վիճակի մեջ, վոր չի կարող բնա-նել իր արարքի նշանակությունը:

32. Այն անձը, վոր գործարք կատարել է խաբերայության, սպառ-նալիքի, բռնության ազդեցության տակ կամ իբր հետևանք յուր ներկայացուցչի՝ պայմանադիր կողմի հետ չարամտությամբ կայա-ցրած համաձայնության և կամ եական նշանակություն ունեցող մոլորության մեջ գտնվելով, կարող է դատարանով պահանջել, վոր գործարքը անվավեր ճանաչվի ամբողջությամբ կամ մասնակի:

33. Յեթե մեկը, ծայրահեղ կարիքից ստիպված, իրեն համար ակնհայտնի վոչ ձեռնտու գործարք է կատարել, դատարանը սու-ժող կողմի կամ պատշաճ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների պահանջմամբ՝ կարող է կամ գործարքը անվավեր ճանաչել կամ դադարեցնել նրա ուժը պապագայի վերա-բերմամբ:

34. Անվավեր է այն գործարքը, վոր կատարված է կողմերի համաձայնությամբ առյերևույթ և առանց նրանից իրավական հե-տևանքներ առաջացնելու դիտավորության:

35. Յեթե կեղծ գործարքը կատարված է մի այլ գործարք քողարկելու նպատակով, այդ դեպքում կիրարկվում են իսկապես նկատի ունեցված գործարքի հիմունքները:

36. Անվավեր ճանաչված գործարքը անվավեր է համարվում իր կատարման որից:

37. Գործարքի անվավեր մասերը չեն շոշափում նրա մնացյալ մասերը, վոր չափով վոր կարելի չե յենթադրել թե գործարքը կատարված կը լիներ և առանց այն անվավեր մասերի:

38. Գործունակ անձերը կարող են գործարքներ կատարել նաև իրենց ընտրած ներկայացուցիչների միջոցով, բացի այն դեպքերից՝ յերբ այդ արգելված է որենքով:

39. Փոխանորդյալի անունից ներկայացուցչի իրեն արված լիազորության սահմաններում կատարած գործարքները պարտավորական ույժ ունին փոխանորդյալի համար և նրա համար անմիջապես սուղացնում են իրավունքներ և պարտավորություններ:

40. Ներկայացուցիչը իր փոխանորդյալի անունից չի կարող գործարքներ կատարել վոչ յուր (ներկայացուցչի) և վոչ մի յերրորդ անձի վերաբերմամբ, վորի ներկայացուցիչն է ինքը միաժամանակ:

41. Առկախ պայմանով կատարված է համարվում այն գործարքը, վորով վորոշված իրավունքներն ու պարտավորությունները պիտի իրագործվին, յեթե այն պայմանը իրականանա ա:

Յեղծիչ պայմանով կատարված է համարվում այն գործարքը՝ վորով վորոշված իրավունքներն ու պարտավորությունները պիտի դադարեն այն պայմանի իրականացման փամանակից:

42. Պայմանաբար պարտավորվածը պետք չե իր գործողություններովը ստեղծի իրերի մի այնպիսի դրություն, վոր վատթարացնե կամ վոչնչացնե պայմանից կախումն ունեցող իրավունքը: Հա կառակ պարագային պայմանը իրականանանալուց հետո նա պարտավոր եհատուցանել յուր պատճառած վնասները:

43. Յեթե պայմանի իրականացմանը անբարեխղճությամբ արգելք է հանդիսանում այն կողմը՝ վորի համար պայմանի չիրականանումը ձեռնառու չէ, պայմանը համարվում է իրականացած:

Յերբ պայմանի իրականացմանը անբարեխղճությամբ նպաստում եւ այն կողմը, վորի համար պայմանի իրականացումը ձեռնառու չե, պայմանը համարվում ե չիրականացած:

Կ. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԻ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆԸ

44. Քաղաքացիական դատ սկսելու իրավունքը կորչում ե յերեք տարի լրանալուց հետո (քաղաքացիական դատի վաղեմություն), յեթե որեւորվ վաղեմության այլ պայմանաժամ չե սահմանված:

45. Քաղաքացիական դատի վաղեմության պայմանաժամը սկսվում ե քաղաքացիական դատ սկսելու իրավունքի ծագման օրից:

Այն պարտավորությունների նկատմամբ, վոր պիտի կատարվեն պարտատիրոջ պահանջմամբ, վաղեմության պայմանաժամը սկսվում ե պարտավորության ծագման օրից:

46. Յեթե գլխավոր պահանջի վերաբերությամբ քաղաքացիական դատը վոչնչանում ե վաղեմության հետևանքով, վոչնչանում ե նաե դատը՝ հարակից պահանջների վերաբերմամբ:

47. Յեթե պարտապանը կատարում ե իր պարտավորությունը վաղեմության պայմանաժամը լրանալուց հետո, նա իրավունք չունի յետ պահանջելու իր վճարածը, նույն իսկ յեթե վճարումի պահուն նա անգիտացել ե վաղեմության պայմանաժամի լրացած լինելը:

48. Քաղաքացիական դատի վաղեմության պայմանաժամի ընթացքը կանգ ե առնում՝

1) յեթե գանգատավորը անհաղթահարելի պատճառներով զրկված ե դատ սկսելու հնարավորությունից, յեթե միայն այդ արգելքները յառաջ են յեկած վաղեմության պայմանաժամի վերջին կիսամյակի ընթացքում:

2) պարտավորությունների վերաբերմամբ հայտարարված մորատորիումի հետևանքով:

3). Կարմիր բանակի ե նախադատորմի կազմի համար, նրանց պատերազմական դրության մեջ գտնված ժամանակաշրջանում:

Ծանոթություն.— Վաղեմության պայմանաժամի ընթացքը կասե-

ցնոյ հանդամանքներէ վերջանալով, պայմանաժամի ընթացքը շարունակվում է եւ, յետեւ մնացած ժամանակը վեց ամսից պակաս է, լրացվում է մինչեւ վեց ամիս:

49. Դատարանը կարող է ամեն անգամ յերկարացնել վաղեմության պայմանաժամը, յետեւ հիմնավոր ճանաչեալն այն պատճառները, վորոնց հետեանքով այդ պայմանաժամը բաց է թողնված:

50. Քաղաքացիական դատի վաղեմությունը ընդհատվում է դատի սկսվելովը, այլեւ յերբ պարտապանը կատարում է այնպիսի գործողություններ, վոր վկայում են թե նա ճանաչում է իր պարտքը:

51. Ընդհատումից հետո քաղաքացիական դատի վաղեմությունը վերսկսվում է, բայց դրանից առաջ անցած ժամանակը հաշվի չի առնվում նոր պայմանաժամի մեջ:

ԸՆԶԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. ՍԵՓԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

52. Սեփականությունը լինում է՝ ա) պետական (ազգայնացրած և մոնիցիպալիզացիայի չենթարկված), բ) կոոպերատիվ, գ) մասնավոր:

53. Հողը, հանքերը, անտառները, ջրերը, ընդհանուրի ոգտագործման ծառայող յերկաթուղիները, գնացքների կազմը և սավառնակները կարող են լինել բացառապես պետութայն սեփականություն:

54. Մասնավոր սեփականութայն առարկա կարող են լինել մոնիցիպալիզացիայի չենթարկված շենքերը, առևտրական ձեռնարկությունները, մասնավոր որենքներով սահմանված քանակից վոչ ավելի վարձու բանվորներ ունեցող արդյունաբերական ձեռնարկությունները, արտադրութայն գործիքները և միջոցները, դրամն ու արժեթղթերն և այլ արժեքներ, վորոնց թվում վոակի և արժաթի դրամ և ոտարյերկրյա վալյուտա, տնային և անձնական՝ գործածութայն և անտեսութայն առարկաները, այն ապրանքները վորոնց վաճառումը արգելված չե որենքով և այլ գույքեր, վոր դուրս չեն հանված մասնավոր շրջանառությունից:

55. Այն ձեռնարկությունները, վորոնց վարձու բանվորների թիվը որենքով սահմանվածից ավելի յե, հեռագիր և ռադիո—հեռագիրը, նաե պետական նշանակություն ունեցող այլ կառուցվածքները կարող են մասնավոր սեփականութայն առարկա լինել միմիայն կառավարությունից ստացվող կոնցեսիայի հիման վրա:

56. Ձենքը և դինվորական սպառազինությունը, պալթուցիկ նյութերը, վոգելից նյութերը (սահմանված աստիճանից ավելի թոււնդ) և խիստ ազդեցիկ թույնները կարող են լինել մասնավոր տիրապետութայն տակ, իշխանութայն պատշաճ մարմինների թույլտվությամբ միայն:

57. Ըստ որինի գոյություն ունեցող կոոպերատիվ կազմակերպությունները կարող են տիրապետել տմեն տեսակ աուլուի,

մասնավոր անձանց նման: Այն արդյունաբերական ձեռնարկու-
թյունները, վոր ստեղծում և ձեռք են բերում կոտայերատիվ կազ-
մակերպությունները կոտայերացիայի համապատասխան տեսակնե-
րին վերաբերյալ որենքներով սահմանված կարգով, կարող են հիշ-
յալ կազմակերպությունների սեփականությունը լինել, անկախ
ձեռնարկության մեջ յեղող բանվորների քանակից:

58. Սեփականատիրոջը, որենքով վորոշված սահմաններում,
պատկանում է գույքի տիրապետության, ոգտագործման և տնո-
րինության իրավունքը:

Ծանոթություն.— Պետական գույքի տնորինությունը, վոր իրա-
գործվում և պետական մարմինների ձեռքով, վորոնց թվում նաև ի-
րենց տնտեսական հաշվովը ապրողները, սահմանափակված և սույն
Որենագրքի 21-րդ հոդվածի կանոններով և համապատասխան մար-
մինների կանոնադրությամբ:

59. Սեփականատերն իրավունք ունի իր գույքը դատարանի
միջոցով յետ պահանջելու ուրիշի ապորինի տիրապետությունից և
անբարեխիղճ տիրապետողից պահանջելու՝ վերադարձնելը կամ հո-
տուցումը այն բոլոր յեկամուտների, վոր նա ստացել է կամ ալի-
տի ստանար նրա տիրապետության ամբողջ ժամանակամիջոցում:
Իսկ բարեխիղճ տիրապետողից՝ այն բոլոր յեկամուտները, վոր նա
ստացել է և պետք է ստանար այն թվականից սկսած, յերբ նա
ստացել է ծանուցագիր՝ սեփականատիրոջ դատ սկսած լինելու մա-
սին կամ այլ ճանապարհով իմացել և վոր յուր տիրապետությու-
նը անիրավ է: Տիրապետողը, յուր կարգին, իրավունք ունի սեփա-
կանատիրոջից պահանջելու այն անհրաժեշտ ծախսերը, վոր նա ա-
րել է գույքի վրա այն ժամանակից սկսած, յերբ սեփականատիրոջն
են հասնում գույքի յեկամուտները:

Սեփականատերն իրավունք ունի պահանջելու վերացումը իր
իրավունքի ամեն տեսակ խախտումների, նույնիսկ յեթե այդ խախ-
տումները միացած չլինին իր տիրապետությունից զրկվելու հետ:

Ծանոթություն.— Նախկին սեփականատերերը, վորոնց գույքը
գրավված է հեղափոխական իրավունքի հիման վրա կամ առհասարակ
տնցել և աշխատավորների տիրապետության տակ մինչև 22 հուլիսի
1922 թ. իրավունք չունին պահանջելու այդ գույքի վերադարձումը:

60. Սեփականատեր իրավունք ունի յետ պահանջելու իր

գույքը այն անձից, վոր բարեխղճաբար ձեռք է բերել վոչ անմիջապես սեփականատիրոջից (հոդ. 59), միայն այն դեպքում՝ յերբ ինքը (սեփականատերը) կորցրել է այդ գույքը կամ յեթե այն հափշտակված է յեղել նրանից: Պետական հիմնարկություններն ու ձեռնարկությունները ամեն մի ձեռք բերողից կարող են յետ պահանջել իրենց պատկանող գույքը, վոր վորևե յեղանակով ապուրիստաբար ռաբարացրած է:

Ծանոթութիւն. — Ձեռք բերողը բարեխիղճ է համարվում, յեթե նա չգիտեր կամ պարտավոր չէր իմանալ, վոր այն անձը, վորից ինքը վորեվ գույք ձեռք է բերել, իրավունք չուներ այն ռաբարացնելու:

61. Սեփականության իրավունքը կարող է պատկանել յերկու կամ մի քանի անձերի միասին, բաժիններով (ընդհանուր սեփականություն):

62. Ընդհանուր սեփականության տիրապետությունը, ոգտագործումն ու տնորինությունը տեղի պիտի ունենա բոլոր բաժնեկիցների ընդհանուր համաձայնությամբը, իսկ տարաձայնության պարագային՝ ձայների մեծամասնությամբ:

63. Ընդհանուր սեփականության յուրաքանչյուր բաժնեկիցը յուր բաժնի չափով պարտավոր է մասնակցել ընդհանուր գույքի վերաբերյալ ամեն տեսակ վճարումների և տուրքերի հատուցմանը, ինչպես նաև ընդհանուր գույքը կառավարելու և պահպանելու ծախքերին:

64. Ընդհանուր սեփականության բաժնեկիցները նախապատվության իրավունք ունին գնելու, յերբ բաժնեկիցներից վորևե մեկը վաճառելու լինի յուր բաժինը կողմնակի անձի, բացի այն դեպքից՝ յերբ այդ բաժինը վաճառվում է աճուրդով:

65. Յուրաքանչյուր սեփականատեր իրավունք ունի պահանջելու, վոր յուր բաժինը անջատվի ընդհանուր գույքից, վորչափ վոր այդ չի հակասում որեւքին կամ պայմանագրին: Յեթե անջատման յեղանակի մասին համաձայնություն չկայանա, գույքը նույնությամբ բաժանվում է դատարանի վորոշմամբ, վորչափ վոր այդ հնարավոր է առանց անհամաչափ վնաս հասցնելու գույքի տնտեսական նպատակին: Կակառակ պարագային, անջատվող սեփականատերը ստանում է գրտմական հատուցում:

66. Ինչքի սեփականութեան իրավունքը փոխանցվում է տա-
րացնողի և ձեռք բերողի միջև կնքված պայմանագրի հիման վրա:
Ձեռք բերողի սեփականութեան իրավունքը, հատկապես վերոշված
առարկաների վերաբերմամբ՝ սկսվում է պայմանագիրը կնքելու
պահից, իսկ տեսակավոր (թիվը, կշիռը և չափը) առարկաների վե-
րաբերութեամբ՝ նրանց հանձնումի պահից:

67. Հանձնում համարվում է առարկաները, այլև ապրանքների
անորինական փաստաթղթերը (բեռնագիր, կոնոսամենս, պահես-
տագիր և այլն) ձեռք բերողին տալը կամ նրա պատվերով փոստին
հանձնելը ուղարկելու համար, վորչափ վոր պայմանագրից մի այլ
իրավունք չի բխում. կամ ձեռք բերողի կարգադրութեամբ առանց
տեղը հասցնելու պարտավորութեան՝ ոտարացրած իրերը բեռնա-
կրին հանձնելը ուղարկելու համար, կամ ձեռք բերողի պատվերով
ուղարկելու համար առարկաների փոստին հանձնելը:

68. Այն դույքը, վորի սեփականատերը անհայտ է (անտե-
րգույք) դառնում է պետութեան սեփականութեան, հասուկ որեւ-
քով սահմանված կարգով:

69. Սեփականատերերի դույքը բռնադրավելը թույլ է տրվում
մասնավոր անձանց և ընկերութեաների դույքը բռնադրավելու և
կոնֆիսկացիայի յենթարկելու վերաբերյալ դեկրետով սահմանված
կարգով միայն, հասուցանելով սեփականատիրոջը բռնադրաված
դույքի արժեքը՝ գրավման ժամանակի շուկայի միջին գներով:

70. Սեփականատերերի դույքը կոնֆիսկացիայի յենթարկելը
թույլ է տրվում միայն վորպես պատիժ, որեւքով սահմանված
գեպքերում և կարգով:

II. ԿԱՌՈՒՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

71. Շենքեր կառուցանելու համար քաղաքային հողաբաժիններ
հատկացնելու վերաբերյալ պայմանագրները կնքում են կամուռա-
բաժինները, կոտլերատիվ միութեանների կամ այլ իրավակաւ
անձերի, ինչպես նաև առանձին քաղաքացիների հետ, քարաշեննե-
րի համար՝ մինչև 19 և մնացյալների համար՝ մինչև 20 տարի ժա-
մանակով:

Ծանոթութեան. — Կառուցման իրավունքի վերաբերյալ պայմա-
նագիրը կարող է տարածվել այնպիսի հողաբաժնի վրա, վոր եթե

հատկապես շենքի կառուցման համար չե հատկացված, բայց տնտեսապես ծառայում է այդ շենքին:

72. Կառուցման իրավունքի վերաբերյալ պայմանագիրը պետք է կնքվի նոտարական կարգով, հակառակ պարագային անվավեր է:

73. Կառուցման իրավունքի վերաբերյալ պայմանագրի մեջ անպայման ցույց պետք է տրվի՝ ա) պայմանագիր կողմերի անունը, բ) պայմանագրի ներգործություն պայմանաժամը, գ) կառուցման համար տրվող հողաբաժնի ճշտությունները, վորոշումը, դ) վարձի քանակը վոսկի ուղղվիներով և վճարման պայմանաժամերը, ե) բնույթը և ծավալը այն շենքերի, վոր պարտավոր է կառուցանել պայմանագիր կողմը, զ) կառուցման ձեռնարկելու թրվականը, է) շենքը ավարտելու պայմանաժամը, ը) շենքերի կանոնավոր պահպանման պայմանները, թ) շենքերը ապահովագրելու և ավերման դեպքում վերանորոգելու պայմանները, ժ) տուգանքը, վոր պիտի վճարե կառուցանողը, ժամանակի և պայմանագրի այլ կետերի վերաբերյալ պայմանագրանցություն պարագային:

Ծանոթություն.— 1. Շենքի կառուցման ձեռնարկելու պայմանաժամը սահմանվում է պայմանագիրը կնքելու որից վոչ ավելի քան մի տարի:

Ծանոթություն.— 2. Վարձքի հավելումը կարող է սահմանվել պայմանագրով, վոչ հաճախ քան հինգ տարին միանգամ և այն՝ յուրաքանչյուր անգամ պայմանագրով նախատեսված քանակով:

74. Շենքեր կառուցանելիս, ինչպես նաև նրանց ողտադործման ժամանակվա ընթացքում, կառուցանողը պարտավոր է պահպանել սահմանված շինարարական, այլ և սանիտարական և հրդեհի դեմ նախադրուշական կանոնները:

75. Կառուցանողը պարտավոր է հրդեհից ապահովագրել տալիքին հանձնված հողաբաժնում գտնվող բոլոր շենքերը, ապահովագրություն ամբողջ գումարի չափով:

76. Կառուցանողը պարտավոր է վճարել կառուցման իրավունքի վրա ընկնող բոլոր համապետական և տեղական հարկերն ու տուրքերը: Բնակություն հատկացրած շենքերը ազատվում են համապետական և տեղական հարկերից և տուրքերից, շենքերի կառուցման որից յերեք տարվա ընթացքում:

77. Շենքերը կառուցանելու և նրանց տնտեսական կարիքները հոգալու համար կառուցանողի հողաբաժնում յեղած շինվածանյութերից ոգտվելու իրավունքը պատկանում է կառուցանողին, պայմանագրով մատնանշված սահմաններում, վորի համար կառուցանողին իրավունք է վերապահվում հիշյալ նյութեղենը պատրաստելու աշխատանքները կատարել:

78. Կառուցանողն իրավունք ունի ոգտվելու հողաբաժնում յեղած շրից, այլ և այդ հողաբաժնի սահմաններում ջրհորներ և աղբյուրներ շինելու:

79. Կառուցման իրավունքը կարելի յե ոտարացնել և գրավ դնել: Կառուցման իրավունքը ոտարացնելու և գրավ դնելու վերաբերյալ պայմանագրները պետք է կնքվեն նոտարական կարգով և ապա տոմարագրվեն պատշաճ կոմունալ բաժնում, հակառակ պարագային անվավեր են:

80. Յեթե կառուցանողը չհատուցանե պայմանագրով իրանից ավելի քան մի տարվա համար պահանջվող վճարումները, կամ խախտե տուգանքով պայմանավորված այլ պարտավորությունները, կոմունալ բաժինը կարող է դատական կարգով յուր պահանջը տարածել կառուցման իսկ իրավունքի վրա և այդ պահանջը գանձել կառուցման իրավունքը աճուրդով վաճառել տալով:

81. Յուր պահանջը կառուցման իրավունքի վրա դարձնելու պարագային, կոմունալ բաժինը մյուս պարտատերերի նկատմամբ՝ նախապատվության իրավունք ունի բավարարություն ստանալու:

82. Յեթե կառուցման իրավունքի աճուրդով վաճառումը տեղի չունենա, կառուցման իրավունքը անցնում է կոմունալ բաժնին:

83. Յեթե համաձայն 82-րդ հոդվածի կառուցման իրավունքը անցնում է կոմունալ բաժնին, այլ և յերբ պայմանագրի պայմանաժամը լրանալու հետևանքով դադարում է կառուցման իրավունքը, կառուցանողը պարտավոր է բոլոր շենքերը բարեկարգ վիճակի մեջ հանձնել կոմունալ բաժնին, վոր կառուցանողին վճարում է այդ շենքերը հանձնելու պահուն ունեցած արժեքը, զեղջելով կոմունալ բաժնին հասանելիք պարտքերը: Շենքերի արժեքը վորոշում է գնահատիչ հանձնաժողովը, վորը բնականում է կոմունալ

բաժնի և բանվորա-գյուղացիական տեսչության ներկայացուցիչներին: Կառուցանողին վերապահվում է իրավունք՝ բողոքելու ժողովրդական դատարանին, հանձնաժողովի գնահատությանը համաձայն չլինելու պարագային:

84. 71-83 հոդվածներում հիշատակված հիմունքներով չվերջացրած կամ ավերված շենքերը կարող են արվել վերջացնելու կամ վերականգնելու համար, յեթե անհրաժեշտ վերականգնման կամ ավարտման արժեքը համապատասխան կոմունալ բաժնի վորոշմամբ՝ պակաս չե ամբողջ շենքի արժեքի 30 տոկոսից:

III. Գ Ո Ւ Յ Ք Ի Գ Ր Ա Վ Ը

85. Պարտատերը (գրավառու) դրավի զուլությամբ մյուս պարտատերերի նկատմամբ նախապատվության իրավունք ունի բավարարություն ստանալու գրավ դրված գույքի արժեքից, յեթե պարտապանը չկատարե գրավականով ապահովված պահանջը:

86. Գրավատու կարող է լինել թե ինքը պարտապանը և թե մի յերրորդ անձ: Գրավատուն պետք է լինի գրավ դրված գույքի օնփականատերը: Ցեթե նա օւրիշի գույքն է գրավ դրել, պիտի կիրարկվին սույն Որենսդրքի 59 և 60-րդ հոդվածները, ըստ պատշաճի:

87. Գրավի յենթակա կարող է լինել ամեն մի գույք, վոր շրջանառությունից դուրս հանված չե, վորոնց թվում նաե պարտքի պահանջներ և կառուցման իրավունք:

Ծանոթութլւն.-- Որենքով մատնանշված դեպքերում, գրավի աւարկա կարող են լինել վոսկի և ուրծաթի գրամը և ոտաբլորկրյա վալյուտան:

88. Գրավականով ապահովվում է միայն իրական պահանջը:

89. Գրավը հետևանքը կարող է լինել կամ պայմանադրի կամ որենքի հատուկ ցուցմունքի:

90. Գրավի պայմանագիրը պիտի կնքվի գրավոր: Շենքի և կառուցման իրավունքի գրավը պետք է տեղի ունենա նոտարական կարգով և ապա տոմարագրվի պատշաճ կոմունալ բաժնում, հաւանակ պարագային անվավեր է: Տոմարագրությունից հետո գրավառուին տրվում է գրավաթուղթ:

91. Գրավի պայմանագրի և գրավաթղթի մեջ պիտի ցույց տրված լինին՝ պարտապանի և պարտատիրոջ անունն ու բնակավայրը, գրավ դրված գույքի նկարագրությունը, գնահատությունն և տեղը, գրավականով ապահովված պահանջի ելությունն ու չափը, կատարման պայմանաժամը. բացի սրանցից՝ կարող են ներմուծվել նաև որեւորով չարդելված այլ պայմաններ:

92. Գրավ դրված գույքը, բացի շենքերից և կառուցման իրավունքից, հանձնվում և գրավառուին: Կողմերի համաձայնությամբ գույքը կարելի չե թողնել պարտապանի մոտ, պարտատիրոջ փականքի և կնիքի տակ, յեթե որեւորով կամ վարկային հիմնարկությունների կանոններով այլ կարգ չե սահմանված: Հատկապես վերոշված առարկան կարելի չե թողնել գրավատուի տիրապետության տակ, վրան գրավ դրված լինելը վկայող նշաններ անելով:

93. Գրավի իրավունքը, 92-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, տեսակավոր առարկաների վերաբերությամբ սկսվում և հանձնելու կամ կնքելու, իսկ հատկապես վերոշված առարկաների վերաբերմամբ՝ պայմանագիրը կնքելու վայրկյանից:

94. Մի գույք կարելի չե իբրև գրավական տալ մի քանի պարտատիրոջ, բայց գրավատուն պարտական և ամեն մի նոր գրավառուին տեղեկացնել գրավ գրվելու նախորդ դեպքերի մասին:

Շենքերի և կառուցման իրավունքի կրկնագրավը տեղի պետք և ունենա 90-րդ հոդվածով մատնանշված կարգով: Այլ գույքերի կրկնագրավը օահմանվում և գրավոր պայմանագրով և նախորդ գրավառուին արված գրավոր հրամանով այն մասին՝ վոր բավարարվելուց հետո գրավ դրված գույքը հանձնե նոր գրավառուին:

95. Գրավականը ապահովում և պահանջը այն չափով, ինչ չափ վոր ունենա պահանջը փաստորեն բավարարվելու պահուն, մասնավորապես տակոսները, բավարարումը հետաձգելու հետևանքով պատճառած վնասների հատուցումը, հարկ յեղած դեպքերում՝ ասուգանքը, այլ և պահանջը դանձելու ամթիվ յեղած ծախսերի հատուցումը:

96. Գրավատուն իրավունք չունի ոգտագործելու գրավ դրված գույքը կամ նրա արդյունքները, յեթե այլ բան չե սահմանված որեւորով կամ պայմանագրով:

97. Գրավատուն պարտավոր է գրավ դրված գույքը պահպանել ինչպես հարկն է, և ապահովագրել այն: Յեթե գույքը հանձնված է գրավառուին, վերջինս է պատասխանատու նրա պահպանության համար վերջինիս պարտականությունն. և նաև ապահովագրել տալ գույքը, գրավատուի հաշվին:

98. Յեթե գրավառուն կորցնե կամ հափշտակել տա գրավի տուարկան, իրավունք ունի պահանջելու այն՝ ամեն մի տեղ դարձածից, վորոնց թվում նաև սեփականատիրոջ: Յեթե գրավ դրված գույքը թողնված է պարտապանի մոտ (հոդ. 92), գրավառուն իրավունք ունի պահանջելու այն՝ ամեն մի անբարեխիղճ ձեռք բերողից, իսկ պետական մարմինը՝ ամեն մի ձեռք բերողից:

Ծանոթություն.— Գրավի նշաններ ունեցող գույք ձեռք բերողը համարվում է անբարեխիղճ:

99. Յեթե գրավառուները մի քանի հոգի յեն (հոդ. 94), այդ պարագային յուրաքանչյուր հաջորդ գրավառուն բավարարություն է ստանում գրավ դրված գույքից, նախորդի լիովին բավարարություն ստանալուց հետո միայն (ավագություն):

100. Յեթե աճուրդով վաճառելուց գոյացած գումարը պահանջը բավարարելու հերիք չանի, այդ դեպքում գրավառուն իրավունք ունի պակասող գումարը ստանալու պարտապանի այլ գույքից, յեթե որենքով կամ պայմանագրով այլ բան չէ սահմանված: Այս դեպքում, գրավի իրավունքը ինքն ըստինքյան բավարարելու նախապատվության հիմք չի ծառայում մյուս պարտատերերի նրկատմամբ:

101. Յեթե պարտապանի մնացյալ գույքը չբավե հատուցանելու նրա պետական տուրքերի և հարկերի և բանվորներին ու ծառայողներին վճարելիք աշխատավարձի ապառիկները, այդ պարագային հիշյալ ապառիկները պիտի դանձվեն նրան պատկանող գրավ դրված գույքից, գրավառուի պահանջի հանդեպ նախապատվության կարգով:

102. Յեթե գրավ դրված գույքը վոչնչանա աղետի հետևանքով, գրավառուն նախապատվության իրավունք ունի բավարարություն ստանալու ապահովագրության գումարից:

103. Գրավականով ապահովված պահանջը ուրիշին փոխանցելու պարտադրյալն՝ նոր պարտատիրոջն է անցնում նաև գրավի իրավունքը: Շենքերի և կառուցման իրավունքի գրավով ապահովված պահանջի փոխանցումը կատարվում է գրավականի հանձնումով, վորի վրա պետք է արվի փոխանցման մակագրություն և մուծվի նոտարական ակտերի մատյանի և կոմունալ բաժնի տոմարի մեջ: Մնացյալ դեպքերում, պահանջը փոխանցվում է գրավի պայմանագրի վրա մակագրություն անելով, այլ և՛ գրավ դրված գույքը հանձնելով, յերբ այդ հանձնումը անհրաժեշտ է վորպեսզի գրավի իրավունքը սկսվի (92, 93 հոդ.):

Պարտապանին և գրավատուին պետք է տեղեկություն տրվի գրավի իրավունքի փոխանցման մասին:

104. Գրավը դադարում է՝ 1) յերբ դադարում է գրավով ապահովված պահանջը, 2) յերբ գրավ դրված գույքը վաճառվում է աճառողով:

105. Շենքերի և կառուցման իրավունքի գրավի դադարման մասին, շահագրգռված անձի պահանջմամբ, հիշատակություն է արվում նոտարական ակտերի մատյանում և կոմունալ բաժնի տոմարում:

Յերբ գրավը դադարում է գրավականով ապահովված պահանջի դադարման հետևանքով, գրավատուն յուր մոտ գրավ դրված գույքը պարտավոր է վերադարձնել գրավատուին կամ հանձնել հաջորդ գրավատուին՝ ըստ ուվագրության (հոդ. 94):

ՊԱՐՏԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

106. Պարտավորումները բղիթում են պայմանագրերից և որենքով մասնանշված այլ հիմունքներից, մասնավորապես անհիմն շահառության և ուրիշին փաստ հասցնելու հետևանքով:

107. Պարտավորման գործությամբ մեկը (պարտատերը) իրավունք ունի պահանջելու մի ուրիշից (պարտապանից) կատարել վորոշ գործողություն, մասնավորապես առարկաներ փոխանցել կամ դրամ վճարել և կամ ձեռնպահ մնալ վորեւ գործողությունից:

108. Յեթե պարտավորման առարկան վորոշված է միայն անասկավորության հատկանիշներով, և որենքով կամ պայմանագրով ընտրության իրավունք չէ վերապահված կողմերից մեկին կամ մի յերրորդ անձի, պարտապանը պարտավոր է հայթայթել միջինից վոչ պակաս հատկություն ունեցող առարկա:

Յեթե պարտավորման առարկան վորոշված է վորպես յերկընարելի, ընտրության իրավունքը պատկանում է պարտապանին, որենքի կամ պայմանագրի մեջ այլ ցուցմունքներ չլինելու պարտադրյին:

109. Պարտատերն իրավունք ունի մասնակի կատարումն չընդունելու, յեթե որենքով կամ պայմանագրով այլ բան չէ նախատեսված:

110. Յեթե որենքի կամ պայմանագրի համաձայն պարտքի վրա պիտի բարդվեն տոկոսներ, վորոնց չափը ցույց տրված չէ, տոկոսները (որինական տոկոսները) բարդվում են վոսկի ռուբլիներով արտահայտված պարտքի գումարի տարեկան 6% չափով, պաշտոնական կուրսով:

111. Կատարումը տեղի պետք է ունենա որենքով կամ պայմանագրով վորոշված ժամանակամիջոցում: Յեթե կատարման պայմանաժամը նշանակված չէ, կամ կախված է պարտատիրոջ պահանջից, այդ դեպքում պարտատերն իրավունք ունի կատարումը

պահանջելու, իսկ պարտապանն իրավունք ունի այն կատարելու անհապաղ: Այս պարտագային, պարտատիրոջ կողմից պահանջը ներկայացվելուց հետո, պարտապանին 7 օր պայմանաժամե շնորհվում, յեթե օրենքով այլ բան չէ սահմանված:

112. Պարտապանն իրավունք ունի իր պարտավորությունը կատարելու նաև պայմանաժամից առաջ, յեթե այդ չի հակասում պայմանագրի իմաստին: Սակայն մինչև պայմանաժամի լրանալը, մնացած ժամանակի համար տոկոսներ դուրս գալու (գեղջ) իրավունքը պարտապանին պատկանում է միմիայն օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում:

113. Յեթե կատարման վայրը վորոշված չէ օրենքով կամ պայմանագրով և հայտնի չի լինում պարտավորման ելությունից, այդ դեպքում կատարումը տեղի պիտի ունենա.

ա) այն պարտավորումների վերաբերմամբ, վորոնց առարկան է շենքերի կամ հողաբաժինների իրավունքի փոխանցումը՝ այդ շենքերի կամ հողաբաժինների գտնված տեղում.

բ) այն գործարքների նկատմամբ վոր պարտապանի ձեռնարկության գործունեությանն է վերաբերում, ձեռնարկության գրանված տեղում.

գ) դրամական պարտավորումների նկատմամբ, այնտեղ՝ ուր պարտատերը բնակելիս է յեղել պարտավորման ծագման պահուն. բայց յեթե պարտատերը պարտավորման կատարման պահուն փոխած լինի յուր բնակավայրը և ժամանակին այդ մասին տեղեկություն տված լինի պարտապանին, վերջինս պարտավոր է կատարել պարտատիրոջ նոր բնակավայրում, իսկ կատարման տեղի փոփոխության հետ կապված բոլոր ծախքերը պարտավոր է հոգալ պարտատերը:

դ) մնացյալ պարտավորումների նկատմամբ՝ պարտավորման ծագման պահուն պարտապանի բնակած տեղում:

114. Յեթե պարտատերը բացակա լինի, խուսափի կատարումը ընդունելուց կամ այլ կերպ բաց թողնե պայմանաժամը, այլ և յեթե նա գործունակ չլինի կամ բացակա լինի նրաներկայացուցիչը, վոր լիազորված և համաձայն է ընդունելու կատարումը, այդ դեպքում պարտապանը կարող է իր վճարելիքը իբր ավանդ հանձնել կատարմանին, վոր այդ մասին պարտատիրոջը տեղեկացնում է ծանուցագրով կամ հրապարակային հայտարարությամբ:

Ծանոթութիւն.— Դատարանին ավանդ հանձնելու կարգը վորոշ-
վում է առանձին կանոնադրութեամբ:

115. Համապարտ պատասխանատվութեան տեղի չե ունենում,
յեթե այդ նախատեսված է պայմանադրով կամ սահմանված է
որենքով:

Համապարտութեան դեպքում, պարտատերը իրավունք ունի
թե բոլոր պարտապաններից միասին և թե յուրաքանչյուրիցն ա-
ռանձին պահանջելու թե ամբողջ պարտքի և թե նրա մի մասի կա-
տարումը: Յեթե պարտատերը չհաջողի ստանալ մի պարտապանից,
նա կարող է չստացածը ամբողջապես պահանջել մնացյալ պար-
տապաններից:

Համապարտ պարտավորութեանը կատարող պարտապանը իրա-
վունք ունի հետագարձ պահանջ ներկայացնելու մնացյալ պարտապան-
ներից, պարտքի հավասար բաժիններով, յեթե այլ բան չե սահման-
ված որենքով կամ պայմանադրով: Համապարտներից մեկի չվճարածը
հավասար բաժիններով ընկնում է բոլոր մնացյալների վրա:

116. Յեթե միեւնույն պարտավորման մասնակից են մի քանի
պարտատեր կամ մի քանի պարտապան, այդ դեպքում, յեթե պար-
տավորման առարկան անբաժանելի չե, պարտապանները համարվում
են համապարտներ, իսկ պարտատերերը՝ համապահանջ պարտատեր,
վորոնցից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջը ներկայացնե-
լու ամբողջովին: Յեթե պարտավորման առարկան բաժանելի չե,
յուրաքանչյուր պարտապան պարտավոր է կատարել, իսկ յուրա-
քանչյուր պարտատեր իրավունք ունի պահանջելու կատարումը
հավասար բաժիններով, յեթե այլ բան չե սահմանված որենքով
կամ պայմանադրով:

117. Յեթե պարտապանը չկատարե յուր պարտավորութեանը,
պարտական է պարտատիրոջը հատուցանելու դրանով պատճառած
մնասները: Վնաս տեսլով հասկացվում է թե գործին իրապես հաս-
ցրած մնասը և թե կորուստը այն ոգտի, վոր հնարավոր եր ստա-
նալ շրջանառութեան սովորական պայմաններում:

118. Պարտապանը ազատվում է իր պարտավորութեանը չկա-
տարելու պատասխանատվութեանից— յեթե այլ բան չե սահմանված
որենքով կամ պայմանադրով— յեթե ապացուցանե վոր, կատարելու

անկարելիությունը հետեանք ե յեղել մի հանգամանքի, վորի առաջը ինքը առնել չեր կարող, կամ արդյունք ե յեղել պարտատիրոջ չար դիտավորության կամ անզգուշության:

119. Համենայն դեպս, կատարման անկարելիությունը պարտապանին չի աղատում պատասխանատվությունից.

1) յեթե պարտավորման առարկան վորոշված ե տեսակավորության հատկանիշներով ե նույն կարգի գույքի հայթայթումը բացարձակապես անհնարին չի դարձել:

2). յեթե այն անձինք, վորոնց որենքի զորությամբ կամ պարտապանի հանձնարարությամբ հանձնվել ե պարտավորման կատարումը, դիտավորյալ կերպով կամ անզգուշությամբ առաջ են բերել կամ չեն կանխել կատարումը անհնարին դարձնող հանգամանքը:

120. Յեթե պարտապանը չկատարե այն պարտավորությունը, վորի առարկան ե հանդիսանում ոգտադործման համար հատկապես վորոշված մի իր տալը, այդ դեպքում՝ պարտատերը իրավունք ունի դատարանով պահանջելու վոր այդ իրը առնվի պարտապանից ե հանձնվի իրեն: Այս իրավունքը չքանում ե, յեթե իրը հանձնված ե նրա վրա նույնպիսի իրավունք ունեցող մի յերրորդ անձի: Յեթե իրը դեռ չե հանձնված, յերկու պարտատերերից նախապատվության իրավունք ունի նա, հոգուտ վորի ավելի վաղ ե առաջ յեկել պարտավորությունը:

121. Յեթե պարտապանը բաց թողնե կատարման պայմանաժամը, պարտավոր ե պարտատիրոջը հատուցանել պայմանաժամը բաց թողնելու հետեանքով նրան պատճառած վնասները ե պատասխանատու յե պայմանաժամը բաց թողնելուց հետո պատահաբար առաջ յեկած կատարման անկարելիության համար:

Յեթե ժամանակը բաց թողնելու հետեանքով կատարումը պարտատիրոջ համար կորցրել ե իր շահավետությունը, պարտատերը կարող ե հրաժարվել կատարումն ընդունելուց ե պահանջել իր վնասները, այնպես ինչպես վոր իրավունք պիտի ունենար պահանջելու պարտավորման չկատարվելու դեպքում: Իրամական գումարի հատուցման պայմանաժամը բաց թողնող պարտապանը համենայն դեպս պարտավոր ե վճարել բաց թողած ժամանակի համար որինական տոկոս, յեթե պայմանագրով տոկոսի ավելի բարձր չափ չե սահմանված:

Ծանոթութիւն. — Պարտապանը համարվում է պայմանաժամը բաց թողած, յեթե չի կատարել իր պարտավորութիւնը սահմանված պայմանաժամին (հոդ. 111): Պայմանաժամը բաց թողած չի համարվում, յեթե կատարումը չի կարող տեղի ունենալ այնպիսի հանգամանքի պատճառով, վորի համար պարտապանը պատասխանատու չէ, մասնավորապէս յերբ պարտատերն է պայմանաժամը բաց թողել (հոդ. 122):

122. Յեթե պարտատերը բաց թողնու ըստ պայմանի իրեն հասանելիքը ընդունելու պայմանաժամը, պարտապանը իրավունք ունի պահանջելու պայմանաժամը բաց թողնելու հետևանքով իրեն պատճառած վնասները և ազատվում է կտտարման հետագա անկարելիութեան պատասխանատվութիւնից, բացի այն դեպքերից՝ յերբ պարտապանն ունեցել է չար գիտավորութիւն կամ կոպիտ անզգուշութիւն: Պարտապանը պարտավոր չէ վճարելու դրամական տոկոսավոր պարտքի տոկոսները, պարտատիրոջ բաց թողած ժամանակի համար:

Ծանոթութիւն. — Պարտատերը համարվում է պայմանաժամը բաց թողած, յեթե առանց որինական հիմքի՝ հրաժարվում է կատարումը ընդունելուց կամ յեթե չի կատարում այն գործողութիւնները, վոր պարտավոր եր կատարել և վորոնցից առաջ պարտապանը չի կարող կատարել յուր պարտավորութիւնը:

123. Դատարանը կարող է վորոշել պարտապանի իր պարտավորութիւնը չկատարելու կամ պայմանաժամը բաց թողնելու հետևանքով պարտատիրոջը հասանելի հատուցման կարգը, նկատի ունենալով պարտապանի անտեսական վիճակը (հետաձգել և մաս առ մաս վճարել):

124. Պարտատերը կարող է յուր պահանջը զիջել ուրիշ անձի, յեթե այդ չի հակասում որեւորին կամ պայմանագրին, կամ յեթե պահանջը կապված չէ պարտատիրոջ անձնավորութեան հետ: Պարտապանին պետք է տեղեկութիւն տրվի պահանջի փոխանցման մասին և յինչև այդ տեղեկութիւն ստանալը՝ պարտապանը իրավունք ունի վճարելու նախօրոք պարտատիրոջը:

125. Կատարումը ապահովող իրավունքները փոխանցվում են պահանջը ձեռք բերողին:

126. Պարտապանը կարող է իր պարտքը փոխանցել այլ անձի, պարտատիրոջ համաձայնութեամբ միայն:

127. Պարտավորումն օպահովելու համար յերրորդ անձի ստանձնած յերաշխավորությունն ու գրավականը վերջանում են պարտքի փոխանցմամբ, յեթե միայն գրավատուն կամ յերաշխավորը համաձայնած չեն պատասխանատու լինել նաև նոր պարտապանի հանդեպ:

128. Պահանջի գիշումը և պարտքի փոխանցումը պետք է կատարվին առհասարակ պայմանագրների համար սահմանված ձևով, յեթե որենքում չկան հատուկ ցուցմունքներ: Գրավոր կնքված պայմանագրից բղխող պահանջի գիշումը կամ պարտքի փոխանցումը նույնպես պետք է գրավոր կատարվի:

129. Պարտավորումը դադարում է ամբողջովին կամ մասնակի. ա). յերբ կատարված է, բ). պայմանաժամը լրացած համանման փոխադարձ պահանջի հաշվակցությամբը, գ). յերբ միևնույն անձի մեջ միանում են պարտապանը և պարտատերը, միայն թե պարտավորումը նորից առաջ է գալիս այդ միացման դադարելու պարագային, զ). յերբ կողմերը համաձայնության են գալիս և մասնավորապես յերբ կնքվում է նոր պայմանագիր, վոր պիտի փոխարինի նախորդը, ե). յեթե անհնարին է կատարումը, վորի համար պարտապանը պատասխանատու չէ (հոգ. 118):

II. ՊԱՅՄԱՆԱԳՐՆԵՐԻՑ ԲՂԽՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒՄՆԵՐ

130. Պայմանագիրը կնքված է համարվում, յերբ կողմերը համաձայնության են յեկել — հարկ յեղած դեպքերում որենքով պահանջված ձևով — պայմանագրի բոլոր եյական կետերի նկատմամբ: Եյական են համարվում, ամեն պարագայում, պայմանագրի առարկան, գինը, պայմանաժամը, այլ և այն բոլոր կետերը, վորոնց նկատմամբ կողմերից մեկի նախապես արած հայտարարության հիման վրա՝ համաձայնություն պետք է դրյանա:

Ծանոթություն. — 1. Յորբ որենքով սահմանված լինի վոր պայմանագիրը անպատճառ կնքվի կամ վավերացվի նոտարական մարմնի միջոցով, պայմանագիրը, յեթե որենքով այլ բան չէ սահմանված, համարվում է կնքված, նոտարական կարգով կնքվելու կամ վավերացվելու ժամանակից:

Ծանոթություն. — 2. Յերբ կողմերը նախապես համաձայնության են գալիս, վոր պայմանագիրը վորոշ ձև ունենա, նույն իսկ յեթե

այդ ձևը որենքով չե պահանջվում, պայմանագիրը կնքված և համարվում հիշյալ ձևը ընդունելուց հետո միայն:

131. Պայմանագիր կնքելու առաջարկությունը, վոր արվում և ներկա յեղողին՝ առանց պատասխանի համար պայմանաժամ վորոշելու, առաջարկություն անողին կապում և միայն այն դեպքում, յերբ մյուս կողմը անհապաղ հայտնում և թե առաջարկությունն ընդունում և:

Ծանոթություն.— Հետախոսով յեղած առաջարկությունը համարվում և ներկա յեղողին արված առաջարկություն:

132. Յեթե պայմանագիր կնքելու առաջարկությունը արված և բացակա անձի՝ առանց պատասխանի համար ժամանակ վորոշելու, այդ առաջարկությունը կապում և առաջարկողին այնքան ժամանակ, վորքան հարկավոր և պատասխան ստանալու համար, նորմալ պայմաններում:

133. Յեթե առաջարկության պատասխանելու համար վորոշ ժամանակ և տրված, առաջարկություն անող անձը կապված և միայն մինչև այդ պայմանաժամի լրանալը: Յեթե առաջարկությունը ընդունելու մասին յեղած հայտարարությունը ուշատացվի, բայց նրանից յերևի վոր ժամանակին և ուղարկված յեղել, այդ պարագային՝ հայտարարությունը ուշացած և համարվում միայն յեթե պատասխան չստացողը այդ մասին անհապաղ տեղեկություն տա մյուս կողմին:

134. Բացակա անձի հետ պայմանագիրը կնքված և համարվում այն պահից, յերբ առաջարկություն անող անձը պատասխան և ստանում, յեթե այլ բան չի բղխում առաջարկության իմաստից:

235. Յեթե հայտարարվում և, վոր առաջարկությունը ընդունվում և առաջարկության պայմաններից տարբեր պայմաններով, այդ համարվում և առաջարկությունից հրաժարվել և միևնույն ժամանակ նոր առաջարկություն:

136. 500 վոսկու ոտբլուց ավելի գումարի պայմանագիրը պիտի կնքվի գրավոր ձևով, ի բաց առյալ որենքով հատկապես նախատեսված դեպքերը:

Ծանոթություն.— Սույն հոդվածով սահմանված կանոնի խախտումը կողմերին զրկում և իրավունքից, վեճ ծագելու պարագային

ի հաստատություն պայմանագրի՝ հիմնվելու վիճանի ցուցմուքների վրա, բայց չի զրկում նրանց գրավոր ապացույցներ առաջ բերելու իրավունքից:

137. Պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների թե՛ միմյանց և թե՛ մասնավոր անձանց հետ կնքած պայմանագրները անպատճառ պետք է վավերացվին նոտարական կարգով, ի բաց առյալ՝ 1. մասնավոր անձանց հետ կնքված 1000 վոսկի ուլբիլուց վոչ ավելի պայմանագրները, 2. պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների միմյանց հետ կնքած 3,000 վոսկի ուլբիլուց վոչ ավելի գումարի պայմանագրները, 3. վարկային հաստատությունների գործարքները, վոր վերաբերում են ավանդի, փոխառության և հանձնակատարության գործառնությունների, 4. կանխիկ կատարվող տուր և առի գործարքները, և 5. ապահովագրության պայմանագրները:

Ծանոթություն.— Տուր և առի գործարքների տամարագրումը բոլորներում համազոր է նոտարական վավերացման:

138. Տասը հազար վոսկի ուլբիլուց ավելի արժեք ունեցող գույքի ուրիշին փոխանցելու (նվիրելու) պայմանագիրը անվավեր է: Հազար վոսկի ուլբիլուց ավելի արժեք ունեցող նվիրատվությունը պետք է կատարվի նոտարական կարգով, հակառակ պարագային անվավեր է:

139. Յերկկողմանի պայմանագրի մեջ, յուրաքանչյուր կողմն իրավունք ունի մերժելու հակառակ կողմի բավարարումը մինչև փոխադարձաբար բավարարվելը, յեթե որեւից, պայմանագրից կամ իրավահարաբերության ետթյունից չի հետևում վոր մի կողմը պարտական է յուր պարտավորությունը մյուս կողմից առաջ կատարել:

Ծանոթություն.— Յերկկողմանի յե համարվում այն պայմանագիրը, վորով յերկու կողմն ել փոխադարձաբար պարտավորություններ յեն հանձն առնում:

140. Հոգուտ յերրորդ անձնավորության կնքված պայմանագրի պարտավորության կատարումը կարող են պահանջել — յեթե այլ բան չե սահմանված պայմանագրով — թե պարտապանի վրա պարտավորություն դնող կողմը և թե այն երրորդ անձը, վորի ոգտին կրնքված է պայմանագիրը: Յեթե այն անձը, վորի ոգտին պայմանագիրը կնքված է, հայտնել է պարտապանին ցանկություն՝ պայմա-

նազրի մեջ հոգուս իրեն մտցրած իրավունքը վայելելու, պայմանադիր կողմերը զրկվում յեն առանց նրա համաձայնութեան պայմանադիրը փոփոխելու կամ ջնջելու իրավունքից: Յեթե այն անձը, վորի ոգտին կնքված է պայմանադիրը, հրաժարվի պայմանադրով իրեն վերապահված իրավունքից, այդ իրավունքը պայմանադրի մեջ մտցնող կողմը կարող է ինքը ոգտվել այդ իրավունքից, յեթե այդ չի հակասում պայմանադրի իմաստին:

141. Տուգանք համարվում է այն դրամական գումարը կամ ստացվածային արժեքը, վոր պայմանադիրներին մեկը պարտավորվում է հատուցանել, պայմանադիրը չկատարելու կամ վոչ պատշաճավոր կերպով կատարելու պարագային:

Յեթե կողմերը պայմանադրի մեջ կամ լրացուցիչ կերպով տուգանքի մասին պայման են կնքել, պարտատերը ըստ յուր հայեցողութեան՝ իրավունք ունի պահանջելու կամ պայմանը չկատարելուց առաջացած վնասների կամ տուգանքի հատուցումը: Յեթե տուգանքը սահմանված է կատարումը ուղացնելու կամ պատշաճավոր կերպով չկատարելու համար, պարտատերն իրավունք ունի միաժամանակ պահանջելու թե պայմանադրի կատարումը և թե տուգանքի կամ հետաձգումից և կամ վոչ պատշաճավոր կերպով կատարելուց առաջացած վնասների հատուցումը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Վնասների և տուգանքի միաժամանակ պահանջելը թույլ է տրվում որեւքով կամ պայմանադրով հատկապես վորոշված դեպքերում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—2. Տուգանքի վերաբերյալ համաձայնութեանը պիտի կատարված լինի դրավոր ձևով, անկախ տուգանքի գումարից և այն ձևից, վոր ունի հիմնական պայմանադիրը:

142. Յեթե վճարելիք տուգանքը չափազանց մեծ է համեմատած պարտատիրոջ իրական վնասների հետ, դատարանն իրավունք ունի պարտապանի խնդիրքի հիման վրա՝ պակասեցնելու տուգանքը:

Այս պարագային դատարանը պետք է նկատի առնե.

1. թե պարտապանը ի՞նչ չափով կատարել յե յուր պարտականութեանը,

2. կողմերի տնտեսական վիճակը,

3. պարտատիրոջ վոչ միայն տնտեսական, այլ և ամեն մի հարգելի ալ շահը:

143. Կանխավճար համարվում է այն դրամական գումարը կամ այլ ստացվածացին արժեքը, վոր պարտադիր կողմերից մեկը տալիս է մյուսին, ի հաշիվ պայմանագրով վճարելիքների, պայմանագիրը հաստատելու և դրա կատարումը ապահովելու համար:

Յեթե պայմանագիրը չկատարելու համար պատասխանատու չե կանխավճար տվող անձը, նա կսրցնում է այդ կանխավճարը: Յեթե չկատարելու համար պատասխանատու չե կանխավճար ստացող անձը, նա պարտավոր է վերադարձնել կանխավճարի կրկնապատիկը: Բացի սրանից, պայմանագիրը չկատարելու համար պատասխանատու չեղող կողմը պարտական է հատուցանել հակառակ կողմի վնասները, հաշվակցելով կանխավճարը, յեթե դրա հակառակը չե սահմանված պայմանագրով:

Կանխավճարը համարվում է պայմանից հրաժարվելու հատուցումն, միայն յերբ այդ մասին կողմերը պայմանավորվել են:

144. Յեթե յերկկողմանի պայմանագրի կատարումը անկարելի չե դառնում կողմերից մեկի համար, մի այնպիսի հանդամանքի պատճառով, վորի համար վոչ նա և վոչ մյուս կողմը պատասխանատու չեն, վերջինս իրավունք չունի պահանջելու մյուսից պայմանագրի համաձայն բավարարություն, յեթե որեւքի կամ պայմանագրի մեջ այլ վորոշումներ չկան: Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի պայմանագրի կողմից պահանջելու վերադարձնել այն բոլորը, ինչ վոր ինքը տվել է, յեթե նրանից չստանա համապատասխան փոխադարձ բավարարություն:

145. Յեթե յերկկողմանի պայմանագրի կատարումը անկարելի չե դարձել մեկ կողմի համար այնպիսի հանդամանքի պատճառով, վորի համար ինքն և պատասխանատու, մյուս կողմն իրավունք ունի հրաժարվելու պայմանագրից և պահանջելու չկատարելուց առաջացած վնասները (հոդ. 117), յեթե որեւքի կամ պայմանագրի մեջ այլ վորոշումներ չկան:

146. Յեթե յերկկողմանի պայմանագրի կատարումը անկարելի չե դառնում մեկ կողմի համար այնպիսի հանդամանքի պատճառով, վորի համար պատասխանատու չե մյուս կողմը, առաջինն իրավունք ունի ստանալու փոխադարձ բավարարություն, հաշվակցելով այն շահերը, վոր նա ձեռք է բերում կամ տնտեսում է պարտավորությունից ազատվելու հետևանքով:

147. Յեթե պայմանագիրը անվավեր լինի, որենքի հակառակ կամ պետութեան շահերի համար ակներև ֆասակար լինելու պատճառով (հոդ. 30), կողմերից վոչ մեկը իրավունք չունի մյուսից պահանջելու վոր վերադարձնել պայմանագրի համաձայն իր կատարածը:

Անհիմն շահառութեան արդյունքը գանձվում է հոգուտ պետութեան (հոդ. 402):

148. Յեթե պայմանագիրը անվավեր լինի, անգործունակ անձի կողմից կնքված լինելու պատճառով (հոդ. 31), կողմերից յուրաքանչյուրը պարտական է վերադարձնել այն ամենը, ինչ վոր ստացել է պայմանագրի հիման վրա: Գործունակ պայմանագիր կողմը պարտական է հատուցանել անգործունակին, վերջին՝ պայմանագրի հետևանքով կրած ստացվածային իրական ֆասար:

149. Յեթե պայմանագիրը անվավեր ճանաչվի այն պատճառով վոր կնքված է խաբեբայութեան, բռնութեան, սպառնալիքի աղղեցութեան տակ, կամ կողմերից մեկի ներկայացուցչի հակառակ կողմի հետ չարամտութեամբ համաձայնութեան գալու (հոդ. 32), այլ է ծայրահեղ կարիքը շահագործելու դիտավորութեամբ պայմանագիր կնքելու հետևանքով (հոդ. 33), տուժող կողմը իրավունք ունի պայմանագիր կողմից պահանջելու վերադարձնել այն ամենը՝ ինչ վոր ինքը տվել է պայմանագրի հիման վրա. մյուս կողմը այս իրավունքը չունի: Տուժած կողմի անհիմն շահառութեան արդյունքը գանձվում է հոգուտ պետութեան (հոդ. 402):

150. Յեթե ծայրահեղ կարիքը շահագործելու դիտավորութեամբ կնքված պայմանագիրը (հոդ. 33) անվավեր չի ճանաչվել, այլ միայն լուծվել է ապագայի համար, տուժած կողմն իրավունք ունի պայմանագիր կողմից պահանջելու վերադարձնել իր տվածներից միայն այն, վորի համար ինքը, պայմանագիրը լուծելու պահուն փոխադարձ բավարարություն չե ստացել:

Տուժած կողմի անհիմն շահառութեան արդյունքը գանձվում է հոգուտ պետութեան (հոդ. 402):...

151. Յեթե պայմանագիրը անվավեր ճանաչվի, որենքով պահանջված ձևը խախտված (հոդ. 29) կամ մի կողմի մոլորութեան մեջ յեղած լինելու (հոդ. 32) պատճառով, կողմերից յուրաքան-

չյուրը պարտավոր ե վերադարձնել միայն այն ամենը՝ ինչ վոր ինքը ստացել ե պայմանագրի հիման վրա:

Մուրրություն հառաջ բերող հանգամանքի համար պատասխանատու յեղող կողմը պարտավոր ե հատուցանել պայմանագիր կողմին, պայմանագրի հետևանքով նրա կրած ստացվածային իրական փասաները:

Այն կողմը, վորի կողմիտ անհոգության հետևանքն ե յեղել մուրրությունը, պարտավոր ե, վորպես պայմանագրուժ, հատուցանել մյուս կողմի կրած փասաները:

Ծանոթություն.— Մուրրության պատասխանատվությունը ընկած ե համարվում մուրրվողի վրա: Մի կողմի կողմիտ անհոգությունը պիտի ապացուցանե հակառակ կողմը:

III. ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

152. Գույքի վարձակալության պայմանագրով, մի կողմը (վարձատու) պարտավորվում ե մյուս կողմին (վարձակալին) տրամադրել վորևե գույք ժամանակավոր ոգտագործման համար, վորոշ վարձատրությամբ:

153. Պետական ե կոմունալ ձեռնարկությունների վարձակալության պայմանագրները պիտի կնքվին նոտարական կարգով, հակառակ պարագային անվավեր են:

Մի տարուց ավելի ժամանակով ամեն մի գույքի վարձակալության մասին կնքված պայմանագրները պիտի լինին գրավոր, հակառակ պարագային տեղի կունենան 136-րդ հոդվածի մեջ նշանակված հետևանքները:

Պետական ե կոմունալ ձեռնարկության վարձակալության պայմանագրին պետք ե կցվի վարձու տրվող գույքի մանրամասն նկարագիրը, հակառակ պարագային պայմանագիրն անվավեր ե:

154. Վարձակալության պայմանաժամը 12 տարուց ավելի չը պիտի լինի: Պայմանաժամը լրանալուց հետո, վարձակալությունը կարելի յե յերկարաձգել նոր պայմանագիր կնքելով: Յեթե վարձված գույքի ոգտագործումը փաստորեն շարունակվում ե վարձատուի լուրջայն համաձայնությամբ, պայմանագիրը համարվում ե նորոգված անորոշ ժամանակով (հոդ. 155):

155. Յեթե վարձակալության պայմանագիրը կնքված ե առանց

պայմանաժամ վերաշելու, պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամանակով և կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի դադարեցնելու պայմանագրի գորությունը ամեն ժամանակ, պայմանով վոր մյուս կողմին տեղեկություն տրվի, ձեռնարկությունների և առևտրա-արդյունաբերական ձեռնարկությունների ու բնակության շենքերի վարձակալության դեպքում՝ 3 ամիս, իսկ այլ գույքի վարձակալության դեպքում՝ 1 ամիս առաջ:

156. Այն պեպքերում, յերբ վարձակալ են հանդիսանում պետական հիմնարկություններն ու ձեռնարկությունները, վարձու բանվորներն ու ծառայողները, պետական դպրոցների աշակերտները, կարմիր զինվորների հաշվին տպրոզ իրենց ընտանյաց անդամները, աշխատանքի և պատերազմի ինվալիդները, բնակարանների վարձակալության պայմանագրերը ինքնաբերաբար նորոգվում են միևնույն պայմաններով անորոշ ժամանակով, անկախ վարձատուի համաձայնությունից: Այս դեպքերում, պայմանագրի գորությունը դադարեցնելու իրավունքը կարող է պատկանել միայն վարձակալին, բացի 171 և 172-րդ հոդվածներում մասնանշված դեպքերից:

Ծանոթություն. — Այս հոդվածում մասնանշված իրավունքը պատկանում է մասնավոր ձեռնարկությունների տյն ծառայողներին միայն, վորոնք իրավունք ունին Արհեստակցական միությունների անդամ լինելու:

157. Վարձատուն պարտավոր է ժամանակին վարձակալին տրամադրել գույքը՝ պայմանագրին և վարձու տրվող գույքի նպատակին համապատասխանող վիճակի մեջ: Նա պատասխանատու չէ այն պակասների համար, վորոնք պայմանագիրը կնքելիս հայտնի էին վարձակալին կամ հայտնի պիտի լինեին:

158. Յեթե վարձատուն վարձակալին չի տրամադրում վարձված գույքը՝ ոգտագործման համար, վարձակալն իրավունք ունի նրանից պահանջելու կամ գույքը, համաձայն 120-րդ հոդվածի, կամ հրաժարվելու պայմանագրից (հոդ. 171, կետ ա), և պահանջելու պայմանագրանցությունից յուր կրած փասաները:

159. Հիմնական վերանորոգություն անելը վարձատուի պարտականությունն է, յեթե այլ բան չէ նախատեսված որևէքով կամ

պայմանագրով: Յեթե վարձատուն չկատարե այդ պարտականու-
թյունը, վարձակալն իրավունք ունի պայմանագրով նախատեսված
կամ անհետաձգելի անհրաժեշտություն ներկայացնող հիմնական վե-
րանորոգությունը անելու և նրա արժեքը դեղձելու վարձատրամից
կամ հրաժարվելու պայմանագրից (հոդ. 171, կետ բ) և պահանջե-
լու պայմանագանցությունից իր կրած վնասները:

Մանրություն.—Ազգայնացրած կամ մուսիցիպալիզացիայի յեն-
թարկված ձեռնարկությունների և շենքերի վարձակալության դեպ-
քում, հիմնական վերանորոգությունը վարձակալի պարտականությունն
է, յեթե այլ բան չէ նախատեսված պայմանագրով:

160. Վարձակալը պարտավոր է ոգտվել վարձած գույքից
պայմանագրի համաձայն, իսկ յեթե պայմանագրի մեջ ցուցմունք-
ներ չկան, համաձայն գույքի նպատակի:

161. Վարձակալը պարտավոր է գույքի ընթացիկ վերանորո-
գությունը կատարել իր հաշվով, յեթե այլ բան չէ սահմանված
որենքով կամ պայմանագրով:

162. Ազգայնացրած կամ մուսիցիպալիզացիայի յենթարկված
արդյունաբերական ձեռնարկության վարձակալը պարտավոր է ար-
դյունաբերությունը հառաջ տանել պայմանագրով սահմանված
նվազագույն չափից վոչ պակաս չափով: Արտադրության նվազա-
գույն չափը և ժամանակը՝ վորի ընթացքում այդ պիտի ստացվի,
պետք է ցույց տրվին պայմանագրի մեջ, հակառակ պարագային
պայմանագիրն անվավեր է:

163. Վարձված գույքի հետ կապված սուղքերն ու բեկար-
ները ընկնում են վարձակալի վրա, յեթե այլ բան չէ սահմանված
որենքով կամ պայմանագրով:

164. Ազգայնացրած կամ մուսիցիպալիզացիայի յենթարկված
ձեռնարկության կամ շենքի վարձակալը պարտավոր է աստիճան-
գրել այն՝ ամբողջական արժեքով, յուր հաշվով, հոգում ալետու-
թյան կամ տեղական խորհրդի, ըստ պատշաճի:

165. Վարձը կարող է լինել՝ ա) վորոշ պայմանաժամերում
դրամական կամ միջերային վճարումներ, բ) արտադրության ա-
ռարկաների, շենքերի պիտանի տարածության կամ գրամական յե-
կամտի պայմանավորյալ մասը, գ) վորոշ ծառայություններ,
դ) հիշյալ ձևերի վարձերը միասին:

166. Այն դեպքերում, յերբ վարձակալները 156-րդ հոդվածում թված կատեգորիաների անձինքն են, պայմանագրյալ բնակարանային վարձը չի կարող ավելի լինել քան այն, վոր նշանակում են տեղական գործադիր կոմիտեները՝ Ժողովրդական կոմիտեների խորհրդի վորոշած սահմաններում, և սխիտի վճարվի յուրաքանչյուր ամսվա համար, վոչ ուշ քան հաջորդ ամսվա 15-ը:

167. Վարձակալն իրավունք ունի պահանջելու վարձի համապատասխան չափով նվազեցումը, յեթե վորևե հանգամանքով, վորի համար ինքը պատասխանատու չե, զգալապես նվազել ե վարձված գույքի պայմանագրով նախատեսված ոգտագործման հնարավորությունը:

168. Յեթե այլ բան չե նախատեսված պայմանագրով, վարձակալն իրավունք ունի վարձված գույքը ամբողջովին կամ մասնակի վարձու տալու ուրիշի, ըստ պայմանագրի պատասխանատու մնալով վարձատուի տուաջ:

Ծանոթություն.—Ազգայնացման կամ մուսուլմանական յեթե թարկված գույքը վարձակալը կարող ե սւրիշի վարձու տալ, միմիայն վարձատուի գրավոր թույլտվությամբ:

169. Յեթե գույքի սեփականության իրավունքը վարձատուի անցնում ե մի ուրիշ անձի, վարձակալության պայմանագիրը յուրաքանչյուր պահում ե նոր սեփականատիրոջ համար:

170. Վարձակալը դատական պաշտպանության իրավունք ունի յուր տիրապետությունն ամեն մի խախտողի, ի թիվս վորոնց՝ նաե տեփականատիրոջ դեմ:

171. Դատարանը կարող ե վաղաժամ ջնջել վարձակալության պայմանագիրը, շահագրգռված անձերի և հիմնարկությունների պահանջմամբ. ա) յեթե վարձատուն պայմանավորյալ գույքը չի տրամադրում վարձակալին ոգտագործման համար, բ) յեթե վարձատուն սահմանված ժամանակին չի արել այն վերանորոգությունը վոր յուր պարտքն ե, կամ յեթե գույքը վորևե հանգամանքով—վորի համար վարձակալը պատասխանատու չե—սխիտանի չլինի պայմանագրով նախատեսված ոգտագործման համար, գ) յեթե վարձակալը դիտավորյալ կերպով կամ անհոգությամբ վատթարացնում ե գույքի վիճակը, դ) յեթե վարձակալը գույքն ոգտագործում ե որեւի, պայմանագրի կամ գույքի նպատակին անհամապատ-

տասխան յեղանակով, ե) յեթե բնակարանի վարձակալը յուր վարձով ուրիշ բնակողներին համար անհնարին ե դարձնում համակեցությունը նրա հետ, սենյակի կամ բնակարանի մեջ, զ) յեթե պետական ձեռնարկության վարձակալը սահմանված ժամանակին արտադրությունը չի հասցրել պայմանագրով վորոշված չափին, է) յեթե վարձակալը սահմանված ժամանակին չի արել այն վերանորոգությունը՝ վոր իր պարտքն է, ը) յեթե վարձակալը չի վճարել վարձը, պայմանաժամը լրանալուց հետո յերկու ամսվա ընթացքում, իսկ յեթե վարձատուն պայմանաժամը լրանալուց հետո քիչ մասին հիշեցրել է, այդ հիշեցնելու որից մի ամսվա ընթացքում:

172. Վարչական կարգով բնակարանից վտարելը թույլ ե տրվում որենքով հատկապես մատնանշված դեպքերում միայն:

Այս դեպքերում, նախազգուշացնելու պայմանաժամը կարող ե ավելի կարճ լինել քան 155-րդ հոդվածում մատնանշվածը:

173. Սահմանված չափից ավելի բնակելի տարածություն գրավող բնակարանային վարձակալների խտացման և ինքնախտացման արկարգը վորոշվում ե մասնավոր կանոններով:

174. Պայմանագրի պայմանաժամը լրանալուց հետո, վարձակալը պարտավոր ե գույքը իր բոլոր պարագաներով հանձնել վարձատուին, բարեկարգ վիճակի մեջ:

175. Յեթե վարձակալը գույքը ստացել ե ոգտագործելու համար, նրան պատկանող ինվենտարի հետ միատեղ, նա պարտական ե վարձակալության պայմանաժամը լրանալուց հետո, վերադարձնել ինվենտարը ցուցակով, յեթե ցուցակ կա, միանգամայն բարեկարգ վիճակի մեջ, լրացնելով պակասը և փոխարինելով անպետքացածը:

176. Յեթե վարձակալը վատթարացրել ե կամ անարժեք ե դարձրել վարձած գույքը կամ թույլ ե ավել վոր գույքն այդպիսի վիճակի հասնի, նա պարտական ե վարձատուին հատուցանել գրանից առաջացած վնասները:

177. Վարձակալը պատասխանատու յե գույքին՝ յուր տան անդամների, ծառայողների կամ բանվորների հասցրած վնասի համար:

178. Յեթե վարձակալը վարձատուի թույլատվությամբ բարեկարգել և գույքը, նա իրավունք ունի համապատասխան հատուցումն ստանալու վարձատուից:

179. Առանց վարձատուի համաձայնության կատարված բարեկարգությունը, յեթե կարելի չէ դատել առանց վնասելու գույքին, և յեթե վարձատուն չկամենա դրա արժեքը հատուցանել, վարձակալը կարող և վերցնել:

Ծանոթություն.— Ազգայնացրած կամ մունիցիպալիզացիայի շենթարկված ձեռնարկության կամ շենքի վարձակալի կատարած բարեկարգությունը, վարձակալության պայմանաժամը լրանալուց հետո առանց հատուցման անցնում և պետության կամ տեղական խորհրդին, ըստ պատշաճի:

IV. ԱՌ ՈՒ ԾԱԽՍ

180. Առ ու ծախսի պայմանագրով մի կողմը (ծախողը) պարտավորվում և վորևե գույք հանձնել մյուս կողմին (գնորդին) և սեփականություն, իսկ գնորդը պարտավորվում և ընդունել այն գույքը և վճարել պայմանավորյալ գինը:

181. Առ ու ծախսի առարկա կարող և լինել ամեն մի գույք, չորս դուրս չէ հանված քաղաքացիական շրջանառությունից:

Ծանոթություն.— Վոսկի և արծաթի դրամ և ոտար յերկրյա վալյուտա դնելու իրավունքը կարգավորվում և մասնավոր կանոններով:

182. Մունիցիպալիզացիայի շենթարկված բնակության շենքերը կարող են առ ու ծախսի առարկա լինել այն պայմանով վոր 1) դրա հետևանքով գնորդի, նրա ամուսնու և անչափահաս զավակների ձեռքը յերկու և ավելի կալվածք չընկնի, 2) ծախողի, նրա ամուսնու և նրա անչափահաս զավակների անունից մեկից ավելի կալվածի ոտարացում տեղի չունենա յերեք տարվա ընթացքում:

Ծանոթություն.— Կալված համարվում և տունը և յուր բակի բնակելի և հարակից շինությունները:

183. Գույք ծախելու իրավունքը, բացի անուրդով վաճառելու դեպքերից՝ պատկանում և սեփականատիրոջը: Յեթե գույքը ծախել և վոչ սեփականատերը, գնողը սեփականության իրավունք ձեռք և բերում այն դեպքերում միայն, յերբ 59 և 60-րդ հոդ-

վածներն համաձայն, սեփականատերն իրավունք չունի նրանից գույքը յետ պահանջելու:

184. Կանխիկ դրամով առ ու ծախս կարող ե տեղի ունենալ բերանացի, առանց գումարի սահմանափակման:

185. Շենքերի և շենք կառուցանելու իրավունքի առուծախսը տեղի պետք ե ունենա նոտարական կարգով և ապա տոմարագրվի համապատասխան կոմունալ բաժնուժ հակառակ պարագային անվավեր ե:

186. Այլ համաձայնություն չեղած դեպքում, ծախված գույքի պատահական կորուստի վտանգը փոխանցվում ե գնորդին, սեփականության իրավունքի հետ միատեղ (հոդ. 66). բայց յեթե ծախողը ուշացրել ե ծախված իրերի հանձնումը գնորդին կամ գնորդը ուշացրել ե ընդունելը, այդ դեպքում պատահական կորուստի վտանգը ընկնում ե ուշացնող կողմի վրա:

187. Յերբ սեփականության իրավունքը փոխանցվում ե գրնորդին, գույքը նրան հանձնելուց առաջ, ծախողը պարտավոր ե մինչև հանձնելու վայրկյանը պահպանել գույքը, թույլ չտալով նրա վատթարացումը:

Գնորդը պարտավոր ե հատուցանել այս բանի համար անհրաժեշտ յեղած այն ծախսերը, վոր առած կը լինի ծախողը, սեփականության իրավունքը գնորդին փոխանցելուց հետո:

188. Ծախողը պարտական ե վաճառված գույքը հանձնել գնորդին, պայմանագրի համաձայն, իսկ գնորդը պարտական ե ընդունել և վճարել պայմանավորյալ գինը: Յերկու կողմի այս գործողությունները պետք ե տեղի ունենան միաժամանակ, յեթե պայմանագրից այլ բան չի բղխում:

189. Յեթե ծախողը, պայմանագիրը խախտելով գնորդին չը հանձնե վաճառված գույքը, կամ առաջարկե այնպիսի գույք՝ վոր չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, գնորդը կարող ե կամ պահանջել վոր կատարվի պայմանագիրը և ծախված գույքը իրեն հանձնվի, հատուցանելով ծախողի անճշտապահությունից առաջացած վնասները, կամ ինքն ևս հրաժարվելով պայմանագիրը կատարելուց, պահանջել հատուցումը այն բոլոր վնասների, վոր

ծախողը հասցրել է իրեն, պայմանագիրը խախտելով (հոդ. 117.):

190. Յեթե գնորդը պայմանագիրը խախտելով հրաժարվի գնված գույքը ընդունելուց կամ չվճարե նրա պայմանավորյալ գինը, ծախողը կարող է կամ պահանջել վոր կատարվի պայմանագիրը, վճարելով իրեն պայմանավորյալ գինը և հատուցանելով գրնորդի անճշտապահությունից առաջացած վնասները կամ ինքն ևս հրաժարելով պայմանագիրը կատարելուց՝ պահանջել հատուցումը այն վնասների, վոր գնորդը հասցրել է նրան պայմանագիրը խախտելով (հոդ. 117):

191. Յեթե հատկապես վորոշված մի առարկա ծախվել է մի քանի անձի, սեփականության իրավունքը (հոդ. 66) առաջ է դալիս հանձին այն գնորդի՝ վորի հետ ավելի վաղ է կնքված պայմանագիրը (ավագություն):

Յեթե անհնարին է վորոշել ավագությունը, սեփականատեր դառնում է այն գնորդը՝ վորին առարկան հանձնված է, իսկ յեթե առարկան իրեն հանձնելու համար դատ է սկսել գնորդներից մեկն ու մեկը, նախ քան այն առարկայի նրանցից մեկն ու մեկին հանձնվելը՝ սեփականատեր ճանաչվում է մյուսներից վաղ դատ սկսող գնորդը:

192. Յեթե մի յերրորդ անձ, նախ քան վաճառումը դոյություն ունեցող հիման վրա դատ սկսի գնորդի դեմ, այդ գույքը նրանից վերցնելու համար, այդ դեպքում ծախողը գնորդի պահանջամբ պարտական է միջամուխ լինել դատական գործին և վիճելի գույքը դատարանի միջոցով գնորդից յետ առնելու առաջն առնել:

193. Ծախված գույքը դատարանի միջոցով գնորդից յետ առնվելու դեպքում, ծախողը պարտավոր է գնորդին հատուցանելու բոլոր վնասները (հոդ. 117.):

194. Յեթե ծախողը չկանչվի միջամուխ լինելու գործին, այդ դեպքում նա ազատվում է պատասխանատվությունից գնորդի առաջ, յեթե ծախողն ապացուցանե վոր ինքը մասնակցելով դատավարությանը՝ առաջը կ'առնե ծախված գույքը դատարանի միջոցով գնորդից յետ առնվելուն: Յեթե գնորդը ծախողին հրավիրե միջամուխ լինել դատավարության, բայց վերջինս հրաժարվի, այդ

դեպքում նա զրկվում է իրավունքից ապացուցանելու վոր գնորդը անկանոն է վարել գործը:

195. Ծախողը պատասխանատու չէ գնորդի առաջ ծախված գույքի պայմանագրով վորոշված հասկությունների բացակայության, այլև այն պակասությունների համար՝ վոր դաշխալես նվազեցնում են նրա գինը կամ պիտանությունը, սովորական կամ պայմանագրով նախատեսված գործածության համար:

Ծախողը պատասխանատու չէ ծախված գույքի պակասությունների համար, յեթե այդ պակասությունները հայտնի յեն եղել գրնորդին պայմանագիրը կնքելիս, կամ գնորդը կարող եր նկատել, յեթե անհրաժեշտ ուշադրությունը դարձրած լիներ: Վերջին դեպքում, ծախողը պատասխանատու չէ, յեթե միայն նա ժխտել ե տվյալ պակասությունների գոյությունը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հողագործության և Արդարադատության ժողովրդական կոմիտեի ատենների մասնավոր հրահանգի մեջ թված վորոշ ցեղի անասունների առ ու ծախսի ժամանակ, ծախողը պատասխանատու չէ միայն հիշյալ հրահանգում մատնանշված հիմնական պակասությունների համար:

196. Գնորդը պարտական ե անհապաղ գննել ստացած գույքը և յերևան հանած պակասությունների մասին հայտնել ծախողին:

Յեթե գնորդը ծախված գույքը ընդունի առանց առարկության, նա զրկվում ե պակասություններ մատնացույց անելու իրավունքից, ի բաց առյալ այնպիսի պակասությունները, վոր չեին կարող նկատվել սովորական ձևով առարկաները ընդունելիս, կամ վոր դիտավորյալ կերպով թաքցրած ե յեղել ծախողը: Այդ պակասությունները գնորդը կարող ե մատնացույց անել այն դեպքում, յերբ այդ պակասությունները յերևան հանելուց հետո նրանց մասին անհապաղ հայտնել ե ծախողին:

197. Գնորդը պակասությունների առթիվ պահանջ կարող ե ներկայացնել (հոդ. 198) մի տարվա ընթացքում՝ շենքերի, և վեց ամսվա ընթացքում՝ մնացյալ գույքերի վերաբերմամբ, հաշված գույքը հանձնելու որից, եթե պայմանագրով ավելի յերկար ժամանակամիջոց չի սահմանված: Ծախողի կողմից խաբերայություն յեղած դեպքում, գնորդը յերևան հանած պակասությունների առթիվ յուր պահանջները կարող ե ներկայացնել յերեք տարվա

ընթացքում, իսկ եթե պահանջ ներկայացնելու համար պայմանագրով ավելի յերկար ժամանակամիջոց է սահմանված, այդ ժամանակի ընթացքում:

ԾԱՆՈԹՈՒԹՈՒՆ.—Անասուկաների առ ու ծախսի ժամանակ, բարեխիղճ ծախողը պատասխանատու չէ միայն այն դեպքում, յերբ գնորդը տեղեկացրել է նրան պակասությունների մասին և կամ քաղաքացիական դատ կամ խնդիր է ներկայացրել դատարանին զննել տալու մասին, նախ քան Հողագործության կամ Արդարադատության Ժողովրդական կոմիտեի անդամների հրահանգով մատնանշված պայմանագրի լրանալը (ծանոթ. 195-րդ. հոդվածի):

1-8. Յեթե գնորդը յերևան է հանել ծախված գույքի սլակա-
սությունները և ժամանակին հայտնել է նրանց մասին, իրավունք ունի պահանջելու կամ 1) վոր իրեն հանձնվին համապատասխան հատկություն զանեցող առարկաներ, յեթե ծախված առարկաները տեսակավոր են, կամ 2) վոր համապատասխան չափով նվազեցվի նրանց գինը, կամ 3) վոր լուծվի պայմանագիրը և հատուցվին իր բոլոր փասաները (հոդ. 117):

199. Ծախված գույքի սլակասությունների պատճառով պայմանագիրը լուծվելու դեպքում, գնորդը պարտական է ծախողին վերադարձնել գույքը, իր ստացված բոլոր յեկամութիւններով հանդերձ, այլև հատուցում տալ ծախողին գույքի վատթարացման համար, բացի այնպիսի վատթարացումից, վորի առաջն ինքը (գնորդը) չէր կարող առնել: Ծախողը իր կարգին, պարտական է հատուցանել գնորդին՝ գույքի վրա նրա արած անհրաժեշտ և ոգտակար ծախսերը, և բացի դրանից՝ հատուցանել նրա կրած փասաները (հոդ. 117):

200. Յեթե ոտարացվող գույքը գրավ է դրված, կամ յեթե կան վարձակալության պայմանագրներ, վորոնց առարկան է տվյալ գույքը, ծախողը պարտական է այդ մասին տեղեկություն տալ գնորդին:

Այս պարտականության զանցառությունն իրավունք է տալիս գնորդին՝ պահանջելու վոր կամ պայմանագիրը լուծվի և ծախողից գանձվին յուր կրած փասաները, և կամ համապատասխան չափով նվազեցվի գույքի գինը:

201. Նմուշներով առ ու ծախս կատարելու դեպքում, ծախողը պատասխանատու չէ, յեթե հանձնված ապրանքը չունի նմուշի հատկությունները:

202. Պարտքի վերաբերյալ պահանջ կամ այլ իրավունք ծախսողը պատասխանատու չէ միայն պահանջի իրական լինելուն և իրավունքի իրապես գոյութիւնն ունենալուն համար, յետեւ պայմանագրով այլ բան չէ սահմանված:

203. Գույքը դատարանի միջոցով գնորդից հոգուտ յերրորդ անձի վերցվելու կամ գույքի պակասութիւնների համար ծախսողի պատասխանատվութիւնը վերացնելու կամ սահմանափակելու մասին առաջուց յեղած համաձայնութիւնը անվավեր է, յետեւ ծախսողը, գիտենալով հանդերձ յերրորդ անձի իրավունքի գոյութիւնը կամ գույքի պակասութիւնները, դիտավորյալ կերպով գնորդից թաքցրել է այդ հանգամանքները:

204. Դատարանի միջոցով ծախված գույքը յետ վերցնելուն կամ նրա պակասութիւնների համար ծախսողի պատասխանատվութեանը վերաբերող կանոնները չեն տարածվում այն դեպքերի վրա, յերբ գույքը պարտադիր կերպով ծախված է աճուրդով, որենքով սահմանված կարգով:

205. Յետեւ պայմանագրով վորոշված է, վոր ծախված ապրանքը հետգնեաւ և մաս առ մաս հանձնվի գնորդին և նրանից գինը ստացվի նույն ձևով, այդ դեպքում ծախսողի կամ գնորդի կողմից մի մասի վերաբերմամբ պայմանաժամի բաց թողնելը կամ պակասութիւններ յերևան հանելը կարող է հիմք ծառայել ամբողջ պայմանագիրը լուծելու, յետեւ այդ մասնակի խախտումը հակասում է ամբողջ գործարքի եյութեանը ու նպատակին: Հակառակ պարագային, ժամանակը բաց թողնելու կամ պակասութիւնների համար պատասխանատու կողմը պետք է մյուս կողմին հատուցանեւ պայմանագրի մասնակի խախտումից առաջացած վնասները, իսկ պայմանագիրը յուր ուժը պահում է ապրանքի հետագա մասերի վերաբերութեամբ:

Վ. ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

206. Փոխանակութեան պայմանագրով կողմերը մի գույք փոխում են մի այլ գույքի հետ:

Փոխանակութեան մասնակցողներից յուրաքանչյուրը համարվում է ծախսողը այն բանի, վոր փոխում է, և գնորդը՝ այն բանի, վորի հետ փոխում է:

207. Փոխանակութեան պայմանագրի վերաբերմամբ կիրարկվում են առ ու ծախսի համապատասխան կանոնները:

VI. Փ Ո Ւ Ա Ռ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

208. Փոխառութեան պայմանագրով մի կողմը (փոխառու, հանձնում է մյուսին (փոխառուին) ի սեփականութիւն՝ դրամ կամ տեսակավոր առարկաներ. իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել փոխառուին յուր ստացած գումարը կամ փոխ առած առարկաների քանակութեանը հավասար նույն տեսակի և վորակի առարկաներ, տոկոսով կամ առանց տոկոսի:

209. Կողմերը ամեն մի պարտքի, վոր առաջ է դալիս առ ու ծախսից, գույքի վարձակալութեանից կամ այլ հիման վրա, կարող են տալ փոխառութեան պարտավորման ձև: Այսպիսի դեպքում կիրարկվում են փոխառութեան կանոնները:

210. Փոխառութեան գումարը կարող է վորոշված լինել թվոսկի ուղբլիներով և թե խորհրդային դրամանիշներով: Այն դեպքում, յերբ փոխառութեան գումարը նշանակված է թվոսկի ուղբլիներով, վճարվելիք գումարը պետք է հաշվել թվոսկի ուղբլու վճարման որվա պաշտոնական կուրսով:

Ծանոթութեան. — Պետական Բանկին իրավունք է վերապահվում ընդունել ավանդ և ընթացիկ հաշվով թվոսկի և արծաթ դրամ և ձույլ թվոսկի ու արծաթ և ոտարյերկրյա վալյուտա, նույն մետաղը կամ վալյուտան վերադարձնելու պայմանով, բայց տոկոսները վճարելով խորհրդային դրամանիշներով:

211. 50 թվոսկի ուղբլուց ավելի գումարի փոխառութեան պայմանագիրը պիտի կնքվի գրավոր ձևով, հսկառակ պարագային առաւելագան 136-րդ. հոդ.-ի ծանոթութեան մեջ նախատեսված հետեանքները:

212. Փոխառուն կարող է փոխառութեան համար տոկոս պահանջել միայն այն դեպքում, յեթե տոկոս նշանակված է պայմանագրի մեջ:

213. Տոկոս կարելի յե առնել միմիայն պարտքի մայր գումարից: Տոկոսի տոկոս (բարդ տոկոս) առնելը արգելվում է: Այս սահմանափակումը չի տարածվում այն գործարքների վրա, վոր

կատարում են որինապես գոյութիւն ունեցող վարկային հաստատութիւնները:

214. Տոկոսը վճարվում է ամսե ամիս, յեթե այլ համաձայնութիւն գոյութիւն չունի:

215. Յետե փոխառութիւնը առանց տոկոսի յե, փոխառուն իրավունք ունի վճարելու իր պարտքը, իսկ փոխառուն պարտավոր է ընդունել այն նաև պայմանաժամից առաջ:

216. Յետե փոխառութիւնը տոկոսով է, փոխառուն իրավունք ունի յերեք ամիս առաջ տեղեկացնելով փոխառուին կամ մի ամիս առաջ տոկոսները վճարելով, պայմանաժամից առաջ ազատվելու յուր պարտավորումից, վերադարձնելով ստացած գումարը:

1. յեթե տարեկան 6-ից ավելի տոկոս է սահմանված այն փոխառութեան համար, վորի գումարը վորոշված է վոսկի ուղղվիներով:

2. յեթե այն փոխառութեան տոկոսը, վորի գումարը վորոշված է խորհրդային դրամանիշներով, ավելի յե քան այն զեզջի տոկոսը, վոր պետական քանկը սահմանել է ակտիվ գործառնութիւնների վերաբերմամբ, համապատասխան ժամանակի համար:

Փոխառուի հրաժարվելը սույն հոդվածով իրեն վերապահված իրավունքից՝ անվավեր է:

217. Փոխառուն իրավունք ունի առարկելու փոխառութեան պայմանագրի ամբողջութեան կամ նրա մի մասի վավերականութեան դեմ, ապացուցանելով վոր պայմանագիրը անարժեք է, այսինքն վոր ինքն իսկապես կամ չի ստացել դրամը, առարկաները կամ նրանց ստացվածային համարժեքը (հոդ. 209), կամ ստացել է պայմանագրի մեջ ցույց տվածից պակաս քանակութեամբ:

Այն դեպքերում, յերբ փոխառութեան պայմանագիրը կնքված պիտի լինի գրավոր ձևով, թույլ չի տրվում նրա դեմ առարկութիւն անել վկաների ցուցմունքների հիման վրա, բացի այն դեպքերից, յերբ քրեական պատժելի արարքներ կան:

218. Ապագայում փոխառութեան պայմանագիր կնքելու վերաբերյալ նախնական պայմանագիրը, անկախ փոխառութեան գումարից՝ պետք է կնքվի գրավոր ձևով:

219. Նախնական պայմանագրով ուրիշին փոխառություն տալու պարտավորություն հանձն առնողը կարող է պահանջել, վոր ջնջվի նախնական պայմանագիրը, յեթե հետագայում պայմանագիր կողմի տնտեսական վիճակը մեծապես վատթարանա, մասնավորապես յեթե նա սնանկ ճանաչվի կամ դադարեցնե յուր վճարումները:

VII. Կ Ա Պ Ա Լ

220. Կապալի պայմանագրով մի կողմը (կապալառուն) պարտավորվում է իր ռիսկով վորոշ աշխատանք կատարել մյուս կողմի (կապալատուի) պատվերով, վոր պարտավոր է վարձատրել նրան, յուր պատվերը կատարելու համար:

221. Կապալառուն պարտավոր է աշխատանքը կատարել իր ծախսով, յեթե այլ համաձայնություն չկա:

222. Կապալառուն պարտավոր է ձեռք առնել ամեն միջոց իրեն հանձնված գույքի անվթար պահպանության համար, և նյութապես պատասխանատու յե ամեն մի զանցառության համար, վորի հետևանքով գույքը կարող է վոջնչանալ, կորչել կամ փասավել:

223. Յեթե կապալատուի հայթայթած նյութեղենը վատ հատկություն ունի կամ յեթե կան կապալառուից անկախ այլ հանգամանքներ, վոր սպառնում են շինվածքի ամրությանը կամ պիտանությանը, կապալառուն պարտավոր է ժամանակին տեղեկացնել այդ մասին կապալատուին, հակառակ պարագային պատասխանատու յե այն փաստների համար, վոր կապալատուն կարող է կրել հիշյալ հանգամանքների շնորհիվ:

224. Իր նյութեղենովը գործ անող կապալառուն պատասխանատու յե այդ նյութեղենի լավ հատկության համար:

225. Յեթե կապալառուն ժամանակին չի ձեռնարկում պայմանագիրը կատարելու կամ այնքան դանդաղ է կատարում գործը, վոր ակնհայտնի յե դառնում, վոր չպիտի կարողանա վերջացնել ժամանակին, կապալատուն իրավունք ունի, առանց սպասելու պայմանագրով վորոշված պայմանաժամի լրանալուն՝ պահանջելու պայմանագրի ջնջումը և փաստների հատուցումը (հոդ. 117):

226. Յեթե գործի կատարման ընթացքում անհայտնի դառնա, թոր այդ գործը չպիտի կատարվի ինչպես հարկն է, կապալատուն իրավունք ունի բավականաչափ ժամանակ տալու կապալատունին թերությունները վերացնելու համար, և յեթե այդ պահանջը չկատարվի նշանակված ժամանակին, կամ ջնջելու պայմանագիրը կամ գործի շարունակությունն և ուղղումը հանձնել մի յերրորդ անձի, կապալատունի հաշվով:

227. Կապալատուն պարտավոր է շինված գործը հանձնել պայմանագրի համեմատ և առանց այնպիսի թերությունների, վոր անպետք են դարձնում շինվածքը, պայմանագրով նախատեսված կամ սովորական նպատակի համար: Յեթե կան հիշյալ թերությունները կամ բացակայում են պայմանավորյալ հատկությունները, այդ իրավունք է տալիս կապալատունին՝ պահանջելու. 1) վոր կամ առանց վարձի ուղղվին թերությունները համապատասխան ժամանակի ընթացքում, յեթե այդ ուղղումը հնարավոր է առանց անսովորաչափ ծախսերի, 2) կամ վոր համապատասխան չափով նվազեցվի կապալի գինը, 3) կամ վոր ջնջվի պայմանագիրը և հատուցվին իր կրած վնասները (հոդ. 117):

Յեթե թերությունները պակաս եյական են, դատարանը կարող է կապալատունի պահանջմամբ մերժել պայմանագրի ջնջումը, պարտավորեցնելով կապալատունին թերությունները ուղղել, կամ վազեցնելով կապալի գինը:

Ծանոթություն. — Կապալատուն չի կարող ոգտվել սույն հոդվածում մատնանշված իրավունքից, յեթե թերությունները պայմանավորված են 223-րդ հոդվածով նախատեսված հանդամանքներով, և յեթե կապալատուն կատարել է հիշյալ հոդվածով յուր վրա դրված պարտականությունները:

228. Կապալատուն պարտավոր է շինված գործը ընդունել պայմանագրի համեմատ և անհապաղ հայտնել կապալատունին իր կատած թերությունների մասին. հակառակ պարագային զրկվում է թերությունները մատնանշելու իրավունքից: Յեթե կապալատուն երևան հանի այնպիսի թերություններ, վոր չեն կարող նկատվել գործը սովորական ձևով ընդունելիս, կամ վոր դիտավորյալ կերպով թաքցրած լինի կապալատուն, պարտավոր է անհապաղ հայտնել այդ մասին կապալատունին:

229. Կապալատուն, թերությունների առթիվ պահանջ կարող է

ներկայացնել վեց ամսվա ընթացքում, իսկ շենքերի և կառուցվածքների վերաբերությամբ՝ շինված գործը հանձնվելուց հետո՝ յերեք տարվա ընթացքում, յեթե պայմանագրով ավելի յերկարատև պայմանաժամ չի վորոշված։ Յեթե կապալատուի կողմից խաբեբայություն տեղի ունեցած լինի, թերությունների առթիվ պահանջ կարելի չեն ներկայացնել յերեք տարվա ընթացքում, իսկ յեթե պահանջ ներկայացնելու պայմանագրով համար ավելի յերկարատև պայմանաժամ և սահմանված, այդ ժամանակի ընթացքում։

230. Կապալատուն պարտավոր և պայմանավորյալ վարձը վճարել կապալատուին, ամբողջ գործը հանձնելուց հետո, յեթե պայմանագրով չի վորոշված, վոր վարձը վճարվի մաս առ մաս, շինված գործը մաս առ մաս հանձնելիս։

231. Յեթե առարկայական պայմանների փոփոխության շնորհիվ անհրաժեշտ լինի չափազանց ավելացնելու այն մտավոր նախահաշիվը, վոր կազմել և կապալատուն, վորին հավանություն և տվել կառավատուն և վոր հիմք և ծառայել պայմանագրին՝ կապալատուն իրավունք ունի պահանջելու պայմանագրի ջնջումը թե գործը շինելու ընթացքում և թե ավարտելուց հետո, հատուցանելով կապալատուին նրա կրած իրական նյութական վնասը։

Յեթե կապալատուն ժամանակին չի նախազգուշացրել կապալատուին նախահաշիվից ավելի ծախսեր անելու անհրաժեշտության մասին, նա պարտական և գործը կատարել առանց կապալատուից նախահաշիվից դուրս ծախսեր պահանջելու։

232. Յեթե կապալի առարկան նախ քան հանձնումը պատահաբար վոշնչանա, կամ գործի ավարտումը անհնարին դառնա, կապալատուն իրավունք չունի վարձ պահանջելու յուր աշխատանքի համար (հոդ. 144)։ Բայց յեթե հիշյալ հանքամանքները առաջացել են կապալատուի հայթայթած նյութեղենի պակասությունների շնորհիվ կամ կապալը կատարելու յեղանակի մասին նրա արած կարգադրությունների հետևանքով, և կամ յեթե այդ հանգամանքները առաջ են յեկել կապալը ընդունելու պայմանաժամը նրա կողմից բաց թողնելուց հետո (հոդ. 122), նա պարտական և վարձատրել կապալատուին, 146-րդ հոդվածի համաձայն։

233. Նախ քան շինված գործի հանձնումը, նյութեղենի պահպանարար վոչնչանալու ուսկը պատկանում է նյութեղենը հայթաթող կողմին: Յեթե նյութեղենը վոչնչանա մյուս կողմի չար գիտավորության կամ զանցառության հետևանքով, այդ կողմն է պատասխանատու միասնեթի համար:

234. Յեթե կան հարգելի պատճառներ, կապալատուն գործը ավարտելուց առաջ իրավունք ունի ամեն ժամանակ հրաժարվելու պայմանագրից, վարձատրելով կապալառուին գործի շինված մասի համար և հատուցանելով նրան՝ պայմանագրի շնջումից առաջացած վնասները, գեղջելով այն շահը, վոր կապալառուն տնտեսում է կամ ձեռք է բերում պայմանագիրը շնջելու շնորհիվ:

235. Այն կապալի վերաբերմամբ, վորի կապալատուն պետական վորևե մարմին է, կիրարկվում են պետական կապալների և մտտակարարումների մասին յեղած որենքները:

VIII. ՅԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

236. Յերաշխավորության պայմանագրով յերաշխավորը մի յերրորդ անձի պարտաւիրոջ հանդեպ պատասխանատվություն է հանձն առնում, այդ պարտաւիրոջ պարտավորման ամբողջական կամ մասնակի կատարման համար:

Ծանոթութուն.— Յերաշխավորություն չի համարվում, յեթե մեկը հանձնարարական կամ տեղեկություն է տալիս պարտապանի վճարունակության նկատմամբ, առանց վորոշապես մտադրություն հայտնելու նրա հետ միատեղ պարտավորում հանձն առնելու մասին:

237. Միայն իրական պահանջն է վոր կարելի յե ապահովել յերաշխավորությամբ:

238. Յերաշխավորություն կարելի յե հանձն առնել միմիայն գրավոր ձևով. հակառակ պարագային առաջ կը գան 136-րդ հոդվածի ծանոթության մեջ մատնանշված հետևանքները:

239. Յեթե յերաշխավորության պայմանագրով այլ բան չի սահմանված, յերաշխավորը պատասխանատու յե նույն չափով, ինչ չափով վոր պատասխանատու յե գլխավոր պարտապանը, մասնավորապես նա պատասխանատու յե տոկոսներ վճարելու, պայմանաժամբ բաց թողնելուց առաջացած վնասները հատուցանելու,

հարկ յեղած դեպքերում՝ տուգանք այլ և գանձման ծախսերը վճարելու համար:

240. Միաժամանակ և միասին յերաշխավորություն հանձն առած անձերը պատասխանատու յեն վորպես համապարտներ:

241. Յեթե պարտապանը չկատարե յուր պարտավորումը պարտատերն իրավունք ունի պահանջ ներկայացնելու գլխավոր պարտապանին և յերաշխավորին, վորպես համապարտների՝ յեթե վրա հակառակը չե սահմանված յերաշխավորության պայմանադրով:

242. Յեթե քաղաքացիական դատ ե սկսված յերաշխավորի դեմ, վերջինս պարտավոր ե պարտապանին գործին մասնակցելու կանչել: Յեթե յերաշխավորը այս պարտականությունը չկատարե, պարտապանն իրավունք ունի յերաշխավորի իրեն ներկայացրած պահանջին հակադրել (հոդ. 246) այն բոլոր առարկությունները, վոր նա կարող եր անել պարտատիրոջ հանդեպ:

243. Յերաշխավորը պարտական ե տեղեկացնել գլխավոր պարտապանին թե ինքը մտադիր ե նրա փոխարեն վճարել պարտքը: Այս պարտականությունը չկատարող յերաշխավորը իրավունք չունի հակադարձ պահանջ ներկայացնելու պարտապանին, յեթե վերջինս իր կարգին կատարելու լինի յուր պարտավորումը:

244. Գլխավոր պարտավորումը կատարող պարտապանը պարտավոր ե անհապաղ այդ մասին տեղեկացնել յերաշխավորին, հակառակ պարագային յերաշխավորը չի զրկվում գլխավոր պարտապանից կրկին անգամ պարտքը պահանջելու իրավունքից (հոդ. 246), յեթե իր կարգին վճարած լինի պահանջատիրոջը. պարտապանը կարող ե միմիայն պահանջել պարտատիրոջից, նրա անհիմն կերպով ստացածը:

245. Յերաշխավորն իրավունք ունի պաշտպանվելու պարտատիրոջ պահանջի դեմ այն բոլոր առարկություններով, վոր կարող եր անել ինքը՝ պարտապանը: Յերաշխավորը այս առարկություններն անելու իրավունքից չի զրկվում, նույնիսկ յեթե ինքը՝ պարտապանը հրաժարվի նրանցից կամ ճանաչե իր պարտավորումը:

246. Պարտապանի փոխարեն պարտավորումը կատարող յե-

քաջխափորը գլխավոր պարտավորման վերաբերմամբ՝ պահանջատե-
րոջ տեղն է բռնում։

247. Յերաշխափորից բավարարություն ստանալուց հետո, պար-
տատերը պարտավոր է յերաշխափորին փոխանցել այն բոլոր իրա-
վունքները, վոր ապահովում են պահանջը պարտապանից և այն
փաստաթղթերը, վոր ապացուցանում են այդ պահանջը։

248. Յեթե պարտատերը հրաժարվի բավարարություն ստա-
նալու իրեն պատկանող նախապատվության իրավունքից կամ իր
ոգտին սահմանված պարտքի ապահովությունից, յերաշխափորն
ազատվում է յուր պարտավորումից այն չափով, վոր չափով վոր
պարտատերը կարող եր յուր պահանջը գանձել, ոգտագործելով հիշ-
յալ իրավունքները։

249. Յերաշխափորությունը վերջանում է գլխավոր պարտա-
վորման վերջանալովը։

250. Յերաշխափորությունը վերջանում է, յեթե պահանջա-
տերը գլխավոր պարտավորման պայմանաժամը լրանալու որից
յերեք ամսվա ընթացքում քաղաքացիական դատ չսկսի յերաշխա-
փորի դեմ։ Իսկ յեթե գլխավոր պարտավարման կատարման համար
պայմանաժամ չե վորոշված, և յեթե այլ համաձայնություն չկա,
յերաշխափորի պատասխանատվությունը վերջանում է յերաշխափո-
րության պայմանագիրը կնքելու որից մի տարի անցնելուց հետո։

IX,

Ա. Հ Ա Ն Ձ Ն Ա Ր Ա Ր ՈՒԹ Յ ՈՒՆ

251. Հանձարարության պայմանագրով մի կողմը (փոխանոր-
դը) պարտավորվում է մյուս կողմի (փոխանորդյալի) հաշվով և
նքա անունից կատարել փոխանորդյալի իրեն հանձնարարած գոր-
ծողությունները։

Փոխանորդյալը պարտավոր է վարձատրել փոխանորդին միայն
այն դեպքում, յեթե այդ վորոշված է պայմանագրով կամ որինե-
կան կարգով հաստատված սահմաններով։

252. Փոխանորդը պարտավոր է իրեն հանձնարարված գործո-
ղությունները կատարել փոխանորդյալի ցուցմունքների համաձայն-
նա իրավունք ունի շեղվելու այդ ցուցմունքներից միայն այն դեպ-
քում, երբ այդ ցուցմունքները խախտում են օրենքի կամ հասարակական

քում, յեթե գործի հանգամանքները այդ անհրաժեշտ են դարձնում փոխանորդյալի շահերի համար և յեթե նա չի կարող նախապես հաղորդակցություն ունենալ փոխանորդյալի հետ:

253. Փոխանորդը պարտավոր է՝ 1) հաղորդել փոխանորդյալին, նրա պահանջմամբ, հանձնարարությունը կատարելու ընթացքի վերաբերյալ բոլոր տեղեկությունները, 2) հանձնարարությունը կատարելուց հետո ներկայացնել տեղեկագիր, արդարացուցիչ փաստաթղթերի հետ միասին, 3) ժամանակին վերադարձնել փոխանորդյալին այն ամենը՝ ինչ վոր ինքն ստացել է իրեն արված հանձնարարության հետևանքով և 4) հատուցանել փոխանորդյալին այն վնասները, վոր նա կարող է կրած լինել, փոխանորդի չար դիտավորության կամ անզգուշության հետևանքով:

254. Փոխանորդը պարտավոր է իրեն հանձնարարված գործողությունները կատարել անձամբ: Նա իրավունք ունի փոխանցելու այդ գործողությունների կատարումը այլ անձի (անձնափոխանորդի), յեթե այդ մասին լիազորված է պայմանագրով կամ ստիպված է հանգամանքների շնորհիվ, յուր փոխանորդյալի շահերը պաշտպանելու համար: Այս դեպքում, փոխանորդը պատասխանատու չէ միայն անձնափոխանորդի ընտրության համար, փոխանորդյալը իրավունք ունի մերժելու իր փոխանորդի ընտրած անձնափոխանորդին:

255. Եթե փոխանորդը հանձնարարության կատարումը փոխանցում է այլ անձի (հոդ. 254), նա պարտավոր է անհապաղ այդ մասին տեղեկացնել փոխանորդյալին, անհրաժեշտ տեղեկություններ հաղորդելով անձնափոխանորդի անձնավորության և ընակավայրի մասին:

Եթե փոխանորդն այս պարտականությունը չկատարե, նա պատասխանատու չէ յուր անձնափոխանորդի բոլոր գործողությունների համար, ինչպես յուր սեփական գործողությունների:

256. Փոխանորդյալը պարտավոր է՝ ա) ընդունել այն բոլորը, ինչ վոր փոխանորդը ըստ որինի արել է հանձնարարությունը կատարելու համար, բ) հատուցանել փոխանորդին հանձնարարությունը կատարելու համար յեղած անհրաժեշտ ծախսերը, գ) հանձնարարությունը կատարելուց հետո վարձատրել փոխանորդին, յեթե վարձատրություն հասնելու չէ նրան (հոդ. 251):

Հանձնարարությունը կատարելու անհրաժեշտ ծախքերը հոգա-
լու համար փոխանորդյալը պարտավոր է համապատասխան կան-
խավճար տալ փոխանորդին:

257. Փոխանորդյալը կարող է ամեն ժամանակ յետ առնել իր
արած հանձնարարությունը, իսկ փոխանորդը կարող է ամեն ժա-
մանակ հրաժարվել նրանից: Այս իրավունքից հրաժարվելու մասին
յեղած համաձայնություններն անվավեր են:

258. Յեթե փոխանորդը պայմանագիրը լուծե աջնալիսի պայ-
մաններում, յերբ փոխանորդյալը հնարավորություն չունի նրան
փոխարինելու կամ այլ կերպ ապահովելու գործի վարումը, փոխա-
նորդը պատասխանատու չէ յուր պատճառած վնասների համար:

259. Յեթե փոխանորդյալը լուծե պայմանագիրը նախ քան
հանձնարարության կատարումը, նա պարտական է վարձատրել փո-
խանորդին, նրա կատարած աշխատանքի չափով և հատուցանել նրան
հասցրած վնասները:

260. Հանձնարարությունը վերջանում է՝ ա) յերբ փոխանորդ-
յալը յետ է առնում այն, բ) յերբ փոխանորդյալը մեռնում է, հայ-
տարարվում է անգործունակ, անհայտ բացակա կամ սնանկ, այլ և
յերբ գոյություն ունենալուց դադարում է այն իրավական անձը,
վորի անունից տված է փոխանորդագիրը, գ) յերբ հրաժարվում
է փոխանորդը, դ) յերբ փոխանորդը մեռնում է կամ կորցնում է
յուր գործունակությունը:

261. Առևտրական և արդյունաբերական ձեռնարկությունն վա-
րելու հանձնարարությունը իր ուժը պահում է նաև փոխանորդ-
յալի մահից հետո, մինչև նրա իրավաժառանգի կողմից յետ առնը-
վելը:

262. Յեթե հանձնարարությունը վերջանում է 260-րդ հոդվա-
ծի ա. և բ. կետերում մատնանշված պատճառներով, հանձնարարու-
թյունը իր ուժը պահած է համարվում, վորչափ վոր այդ անհրաժեշտ
է փոխանորդի շահերի պաշտպանության համար, մինչև վոր փոխա-
նորդը իմանա կամ նրան տեղեկացվի թե հանձնարարությունը վեր-
ջացել է:

263. Փոխանորդի մահվան դեպքում նրա ժառանգները պարտավոր են այդ մասին տեղեկություն տալ փոխանորդյալին և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել նրա շահերի պաշտպանության համար:

Բ. ՓՈՒՍԱՆՈՐԴԱԳԻՐ

264. Փոխանորդը պետք է ունենա փոխանորդագիր կամ լիազորագիր, վորպեսզի կարող լինի փոխանորդյալի անունից կատարել այնպիսի գործողություններ, վորոնցով անմիջապես պիտի ուսմանվին փոխանորդյալի իրավունքներն ու պարտականությունները:

265. Այն դեպքերում, յերբ գործողությունը պիտի կատարվի կառավարական մարմնի կամ պաշտոնի վերաբերմամբ, փոխանորդագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով, հակառակ պարագային անվավեր է. բացառություն են կազմում այն դեպքերը, յերբ մասնավոր կանոններով թույլ է տրվում փոխանորդագրի այլ ձև:

266. Գույք կառավարելու համար տրվող փոխանորդագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով, հակառակ պարագային անվավեր է:

267. Պետական հիմնարկության կամ ձեռնարկության անունից փոխանորդագիրը պետք է տրվի պատասխանատու ղեկավարի ստորագրությամբ և հիմնարկության կամ ձեռնարկության կնիքով կրնա վստահ:

268. Փոխանորդագիրը կարող է տրվել վոչ ավելի, քան յերեք տարի ժամանակով: Յեթե փոխանորդագրի մեջ պայմանաժամ չեն նշանակված, փոխանորդագիրը իր ուժը պահում է տրվելու օրից մեկ տարվա ընթացքում:

269. Փոխանորդի գործողությունները փոխանորդյալի համար ստեղծում են անմիջական իրավունքներ ու պարտականություններ, յեթե հիշյալ գործողությունները կատարված են փոխանորդագրի համաձայն կամ յեթե հետագայում փոխանորդյալը նրանց իր հավանությունն է տվել:

270. Փոխանորդյալը ամեն ժամանակ կարող է ջնջել փոխա-

նորագիրը, իսկ փոխանորդը՝ հրաժարվել նրանից: Այս իրավունքը
ժխտող համաձայնությունն անվավեր է:

271. Փոխանորդագիրը վոչնչացնելու մասին փոխանորդյալը
կամ նրա ժառանգները պարտավոր են տեղեկացնել թե փոխանոր-
դին և թե այն անձանց ու հիմնարկություններին, վորոնց հետ փո-
խանորդը պետք է հարաբերություններ ունենար, յեթե այդպիսի-
ները հայտնի են փոխանորդյալին (ժառանգներին):

272. Փոխանորդյալի պահանջմամբ, փոխանորդը պարտավոր է
անհապաղ վերադարձնել նրան փոխանորդագիրը և հանձնարարու-
թյան հարակից բոլոր այլ փաստաթղթերը:

273. Փոխանորդը փոխանորդագրով իր ունեցած լիազորու-
թյունները կարող է փոխանցել 254-րդ հոդվածում մատնանշված
դեպքերում, մակագրելով իսկական փոխանորդագրի վրա:

274. Թե փոխանորդյալը և թե փոխանցումը կատարող փոխա-
նորդը ամեն ժամանակ կարող են վոչնչացնել լիազորությունների
փոխանցումը:

275. Յերբ 260-րդ հոդվածի բ. կետում մատնանշված պատ-
ճառներով փոխանորդագիրը վոչնչանում է, վոչնչանում է նաև փո-
խանցումը:

X. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՊԱՐՁ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

276. Ընկերության պայմանագրով յերկու կամ մի քանի ան-
ձեր փոխադարձաբար պայմանավորվում են միացնել իրենց դրա-
մագլուխները և միասին գործ անել մի ընդհանուր տնտեսական
նպատակով:

277. Դրամագլուխ համարվում է ամեն ինչ, վոր յուրաքան-
չյուր ընկերակից մտցնում է ընդհանուր գործի մեջ, լինի այդ փող
թե այլ գույք կամ ծառայություն:

278. Ընկերակիցների դրամագլուխները կարող են տարբեր լի-
նել ըստ տեսակի և արժեքի: Յեթե պայմանագրով հակառակը չե-
ռահմանված, համարվում է թե բոլոր ընկերակիցների դրամագլուխ-
ները համարժեք են:

279. Դրամագլուխը կազմող փողը, սպառելի և փոխարինելի առարկաները համարվում են ընկերակիցների ընդհանուր սեփականութիւն, իսկ ամեն մի այլ գույք համարվում է ընդհանուր ոգտագործութեան առարկա, յետե պայմանագրով հակառակը չե սահմանված:

Ծանոթութիւն.— Յետե գործի մեջ վորպես դրամագլուխ մուծվում է մուկիցիպալիդացիայի չենթարկված մի շենք, այդ դեպքում այդպիսի շենքի վրա իրավունք կարող է սահմանվել շենքերի ոտարացման համար սահմանված կարգով և պայմաններով:

280. Ընկերակիցների դրամագլուխները և այն ամենը, ինչ վոր ընկերութիւնը ձեռք է բերում յուր հաշվով, կազմում են ընկերութեան ընկերովի գույքը: Ընկերովի գույքի կազմի մեջ մտնում է ամեն ինչ, վոր ձեռք է բերված նրա մեջ մտնող առանձին իրավունքների հիման վրա:

281. Ընկերութեան գործերի վարումը տեղի յե ունենում բոլոր ընկերակիցների ընդհանուր համաձայնութեամբ: Յետե ընկերութեան պայմանագրով սահմանված է, վոր ընկերութեան գործերի վերաբերյալ վորոշումները ընդունվում են ձայների մեծամասնութեամբ, այդ դեպքում այդ մեծամասնութիւնը վորոշվում է վոչ թե դրամագլուխների չափերի, այլ ընկերակիցների թվի համեմատ, յետե պայմանագրով հակառակը չե սահմանված: Ընկերութեան գործերը վարելու լիազօրութիւնը կարող է տրվել ընկերակիցներից մեկին կամ մեկ քանիսին, վորոնց իրավունքներն ու պարտականութիւնները այս պարագային վորոշվում են կամ նույն ինքն ընկերութեան պայմանագրով կամ բոլոր ընկերակիցների ստորագրած մասնավոր փոխանորդագրով: Այսպիսի լիազօրներ նշանակելուց հետո, մնացյալ ընկերակիցները ընկերութեան գործերը վարելուց հեռանում են:

282. Յետե ընկերութեան գործերը վարելու լիազօրութիւնը տրված է ընկերութեան պայմանագրով, այդ լիազօրութիւնը իր ուշժը պահում է ամբողջովին մինչև ընկերութեան լուծումը և կարող է վոչնչացվել միայն յետե կան հարգելի պատճառներ: Այդպիսի լիազօրը իր կարգին կարող է ընկերութեան գործերը վարելուց հրաժարվել, յետե հարգելի պատճառ կա:

283. Այն ընկերակիցը, վոր ընդհանուր շահերի համար վորևէ գործողություն և կատարել առանց հարկ յեղած լիազորությունը տուած լինելու, իրավունք ունի յետ ստանալու յուր միջոցներէց գործի համար արած ծախսերը, յետե հա հիմք և ունեցել այդ գործողությունները անհրաժեշտ համարելու ընկերության շահերի համար:

Յուր աշխատանքի համար ընկերակիցը վարձատրություն ստանալու իրավունք ունի միայն այն դեպքում, յերբ այդպիսի պայման կա պայմանագրի մեջ:

284. Ընկերակիցը պատասխանատու յե ընկերության առաջ ընկերական պայմանագիրը և իր լիազորության վերաբերյալ պարտականությունները չկատարելու համար, պայմանագրներից բղխող պարտավորումների խախտման համար յեղած պատասխանատվության ընդհանուր կանոնների համեմատ:

285. Յուրաքանչյուր ընկերակից իրավունք ունի անձամբ ծանոթանալու ընկերության գործերի վիճակին, զննելով մատյաններն ու թղթերը: Այս իրավունքը վոչնչացնող կամ սահմանափակող համաձայնությունն անվավեր է:

286. Ընկերության մասնակցության իրավունքը չի կարող փոխանցվել առանց մնացյալ ընկերակիցների համաձայնության: Քանի վոր ընկերությունը գոյություն ունի, ընկերակիցն իրավունք չունի անորինելու ընկերովի գույքի մեջ յուր ունեցած բաժինը:

287. Յուրաքանչյուր ընկերակից պատասխանատու յե ընդհանուր պարտքերի համար, ընկերության մեջ իր ունեցած բաժնի համեմատական չափով, յետե այլ բան չե նախատեսված ընկերության պայմանագրով: Համարվում է թե ընկերակիցները համապարտ պատասխանատվություն չունին ընդհանուր պարտքերի համար:

288. Յետե շահ ու գէնի բաշխման մեջ ընկերակիցների մասնակցությունը չե վորոշված պայմանագրով, այդ դեպքում յուրաքանչյուրի դրամագլխի համար տոկոս և տրվում այն չափով, վորչափ վոր պետական բանկը առնում է մուրհակները գեղջելիս, իսկ տոկոսները վճարելուց հետո մնացած շահ ու գէնին ընկերակիցները մասնակցում են հավասար չափով: Յետե մասնավոր համաձայնություն գոյություն չունի, ընկերակիցների հաշվետվությունը շահ ու

դենի վերաբերմամբ՝ առաջին յե ունենում յուրաքանչյուր գործառնության տարվա վերջում, իսկ մի տարուց պակաս ժամանակով կազմված ընկերությունների մեջ՝ ընկերության լուծումից հետո:

289. Ընկերությունը վերջանում է, ի բաց առյալ 290 և 293 հոդվածներում մասնանշված պարագաները, ա) ընկերակիցներից մեկի մահվան, բ) ընկերակիցներից մեկի անգործունակ կամ սնանկ հայտարարվելու պատճառով, գ) յեթե ընկերակիցներից մեկը պահանջ դնե, վոր լուծվի անորոշ ժամանակով կազմված ընկերությունը, դ) յեթե ընկերակիցներից մեկը ժամանակից առաջ հրաժարվի վորոշ ժամանակով կազմված ընկերության մասնակցությունից, ե) յերբ լրանա վորոշ ժամանակով կազմված ընկերության պայմանագրով, զ) յերբ իրագործված է ընկերության նպատակը կամ պարզվել է, թե անիրագործելի է այդ նպատակը, է) յեթե վորեւե պարտաիրոշ ներկայացրած պահանջը պիտի գանձվի ընկերովի գույքի մեջ ընկերակիցներից մեկի ունեցած բաժնից, ը) յերբ ընկերակիցները համաձայնություն են կայացնում լուծելու ընկերությունը:

290. Ընկերակիցներից մեկի մահվան դեպքում, ընկերությունը շարունակվում է, յեթե ընկերական պայմանագրի մեջ պայման կա, վոր մեռածի բաժինը գուրա հոնվի, կամ վոր նրան փոխարինեն որեւորով կամ կտակով նրան ժառանգ հանդիսացողները կամ այն հիմնարկությունը, վորին փոխանցվում է մեռնողի գույքը որեւոր համաձայն:

291. Միայն հարգելի պատճառով թույլ է տրվում հայտարարություն տալ վորոշ ժամանակով հիմնված ընկերության մասնակցությունից պայմանագրովից առաջ հրաժարվելու մասին: Անորոշ ժամանակով հիմնված ընկերության մասնակցությունից հրաժարվելու մասին հայտարարություն պիտի տրվի ժամանակին:

Անվավեր է այն համաձայնությունը, վորով ջնջվում կամ սահմանափակվում է ընկերության մասնակցությունից հրաժարվելու մասին հայտարարելու իրավունքը:

292. 289-րդ հոդվածի բ. գ. դ. և է. կետերով նախատեսված դեպքերում, այլ և ընկերակիցներից մեկի մահվան դեպքում, յեթե մեռնողին փոխարինողը հրաժարվի ընկերության մեջ մտնելուց (հոդ. 290), ընկերությունը շարունակվում է յեթե նրա շարունա-

կուլթյունը այս դեպքերում նախատեսված է պայմանագրով, կամ
յեթե այդ մասին մնացյալ ընկերակիցները համաձայնության են
գալիս: Այս պարագային, դուրս յեկող ընկերակցի բաժինը հանվում
է հանխիկ դրամով, դուրս գալու որվա հաշվեկշռի համաձայն:

293. Յեթե ընկերակիցներից մեկի պարտատերը իր պահանջի
զանձման առարկա չէ դարձրել ընկերովի գույքի մեջ նրա ունե-
ցած բաժինը և սակայն չէ պահանջել, վոր լիկվիդացիայի յենթար-
վին ընկերության գործերը (հոդ. 289 կետ Է.), այդ պարագային
նա իրավունք ունի մասնակից լինելու ընկերության ոգտին, բայց
վոչ յուրացնելու ընկերակցի վորևէ իրավունք կամ պարտականու-
թյուն:

294. Ընկերության լուծումից հետո ընկերակիցները գործերի
լիկվիդացիան կատարում են հետևյալ պայմաններով ա) միայն
ընդհանուր ոգտագործման համար ընկերության մեջ մտնած ա-
ռարկաները վերադարձվում են այդ առարկաները մտցնող ընկերա-
կիցներին, առանց նրանց ոգտագործման համար վարձ վճարելու,
յեթե այլ պայման չկա, բ) ընդհանուր գույքի բաժանումը տեղի
չէ ունենում ընկերակիցների ընդհանուր գործի վերաբերյալ ան-
վիճելի պարտքերը վճարելուց կամ վիճելի պարտքերը ապահովե-
լուց հետո միայն: Նյութեղեն դրամագլուխները վերադարձվում են
դրամով, ընկերական պայմանագրով սահմանված գնահատությամբ.
Իսկ յեթե այդպիսի գնահատություն չկա, համաձայն այն արժեքի,
վոր նրանք ունեցել են ընկերության մեջ մտցնելիս, վերածելով
այդ արժեքը վոսկե վալյուտայի, պաշտոնական կուրսով: Յեթե ըն-
կերակիցների ընդհանուր գույքը բավական չլինի պարտքերը հա-
տուցանելու կամ ապահովելու համար, պակասորդ գումարը ընկե-
րակիցները պետք է լրացնեն նրանցից յուրաքանչյուրին բաժին
ընկնող մասի չափով: Ընկերակիցներից մեկի սնանկության դեպ-
քում նրան բաժին ընկնող մասի մասը բաժանվում է մնացած
ընկերակիցների միջև միևնույն հիմունքով:

Ծանոթություն.— Ընկերության լիկվիդացիայի ժամանակ ընկե-
րակիցների փոխադարձ հաշվետեսության կարգը կարող է սահմանվել
նաև ընկերակիցների համաձայնությամբ:

2. ԼԻԱԿԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

295. Լիակատար համարվում է այն ընկերությունը, վորի բոլոր մասնակիցները (ընկերակիցները) զբաղվում են առևտրով կամ արհեստով, ընդհանուր ֆիրմայի տակ և ընկերության պարտավորումների համար պատասխանատու յեն իրենց ամբողջ ստացվածքով, վորպես համապարտներ: Ընկերության ֆիրման պետք է պարունակե ցուցմունք մասնակիցների ազգանունների մասին և տասմանված լինի ընկերության պայմանագրի մեջ:

Ծանոթություն.— Ֆիրմաներ ձեռք բերելու և ոգտագործելու կարգը սահմանվում է մասնավոր վորոշումներով:

296. Լիակատար ընկերություն հիմնելու մասին ընկերակիցները իրենց բոլորի ստորագրությամբ հայտարարություն պետք է տան ընկերության գտնված տեղի այն հիմնարկությանը, վոր առևտրական տոմարներ է պահում, տոմարագրելու և հրապարակելու համար: Ստորագրությունները պետք է վավերացված լինին պատշաճ կարգով:

Ծանոթություն.— 1. Հայտարարությունը պիտի պարունակե՝ ա) յուրաքանչյուր ընկերակցի ազգանունը, անունը, հայրանունը և բնակության տեղը, բ) ընկերության ֆիրման և նրա գտնված տեղը, գ) ընկերության պայմանագրի պայմանաժամը, դ) ցուցմունք այն մասին թե ընկերակիցներից ով և ընկերության ներկայացուցիչը, իսկ յեթե մի քանի ներկայացուցիչներ կան, ցուցմունք այն մասին թե ընկերության անունից իրավունք է տրված յուրաքանչյուրին առանձին գործելու թե միասին, ե) ընկերովի դրամագլխի քանակությունը:

Ծանոթություն.— 2. Սույն հոդվածում մատնանշված կարգով հայտարարվում և հրապարակվում է սկզբնական հայտարարության մեջ յեղած տվյալների ամեն մի փոփոխություն, ընկերության լուծումը, ընկերության գործերի համար հաշվեհարդարների ընտրությունը կամ նշանակումը և այդ հաշվեհարդարների կազմի մեջ տեղի ունեցող ամեն մի փոփոխություն, այլ և մասնավոր վորոշումներով նախատեսված այլ տվյալներ:

Ծանոթություն.— 3. Յեթե մի ընկերակից դուրս է գալիս ընկերությունից, այդ մասին կարող է հայտարարություն տալ և ինքը, կցելով իր հայտարարությանը պատշաճ փաստաթղթեր: Դատարանով սնանկ ճանաչված ընկերության լուծման մասին արձանագրություն և մուծվում առևտրական տոմարի մեջ, ընկերության սնանկությունը յերևան հանող դատարանի կարգադրությամբ:

297. Լիակատար ընկերութեան պայմանագիրը պետք է կնքվի գրավոր ձևով և վավերացվի նոտարական կարգով. հակառակ պարագային անվավեր է:

298. Լիակատար ընկերութեանը առևտրական տոմարի մեջ մուծվելու որից համարվում է իրավական անձ և յուր ֆիրմայի տակ կարող է ձեռք բերել որեւոր սահմաններում, գույքի վերաբերյալ ունեն իրավունք, հանձն առնել պարտավորումներ, դատարանում քաղաքացիական դատ վարել և պատասխանատու լինել յուր ներկայացուցիչների միջոցով:

299. Լիակատար ընկերութեան նկատմամբ կիրարկվում են սույն Որենագրքի 277, 278, 283, 284, 285, 289, 290, 292 և 294 հոդվածների կանոնները:

300. Յեթե ընկերակիցների գործի մեջ մուծած բաժինները նվազել են ընկերութեան կրած վնասների հետևանքով, ընկերակիցներն իրավունք չունեն ընկերութեան շահից իրենց բաժին ընկնող մասը պահանջելու, մինչև լոր ընկերովի դրամագլուխը լրացվի այդ շահից, առևտրական տոմարում արձանագրված չափով:

301. Վորևե ընկերակից իրավունք չունի առանց մնացյալ ընկերակիցների համաձայնութեան՝ վոչ իր կամ յերրորդ անձի հաշվին կատարելու այնպիսի գործարքներ, վոր համանման են ընկերութեան առևտրական կամ արդյունաբերական գործունեութեան առարկան կազմող գործարքներին, և վոչ մասնակցելու համանման այլ ընկերութեան, վորպես անսահմանափակ պատասխանատվութեան ունեցող ընկերակից:

Այս կանոնը խախտող ընկերակիցը պարտավոր է իր ընկերակիցների ընտրութեամբ կամ հատուցանել ընկերութեան սրատնտեսած վնասները կամ ընկերութեանը հանձնել հիշյալ գործողություններով ձեռք բերած ամբողջ շահը:

302. Յուրաքանչյուր ընկերակից իրավունք ունի ընկերութեան անունից միանձնաբար գործելու, յեթե պայմանագրով այլ բան չէ սահմանված: Ընկերակիցներից մեկի առարկութեանը մյուս ընկերակցի միանձնական կարգադրութեան կամ գործողութեան դեմ բավական է նրա գործողությունը կասեցնելու համար:

303. Ընկերութեան գործերը վարելու համար տված փոխանորդագիրը կարող է չնշել ամեն մի ընկերակից, վոր մասնակցել է կամ իրավունք ունի մասնակցելու այդ փոխանորդագիրը տալուն: Ընկերութեան գործերը վարելու պայմանագրով լիազորութեան ունեցող ընկերակցին իրեն հանձնված ընկերութեան գործերը վարելուց հրաժարեցնելը վավերական է համարվում միայն այն դեպքում, յերբ այդ վճռել է դատարանը, մնացյալ ընկերակիցների կամ նրանց մեծամասնութեան հարգելի պատճառների վրա հիմնված պահանջմամբ (նայելով թե այս մասին ինչ վորոշումներ կան ընկերութեան պայմանագրի մեջ):

304. Ընկերակիցները համապարտութեամբ պատասխանատու չեն իրենց բոլոր գույքովը ընկերութեան բոլոր պարտավորումների կամ այն գործարքների համար, վոր, ինչպես այդ պարզվում է կողմերի մտադրութեանից, կնքված են ընկերութեան համար: Ընկերութեան մեջ վորպես նոր անդամ մտնող անձը մնացյալ ընկերակիցների հավասար չափով պատասխանատու չէ և այն պարտավորումների համար, վոր առաջ են յեկել նախ քան նրա ընկերութեան մեջ մտնելը: Ընկերութեան պարտքը վճարող ընկերակիցը իրավունք ունի հետադարձ պահանջ ներկայացնելու մնացյալ ընկերակիցներին, ընկերութեան ֆաասներից նրանցից յուրաքանչյուրին բաժին ընկնող մասի չափով:

305. Ընկերութեան պարտատերերը կարող են իրենց պահանջը գանձել առանձին ընկերակիցների պատկանող գույքից միայն այն դեպքում, յերբ փաստորեն կամ դատարանով հաստատված լինի ընկերութեան անանկութեանը կամ ընկերութեան գործերի լիկվիդացիայից հետո: Յեթե պարտատերը կամենա իր պահանջը գանձել իր պարտապանի ընկերութեան գույքի մեջ ունեցած բաժնից, նա լիակատար ընկերութեան լուծումը և լիկվիդացիան պահանջելու մասին պարտավոր է հայտնել ընկերութեան, գործառնութեան տարվա վախճանից վեց ամիս առաջ, անկախ այն հանգամանքից թե ընկերութեանը հիմնված է վորոշ թե անորոշ ժամանակով:

306. Ընկերութեան պայմանագրի մեջ արված փոփոխութեանները ույժ են ստանում յերրորդ անձերի համար, վորոնց տեղեկութեան տրված չէ այդ փոփոխութեանների մասին, առևտրական

տումարի մեջ մուծելու և հրապարակելու պայմանով միայն: Յերբուրդ անձերի նկատմամբ անվավեր և ընկերակիցների այն համաձայնությունը, վոր հակառակ և սույն Որենսգրքի 304-րդ հոդվածի նրանց պատասխանատվության վերաբերյալ կանոններին: Յեթե յերբուրդ անձերը հենվում են ընկերության պայմանագրի մեջ տեղի ունեցած փոփոխության վրա, ընկերակիցները չեն կարող նրանց դեմ տուարկություն անելիս առաջ բերել այդ փոփոխության տուարկական տումարի մեջ մուծված և հրապարակված չլինելը:

307. Լիակատար ընկերությունը դադարում և գոյությունն սահմանափակ, քաջի 289-րդ հոդվածով նախատեսված դեպքերից, նաև այն դեպքում, յերբ ընկերությունը անանկ և հայտարարվում դատարանի վճռով:

Ծանոթություն.— Անորոշ ժամանակով հիմնված ընկերության մասնակցելուց հրաժարվելու մասին ընկերակիցը պարտավոր և հայտնել ընկերությունից փաստորեն դուրս գալուց վերջ ուշ քան վեց ամիս առաջ: Վորոշ ժամանակով հիմնված ընկերությունից պայմանաժամից առաջ հրաժարվելը թույլ և տրվում հարգելի պատճառով միայն:

308. Դատարանի վճռով անանկ չճանաչված ընկերության գործերի լիկվիդացիայի համար, ընկերակիցները կարող են ընտրել հատուկ հաշվեհարդարներ թե իրենց միջից և թե կողմնակի անձերից: Յեթե հաշվեհարդարների ընտրության մասին ընկերակիցները համաձայնության չդան, հաշվեհարդարներ նշանակվում են դատարանի կողմից, ընկերակիցներից մեկի խնդրից հիման վրա: Դատարանի վճռով անանկ ճանաչված ընկերության գործերի լիկվիդացիայի համար հաշվեհարդարներ նշանակում և դատարանը, անպայման ընկերության համար կողմնակի անձերից և այն՝ անկախ ընկերակիցների մեկի խնդրից:

309. Հաշվեհարդարներն ավարտում են ընթացիկ գործերը և իրավունք ունին նոր գործադրներ կատարելու: Վորքան այդ անհրաժեշտ և ընթացիկ գործերը վերջացնելու համար: Հաշվեհարդարները դատարանի վճռով անանկ ճանաչված ընկերության պատկանող շենքերն ու կառուցման իրավունքները կարող են տարապես միմեյան անուրդով: Նույն ալս կարգը կիրարկվում և վորևե այլ պատճառով դադարող ընկերության շենքի և կառուցման իրավունքների նկատ-

մամբ, յեթե ոտարացումը տեղի չե ունենում առանց ընկերակիցներ-
ի համաձայնութեան: Լիկվիդացիան ավարտելուց հետո հաշվեհար-
դարները տեղեկագիր են ներկայացնում ընկերակիցներին, իսկ
դատարանի վճռով սնանկ ճանաչված ընկերութեան լիկվիդացիայի
առթիվ այն դատարանին, վոր նայում է սնանկութեան գործին:
Յեթե լիկվիդացիան յերկարի մի տարուց ավելի, տեղեկագիր ներ-
կայացվում է յուրաքանչյուր տասնյերկու ամիս լրանալուց հետո:

Մանորութիւն.— Միասին գործելու համար ընտրված կամ նշանակ-
ված հաշվեհարդարները իրենց պարտականութեանները խախտելու
պարագային համապարտ պատասխանատվութեան ունին թե՛ ընկերու-
թեան մասնակիցներին և թե՛ նրա պարտատերերին առաջ:

310. Յեթե հաշվեհարդարները միաժամանակ և ընկերակիցներ
չեն, իրավունք ունին վարձատրութեան պահանջելու լիկվիդացիայի
աշխատանքների համար. վարձատրութեան չափը վորոշվում է ըն-
կերակիցների հետ համաձայնութեան դալով, իսկ անհամաձայնու-
թեան դեպքում՝ դատարանի հայեցողութեամբ: Դատարանի վճռով
սնանկ հռչակարարված ընկերութեան լիկվիդացիայի համար հաշվե-
հարդարների համար վարձատրութեան նշանակում է այն դատարա-
նը, վոր նայում է ընկերութեան սնանկութեան գործին:

311. Ընկերութեանից դուրս յեկած ընկերակիցը ընկերութեան
պարտքերի համար պատասխանատու չէ նրա ընկերութեանից դուրս
գալու տարվա տեղեկագրի հաստատութեան որից հետո յերկու տար-
վա ընթացքում:

III. ԿՈՄԱՆԴԻՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

312. Կոմանդիտ ընկերութեան համարվում է այն ընկերու-
թեանը, վոր հիմնված է ընդհանուր ֆիրմայի տակ առևտուր անե-
լու կամ վորևէ արհեստով զբաղվելու համար, և բաղկացած է մեկ
կամ մի քանի մասնակիցներից, վորոնք ընկերութեան պարտատե-
րերի առաջ պատասխանատու չեն իրենց ամբողջ գույքովը (անսահ-
մանափակ պատասխանատվութեան ունեցող ընկերներ) և մեկ կամ
մեկ քանի մասնակիցներից, վորոնց պատասխանատվութեանը սահ-
մանափակվում է ընկերութեան մեջ իրենց դրած դրամագլխով
(դիւսադիրներ):

313. Կոմանդիտ ընկերութեան նկատմամբ կիրարկվում են լի-
ակատար ընկերութեան վերաբերյալ բոլոր վորոշումները, ի բաց
առյալ հետագա հոգվածներում մատնանշվածները:

314. Գլխադիրների ազգանունները չեն մուծվում կոմանդիտ
ընկերութեան Ֆիրմայի մեջ, ի բաց. առյալ այն դեպքերը, յերբ այդ
ազգանունները յեղել են կոմանդիտ ընկերութեան ձեռք բերած
Ֆիրմայի մեջ: Կոմանդիտ ընկերութեան Ֆիրմայի վրա պետք է ավե-
լացվին «Կոմանդիտ ընկ» կամ կրճատ «Կ.Ը.Ե.Կ»: Կոմանդիտ ընկերու-
թյունը տոմարագրելու մասին տրված հայտագիրը պիտի պարունա-
կե բացի 296 հոդ. — ի 1 ծանոթութեամբ պահանջվող տեղեկություն-
ներից՝ գլխադիրների ցանկը և նրանցից յուրաքանչյուրի դրամագլու-
խի չափը:

315. Կոմանդիտ ընկերութեան մեջ յեղած ընկերակիցների փոխ-
հարաբերությունները կարգավորվում են հետևյալ պարտադիր կա-
նոններով՝ ա) ստացվածային դրամագլուխն է միայն, վոր գլխադրի
համար ստեղծում է իրավունքներ և պարտավորություններ. բ) գլ-
խադիրը կոմանդիտ ընկերութեան գործերը կարող է կառավարել մի-
այն վորպես նրա լիազորը և յեթե այդպիսի լիազորություն
չունի, իրավունք չունի առարկելու անսահմանափակ պատասխա-
նատվություն ունեցող ընկերակիցների գործողությունների դեմ.
գ) ընկերութեան անանկանալու դեպքում՝ գլխադիրները սահմանա-
փակ պատասխանատվություն ունեցող ընկերակիցների հանդեպ
նախապատվութեան իրավունք ունին ստանալու իրենց դրամագլուխ-
ները, ընկերութեան պարտատերերին բավարարելուց հետո մնացած
գույքից:

Յեթե պայմանագրով այլ բան սահմանված չե, գործադրվում
են նաև հետևյալ կանոնները. ա) գլխադիրը կաշկանդված չե
սույն Որենագրքի 301-րդ հոդվածի սահմանափակումներով. բ) գլ-
խադիրն իրավունք ունի պահանջելու, վոր իրեն հաղորդվի տարե-
կան հաշվեկշիռը և ստուգելու նրա ճշտությունը ընկերութեան մատ-
յաններով և թղթերով:

Դատարանը հարգելի պատճառներով ամեն ժամանակ կարող է
գլխադրին իրավունք տալ ընկերութեան մատյաններն ու թղթերը
նայելու:

316. Գլխադիրը յերրորդ անձերի առաջ պատասխանատու չէ.
ա) յուր դրամագլխովը կամ գույքովը, պայմանավորյալ դրամագլխի չափով, յեթե այդ դրամագլխովը մուծված չէ ընկերության մեջ կամ մուծված է վոչ տմբողջովին, բ) հանիրավի ստացած շահովը:

Ծանոթություն. — Դրամագլխովը նվազեցնելու մասին յեղած համաձայնությունը ուժ չունի ընկերության պարտատերերի համար, քանի որ եւ մուծված չէ առևտրական տոմարի մեջ և հրապարակված չէ պատշաճ կարգով. նախ քան այդ հրապարակումը առաջ յեկած պարտավորությունների համար գլխադիրը պատասխանատու չէ իր սկզբնական դրամագլխի գումարովը:

317. Գլխադիրը անսահմանափակ պատասխանատվություն ունեցող ընկերակիցներին հավասար չափով պատասխանատու չէ. ա) յեթե նրա ազգանունը իր համաձայնությամբ մուծված է ընկերության ֆիրմայի մեջ. բ) այն գործարքների համար, վոր նա կնքել է ընկերության անունից առանց հատուկ լիազորություն ունենալու:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ-ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ

318. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն համարվում է այն ընկերությունը, վորի բոլոր մասնակիցները (ընկերակիցները) զբաղվում են առևտրով կամ վորևեւ արհեստով ընդհանուր ֆիրմայի տակ և պատասխանատու չեն ընկերության տարտավորումների համար վոչ միայն ընկերության մեջ իրենց ունեցած դրամագլխաններով, այլ և իրենց անձնական գույքովը, յուրաքանչյուր ընկերակցի դրամագլխի բազմապատիկ չափովը (որ. յեռապատիկ, հնգապատիկ, տասնապատիկ), վոր հավասար պիտի լինի բոլոր ընկերակիցների համար:

319. Ընկերակիցներից մեկի անանկության դեպքում, նշու պատասխանատվությունը ընկերության պարտքերի համար բաշխվում է ընկերության մնացյալ մասնակիցների միջև նրանց դրամագլխանների համեմատական չափովը: Սակայն ընկերակիցներից վոչ վոք յերրորդ անձերի և ընկերության մյուս մասնակիցների առաջ վորևեւ ստացվածային պատասխանատվություն չունի, բացի յուր դրամագլխից և դրամագլխի սահմանված բազմապատիկ չափից:

320. Սահմանափակ պատասխանատվութիւն ունեցող ընկերութիւններ հիմնելը թույլ է տրվում ժողովրդական տնտեսութեան այն ճյուղերում միայն, ուր որեւէր ուղղակի այդ թույլ է տալիս (որին. ելեկտրոֆիկացիայի ընկերութիւններ, պատասխանատու աշխատանքի ընկերութիւններ և այլն), կամ բանվորա-գյուղացիական կառավարութեան իրավագործ մարմինների հասուկ արտօնութեամբ, յուրաքանչյուր առանձին դեպքի համար:

321. Մնացյալի նկատմամբ սահմանափակ պատասխանատվութիւն ունեցող ընկերութեան գործունեութեան կարգը վորոշվում է սահմանված կարգով հաստատված իր կանոնադրութեամբ:

5. ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

322. Բաժնետիրական է համարվում այն ընկերութիւնը, վոր հիմնվում է մասնավոր անձան կամ ֆիրմայի առկ է ունի վորոշ թվով հավասար մասերի (բաժին) բաժանված հիմնական դրամադրութիւն և վորի պարտավորումների համար պատասխանատու չէ միայն ընկերութեան գույքը:

323. Բաժնետիրական ընկերութիւնը հիմնվում է կանոնադրութեան հիման վրա, վոր հիմնադիրները Տնտեսական Խորհրդացութեան միջոցով ներկայացնում են ժողովրդական Կոմիտեների Խորհրդին ի հաստատութիւն:

324. Բաժնետիրական ընկերութեան կանոնադրութեանը, վոր ներկայացվում է կառավարութեան ի հաստատութիւն, ստորագրված պետք է լինի առնվազն հինգ հիմնադիրների կողմից, և նրանք անպայման ջուրջ պետք է տրվին.

- ա) Ընկերութեան նպատակն ու գործունեութեանները.
- բ) Ընկերութեան անունը կամ ֆիրման, վոր համապատասխան պետք է լինի ձեռնարկութեան նպատակներին և պիտի պարունակէ «Բաժնետիրական ընկերութիւն» բառերը.
- գ) Ընկերութեան վարչութեան գտնված տեղը.
- դ) Ժամանակը, վորով հիմնվում է ընկերութեանը, յեթե ընկերութեանը հիմնվում է վորոշ ժամանակով.
- ե) Հիմնական դրամադրութի չափը և դրացանն կարգը, բաժնետոմսերի անվանական արժեքը և վճարման կարգը.

զ) Ընկերութեան վարչական մարմինները (ընդհանուր ժողովներ, վարչութիւն, վերատուգիշ հանձնաժողով, այլ և խորհուրդ, յետեւ այդ նախատեսված ե կանոնադրութեամբ) և նրանց իրավասութիւնը.

ը) Ընդհանուր ժողովի գումարման, նրա իրավունքների և բաժնետերերի ձայնի իրավունքի վերաբերյալ վորոշումները.

թ) Գործառնութեան տարվա սկիզբն ու վերջը, տեղեկագիր և հաշվեկշիռ կազմելու, քննելու և հաստատելու կարգը.

ժ) Շահի բաշխման և պահեստի դրամագլուխ ստեղծելու կարգը.

ի) Հաշվետվութեան կարգը.

լ) Ընկերութեան գործունեութեանը վերջ տալու կարգը.

Հիմնադիրները ընկերութեան կանոնադրութեան մեջ կարող են մտցնել և այլ վորոշումներ, վոր չեն հակասում որեւէին.

Ծանոթութիւն. — Հիմնական դրամագլուխը 100,000 վոսկի ուղարկւց պակաս չի կարող լինել: Բաժնետոմսի արժեքը 100 վոսկի ուղարկւց պակաս չի կարող լինել:

325. Ժողովրդական կոմիտեաների խորհրդի վորոշումը՝ բաժնետիրական ընկերութեան կանոնադրութեան հաստատման մասին, հրապարակվում ե կառավարութեան պաշտոնական թերթի միջոցով:

326. Բաժնետիրական ընկերութեան կանոնադրութիւնը սահմանված կարգով հրապարակվելուց հետո, բաժնետոմսերի ամբողջ քանակութիւնը պիտի բաշխվի հիմնադիրների և նրանց կողմից բաժնետիրական ընկերութեան մասնակցելու հրավիրված անձանց միջև: Այդ հրավերը կարելի յե անել նաև հայտարարութեան միջոցով:

Հիմնադիրները պարտավոր են ընդհանուր առմամբ իրենց վրա առնել բաց թողնվող բաժնետոմսերի մի տասներորդից ($\frac{1}{10}$) վոջ պակասը և իրավունք չունին ոտարացնելու այն՝ նախ քան գործառնութեան յերկրորդ տարվա տեղեկագրի հաստատութիւնը: Նրանք իրավունք չունին նմանապէս ոտարացնելու նախ քան գործառնութեան յերկրորդ տարվա տեղեկագրի հաստատութիւնը իրենց պատկանող հիմնադրական բաժնետոմսերը, վորոնց արժեքը վճարված ե գույքով:

327. Յետեւ կանոնադրութեան հաստատութեան մասին արված հրապարակումից հետո յերեք ամսվա ընթացքում չգումարվի հիմ-

նական դրամագլխի $\frac{1}{4}$ -ը, ընկերությունը համարվում է գլուխ չեկած: Յեթե հաջորդ յեռամսյակի ընթացքում չգումարվի հիմնական դրամագլխի յերկրորդ քառորդը, իսկ կանոնադրության մեջ մատնանշված ժամանակամիջոցում—վոր սակայն ընկերության գործողությունները սկսելու որից մի տարուց ավելի չպիտի տևե—չգումարվի ընկերության հիմնական դրամագլխի բացի յերկու քառորդից մնացյալ մասը, ընկերությունը լիկվիդացիայի յե յենթարկվում յերեք ամսվա ընթացքում: Լիկվիդացիան տեղի չի ունենում միայն այն դեպքում, յերբ կառավարության թույլտվությամբ հետաձգվում է բաժնետոմսերի արժեքի վճարման պայմանաժամը, կամ համապատասխան չափով նվազեցվում է ընկերության հիմնական դրամագլուխը: Ընկերությունը գլուխ չեկած համարելու և նրա լիկվիդացիայի մասին հրապարակվում է կառավարության պաշտոնական թերթի միջոցով:

328. Ամբողջ հիմնական դրամագլխի ժամանակին վճարելն տալահովելու համար բաժնետերերի ընդհանուր ժողովը իրավունք ունի վոչնչացնելու այն բաժնետոմսերը, վորոնց համար բաժնետերը ժամանակին սահմանված վճարը չի արել, և փոխարինել այդ բաժնետոմսերը նորերով, ի վաճառ հանելով նորերը, այն պայմանով սակայն, վոր նոր բաժնետոմսերը փոխարինվեն և արժեքը լրիվ վճարվի նախ քան ընկերության ամբողջ դրամագլխի վճարման համար սույն հոդվածում մատնանշված պայմանաժամի լրանալը:

Բաժնետոմսերի վաճառումից գոյացած գումարից վոչնչացրած բաժնետոմսի տիրոջը հատուցվում են նրա արած վճարումները, զեղչելով բաժնետոմսի փոխանակության և նոր բաժնետոմսի վաճառման հետ կապված ծախքերը:

329. Բաժնետոմսերը վճարելու համար դրամական վճարները հանձնվում են կանոնադրության մեջ մատնանշված վարկային հիմնարկություններին, հիմնադիրներին անուանով և վճարվում են միայն ընկերությունը բացվելուց կամ ընկերությունը գլուխ չեկած համարվելուց հետո: Բաժնետոմսերի համար գույքով արված վճարները հանձնվում են հիմնադիրներին: Հիմնադիրները պարտավոր են բաժնետոմսերի վճարման համար ստացված դրամը և գույքը պահել մինչև վարչության հանձնելը և համապարտությամբ պատասխանատու յեն նրանց անկտրուատ պահպանության համար:

330. Բաժնետոմսերի համար հանձնված գույքի սկզբնական գնահատությունը արվում է հիմնադիրների և գույքը հանձնող բաժնետիրոջ համաձայնությամբ. հիշյալ գույքի վերջնական գնահատությունը կատարվում է բաժնետերերի հիմնադիր ընդհանուր ժողովի և տվյալ գույքը հանձնող բաժնետիրոջ համաձայնությամբ, բայց այն պայմանով, վոր այդ գնահատությունը բարձր չլինի գույքը հանձնելու տեղի և որվա շուկայի միջին գնից: Շուկայի միջին գները սահմանելու անկարելիության դեպքում՝ գնահատությունը կատարվում է գիտակ անձանց մասնակցությամբ: Հիմնադիրների կամ բաժնետերերի կողմից բաժնետիրական ընկերության հանձնվող գույքը պիտի լինի այնպիսի ապրանք, առարկա կամ նյութեր են արժեք, վորոնց վերաբերյալ գործառնությունները մտնում են ընկերության գործունեության շրջանակի մեջ, կամ վոր ընկերությունը կարող է ոգտագործել իր կազմակերպության համար և յուր հետագա գործունեության ընթացքում:

331. Բաժնետոմսերի ստորագրության թերթերում և հրապարակական ստորագրության (պրոսպեկտի) մասին յեղած հայտարարություններում ի թիվս այլ տեղեկությանց անպայման պիտի ցույց տրվին.

ա) կանոնադրության հրապարակման ժամանակը.

բ) Հիմնադիրների՝ իրենց վրա առած բաժնետոմսերի քանակությունը.

գ) Բաժնետոմսերի արժեքը, նրանց վճարման յեղանակն ու պայմանաժամերը.

դ) Հիմնադիրների ընկերության հանձնած գույքի գնահատությունը:

Մանրաբլուր 1.— Բաժնետոմսերի հրապարակ հանելու արժեքը չի կարող անվանականից պակաս լինել:

Մանրաբլուր 2.— Սեփե այս կամ այն հիմնարկություններին կամ անձերին մասնավոր առավելություններ տրվեն բաժնետիրական ընկերության հիմնելու համար, այլ և մասնավոր առանձնաշնորհումներ՝ բաժնետոմսերին ստորագրվելու կըրամագրությամբ հանձնելու պայմանաժամերի վերաբերմամբ, այց քոլոր իրավունքներն ու առավելությունները մասնավորապես պիտի և հիշատակվեն ընկերության կանոնադրության մեջ և բաժնետոմսերի ստորագրության թերթերում:

332. Բաժնետիրական ընկերութեան տոմարագրութեանից առաջ պետք է գումարովի բաժնետերերի յերկու ընդհանուր ժողով— նախնական և հիմնադիր: Նախնական ժողովը գումարվում է հիմնական դրամագլխի վոչ պակաս քան մի քառորդի ստացվելուց հետո: Այս ժողովը լսում է հիմնադիրների զեկուցումը հիմնարկութեան մասին և ընտրում է հանձնաժողով՝ ստուգելու համար հիմնադիրների տեղեկագիրը և այն տվյալները, վոր վերաբերում են ընկերութեան հանձնված գույքի գնահատութեանը:

333. Վոչ ուշ քան մեկ ամիս հետո բաժնետերերի նախնական ժողովից և վոչ վաղ քան 7 որ նրանից հետո գումարվում է բաժնետերերի հիմնադիր ժողովը: Այս ժողովը լսում է հիմնադիրների տեղեկագիրը ստուգելու համար ընտրված հանձնաժողովի զեկուցումը, կատարում է բաժնետոմսերի արժեքը վճարելու համար մուծված գույքի գնահատութեանը, վորոշումն է անում ընկերութեան գլուխ յեկած լինելու կամ չլինելու մասին, ընտրում է վարչութեան, վերստուգիչ հանձնաժողովի անդամներ և վարչական այլ մարմիններ և վճռում է մնացյալ գործերը: Բաժնետիրական ընկերութեանների հիմնադիրները պարտավոր են Տնտեսական Խորհրդակցութեանը տեղեկութեան տալ նախնական և հիմնադիր ժողովների գումարման մասին 7 որ առաջ:

334. Ընկերութեան գլուխ յեկած լինելը ճանաչելու մասին վորոշում արվում է ներկա յեղող բաժնետերերի ձայների յերեք քառորդի մեծամասնութեամբ, այն պայմանով վոր ժողովում ներկայացրած լինի հիմնական դրամագլխի զեթ կեսը, վոր մուծված պիտի լինի հիմնադիր ժողովի գումարման պահուն:

335. Յեթե բաժնետերերի հիմնադիր ընդհանուր ժողովը ընկերութեանը գլուխ յեկած համարե, վարչութեանը պարտավոր է անհապաղ դիմել Տնտեսական Խորհրդակցութեանը՝ ընկերութեան տոմարագրութեան մասին: Ընկերութեան տոմարագրված լինելու մասին հրապարակվում է կառավարութեան պաշտոնական թերթի միջոցով:

336. Տոմարագրութեան մասին յեղած դիմումի հետ պետք է ներկայացվին.

ա) Ընկերութեան կառավարութեան կողմից հաստատված կանոնագրութեանը.

բ) Վարչության կողմից ստորագրված բաժնետերերի ընդհանուր ցանկը, վորի մեջ ցույց տրված պիտի լինի թե նրանցից յուրաքանչյուրը քանի՞ բաժնետոմս ունի և վորքան ե նրանց արած վճարումների ընդհանուր գումարը.

գ) Բաժնետերերի նախնական և հիմնադիր ժողովների արձանագրության պատճենները.

դ) Հիմնադիրների տեղեկագրի պատճենը.

ե) Հիմնադիրների տեղեկագրի ստուգման համար ընտրված հանձնաժողովի գեղուցման պատճենը.

զ) Ընկերության ամբողջ գույքի ցուցակը և ընկերության հաշվեկշիռը՝ վարչության և հաշվապահի ստորագրությամբ:

Փաստաթուղթեր. — Տնտեսական Խորհրդակցությունը իրավունք ունի, յեթե այդ անհրաժեշտ համարե, ստուգելու առանձին դիպքերում տվյալ ընկերության հիմնարկության ընթացքի որինականությունը, իսկ մասնավորապես՝ գույքի ցուցակում մատնանշված գույքի իրապես գոյություն ունենալը և նրա գնահատության կանոնավորությունը:

337. Ընկերության տոմարագրված լինելու մասին յեղած հրապարակման մեջ հիշատակվում են. ա) ընկերության անունը և վարչության գտնված տեղը, բ) ձեռնարկության կանոնադրության մեջ մատնանշված նպատակն ու եությունը, և գ) ընկերության հիմնական դրամագլխի և նրա հավաքված մասի քանակը:

338. Բաժնետիրական ընկերությունը իր տոմարագրության որից համարվում ե իրավական անձ և ունի իրավունք, կանոնադրության մեջ մատնանշված նպատակի սահմաններում, ձեռք բերելու և ստարացնելու բոլոր որինական յեղանակներով ամեն տեսակ գույք, վոր շրջանառությունից դուրս չե հանված, կատարելու գործարքներ և ակտեր, կնքելու պայմանագրներ, քաղաքացիական դատեր սկսելու և պատասխանատու լինելու դատարանում յուր անունից:

339. Նախ քան ընկերության տոմարագրված լինելու մասին հրապարակելը, ընկերության հիմնադիրներն իրավունք ունին բաժնետիրական ընկերության անունից կատարելու բոլոր անհրաժեշտ գործարքները և կնքելու անհրաժեշտ պայմանագրները: Այդ գործարքների համար հիմնադիրները անձնապես համապարտ պատասխանատվություն ունին պայմանադիրների առաջ, յեթե այդ գոր-

ժարքները ընկերութեան հիմնադրութեան համար համաքված ընդհանուր ժողովի կամ հաշորդ ժողովներից մեկի կողմից չք հաստատվեն, կամ նրանց համանութեան չարժանանան ընկերութեան տոմարագրութից հետո վեց ամսվա ընթացքում:

340. Բաժնետիրական ընկերութեան հիմնադիրները ընկերութեան տոմարագրութից հետո մեկ տարվա ընթացքում համապարտ պատասխանատվություն ունին թե՛ ընկերութեան և թե՛ առանձին բաժնետերերի առաջ՝ իրենց պատճառած վնասների համար: Մասնավորաբար այդ տեսակ պատասխանատվություն տեղի ունի, յեթե այդ վնասները առաջ են յեկել այն սխալ տեղեկություններից, վոր նրանք տվել են ստորագրութեան թերթերի, հայտարարությունների ու ստորագրութեան կամ ընդհանուր ժողովին ներկայացրած հաշիվների մեջ, վոր վերաբերում են նրանց աշխատանքի համար տրված վարձատրութեան չափին և ընկերութեան հիմնարկութեան վերաբերյալ ծախսերին կամ հիմնադիրների՝ ընկերութեան հանձնած գույքի գնահատությանը:

Հիմնադիրների գործողությունները ստուգելու միջոցին անվութություն թույլ տվող վարչութեան և վերստուգիչ հանձնաժողովի անդամները համապարտ պատասխանատվություն ունին ընկերութեան, առանձին հիմնադիրների և ընկերութեան պարտատերերի առաջ նրանց հասցրած վնասների համար, յեթե այդ վնասները կարելի չե գանձել հիմնադիրներից:

341. Բաժնետերական ընկերութեան կանոնադրութեան վերախությունը կամ լրացումը, այլև հիմնական դրամագլուխն ավելացնելը կամ նվազեցնելը կարող են տեղի ունենալ միմիայն ընդհանուր ժողովի վորոշմամբ, վոր հաստատվում և տոմարագրվում ե նույն կարգով, ինչ կարգով վոր ընկերութեան կանոնադրությունը:

342. Բաժնետոմսերը լինում են անվանական: Բաժնետոմսերը կարող են լինել վոչ անվանական, յեթե այդ նախատեսված ե կանոնադրությամբ:

343. Բաժնետոմսերը կարելի չե մասերի բաժանել: Եթե բաժնետոմսերը պատկանում են մի քանի անձանց, նրանց իրավունքները ընկերութեան նկատմամբ կարող ե իրականացնել միայն մեկը, բաժնետոմսերի տիրակիցների լիազորութեան հիման վրա:

344. Բաժնետոմսերի համար յեղած վճարումներն ստանալու մասին նախնական անվանական ստացականները կարող են փոխանցվել ուրիշների վարչության համաձայնությամբ միայն: Անվանական բաժնետոմսերը և նրանց փոխարինող ժամանակավոր վկայականները կարող են փոխանցվել փոխանցման մակագրություններով, յեթե այլ բան չե վորոշված ընկերության կանոնադրության մեջ: Ընկերության նկատմամբ իր իրավունքներն իրականացնելու համար փոխանցման մակագրությամբ կամ վորեւե այլ հիման վրա բաժնետոմսի սեփականության իրավունք ձեռք բերողը պարտավոր է վարչությանը հայտնել բաժնետոմսի կամ վկայականի իր սեփականության իրավունքի մասին, վորպես զի ձեռք բերողի անունը մուծվի բաժնետիրական մատյանի մեջ, և ներկայացնել նրան՝ նույն ինքըն բաժնետոմսը կամ վկայականը՝ փոխանցման անվանական մակագրությամբ կամ սեփականության իրավունքի փոխանցման այլ գրավոր ապացույցներով: Յեթե բաժնետոմսի կամ վկայականի սեփականության իրավունքը փոխանցվում է վոչ փոխանցման մակագրությամբ, այլ ուրիշ հիման վրա, այդ դեպքում ընկերության վարչությունն է վոր մակագրություն է անում բաժնետոմսի կամ վկայականի ձեռք բերողի անվան փոխանցվելու մասին: Վոչ անվանական բաժնետոմսերի փոխանցումը նոր տերոջ՝ տեղի յե ունենում հանձնումով:

345. Ընկերությունը իրավունք չունի իր հաշվին գնելու յուր բաժնետոմսերը կամ ժամանակավոր վկայականները, բացի այն դեպքերից՝ յերբ նա ձեռք է բերում այդ բաժնետոմսերն ու վկայականները առաջն առնելու համար այն կորուստների, վոր կարող է ունենալ ընկերությունը իր պահանջները պարտապաններից գանձելիս, կամ պատշաճ դեպքերում բաժնետոմսերը շիջուցանելու համար: Այս կանոնը ըստ պատշաճի կիրարկվում է նաև, յերբ ընկերությունը իր բաժնետոմսերը գրավ է ընդունում:

346. Բաժնետերն իրավունք ունի շահաբաժին ստանալու գումարուտի մնացորդից, վոր մնում է որեւքով կամ կանոնադրությամբ և կամ ընդհանուր ժողովի վորոշմամբ կատարված մասնատրություններից հետո, կանոնադրությամբ կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից վորոշված չափով:

347. Յուրաքանչյուր բաժնետոմս սեփականատիրոջ ընդհանուր ժողովին մասնակցելու և ձայնի իրավունք և տալիս: Բաժնետերերը ձայնի իրավունքն վայելում իրենց պատկանող բաժնետոմսերի համեմատ: Կանոնադրութեան մեջ կարող և վորոշվել բաժնետոմսերի նվազագույն թիվը, վոր ձայնի իրավունք և տալիս, կամ սահմանափակումը մի բաժնետիրոջ վերապահվող ձայների թվի:

Ձայնի իրավունքը կարող և փոխանցվել մի այլ բաժնետիրոջ, վարչութեան կամ ընդհանուր ժողովի նախագահին տված գրավոր հայտարարութեամբ:

348. Բաժնետիրական ընկերութեան մարմիններն են. ա) բաժնետերերի ընդհանուր ժողովները, բ) վարչութեանը, գ) վերատուգիչ հանձնաժողովը, դ) խորհուրդը, յեթե այդ նախատեսված և ընկերութեան կանոնադրութեամբ:

349. Ընդհանուր ժողովները լինում են սովորական և արտակարգ: Սովորական ընդհանուր ժողովը գումարում և վարչութեանը, առնվազն տարին մի անգամ, քննելու և հաստատելու համար նախորդ տարվա տեղեկագիրը, ընտրելու տնօրեններ, փոխ-տնօրեններ, վերատուգիչ հանձնաժողովի և խորհրդի անդամները, վորոշելու բաժնետոմսերին ընկնող շահաբաժինը, այլ և որենքով կամ կանոնադրութեամբ ընդհանուր ժողովին վերապահված ամեն տեսակ խնդիրների լուծման համար:

Արտակարգ ընդհանուր ժողովները գումարում և վարչութեանը, իր սեփական հայեցողութեամբ կամ պահանջմամբը խորհրդի, վերատուգիչ հանձնաժողովի և կամ բաժնետերերի, վորոնք ի միասին ներկայացնում են հիմնական գրամադլխի վոչ նվազ քան մի քսանյերրորդը:

Ծանոթութուն.— Յեթե վարչութեանը յերկու շաբաթվա ընթացքում չկատարե հիշյալ թվով բաժնետերերի պահանջը ընդհանուր ժողով գումարելու մասին, այդ դեպքում այդ բաժնետերերից յուրաքանչյուրն իրավունք ունի հիշյալ պայմանաժամը լրանալուց հետո մի ամսվա ընթացքում դիմելու ընկերութեան վարչութեան գտնված վայրի ժողովրդական դատարանին, խնդրելով վոր արտոնե բաժնետերերի ընդհանուր ժողով գումարելը:

350. Ընդհանուր ժողովում չեն կարող վորոշումներ արվել այն խնդիրների մասին, վոր նշանակված չեն յեղել ժողովի գումարման ժաման արված հայտարարութեան կամ բաժնետերերին ուղարկված

ծանուցադրելի մեջ, բացի ընթացիկ գործերից: Ընդհանուր ժողովն
է վոր վորոշում է, թե ինչ խնդիրներ համարվում են ընթացիկ
գործ:

351. Յեթե ընդհանուր ժողովն արել է այնպիսի մի վորոշում, վոր
խախտել է որեւոր կամ կանոնադրությունը, այդ վորոշման թվա-
կանից մի ամսվա ընթացքում կարելի չէ առարկություն անել դրա
դեմ, դատ սկսելով ընկերության դեմ այդպիսի վորոշումը ջնջե-
լու մասին: Այդպիսի դատ սկսելու իրավունք ունի ընկերության
յուրաքանչյուր բաժնետեր:

352. Ընդհանուր ժողովը կայացած է համարվում, յեթե ներ-
կա լինին հիմնական դրամագլխի վոչ պակաս քան մի յերրորդ մա-
սը ներկայացնող բաժնետերեր: Ընդհանուր ժողովում վճիռները
կայացվում են բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ:

353. Կանոնադրության փոփոխության, բաժնետիրական դրա-
մագլխը ավելացնելուն կամ նվազեցնելուն, ընկերության գործերը
վերջացնելուն և լիկվիդացիայի յենթարկելուն, պարտատոմսերով փո-
խառություն կնքելուն և այլ բաժնետիրական ընկերությունների հետ
ձուլվելուն վերաբերյալ խնդիրները կարող են լուծվել միմիայն ձայ-
ների յերկու յերրորդի մեծամասնությամբ, այն ել յեթե ընդհա-
նուր ժողովին ներկա չեն հիմնական դրամագլխի վոչ պակաս քան
կեսը ներկայացնող բաժնետերեր: Յեթե կանոնադրության փոփո-
խության վերաբերյալ վորոշումներով ընկերության նույն ինքն
նպատակն է փոխվում, այդ դեպքում այդ վորոշումները պիտի ար-
վեն ձայների չորս հինգերորդի մեծամասնությամբ, այն ել յեթե
ժողովում ներկայացված է հիմնական դրամագլխի առնվազն յե-
րեք քառորդը:

Ծանոթություն.— Յեթե ժողովի յեկած բաժնետերերը չեն ներ-
կայացնում հիմնական դրամագլխի որեւորով կամ կանոնադրությամբ առ-
հանջված մասը, կարող է գումարվել յերկրորդ ժողով, վոր կայացած է հա-
մարվում ներկայացրած դրամագլխի չափիցն անկախ: 353-րդ. հոդվածում
հիշյատակված խնդիրների վերաբերմամբ, մինչև անգամ յերկրորդ ժողովն
բում վճիռներ կարող են կայացվել, յեթե միայն ներկայացված է հիմնական
դրամագլխի առնվազն մի յերրորդը:

354. Ընկերության վարչությունը բաղկացած պիտի լինի
առնվազն յերեք անդամից (անորենների) և 1—3 փոխ անդամներից:

վորոնց ընտրում է ընդհանուր ժողովը յերեք տարուց վոչ ավելի
ժամանակով, բաժնետերերից կամ կողմնակի անձերից: Այն ան-
ձինք, վոր դատական վճռով զրկված են պետական ծառայութեան
մտնելու իրավունքից, չեն կարող լինել տնօրեն կամ փոխ-տնօրեն,
հիշյալ դատավճռի ներդործութեան ամբողջ ժամանակամիջոցում:
Բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է պաշտոնանկ անել տնօ-
րեններին և փոխ-տնօրեններին նրանց ծառայութեան պայմանա-
ժամը լրանալուց առաջ: Այսպիսի պաշտոնանկութեան հետևանքով
առաջացած վնասները պիտի հատուցվին, յեթե պաշտոնանկութեանը
տեղի չե ունեցել առանց հիմնական պատճառների:

355. Ընկերութեան վարչութեան անդամներն իրենց աշխա-
տանքների համար ստանում են վարձատրութեան, վոր վորոշվում
է կանոնադրութեամբ կամ ընդհանուր ժողովի կողմից:

356. Վարչութեան անդամներն իրենց պարտականութեանները
կատարելիս անհրաժեշտ հոգատարութեան պետք է ցույց տան: Ի-
րենց պարտազանցութեան հետևանքով առաջացած վնասների հա-
մար նրանք համապարտ պատասխանատվութեան ունին ընկերու-
թեան առաջ, իսկ վերջնի անանկութեան դեպքում՝ ընկերութեան
պարտատերերի և առանձին բաժնետերերի առաջ:

357. Վարչութեանը վարում է ընկերութեան գործերը և նրա
ներկայացուցիչն է հանդիսանում թե դատարանում և թե կառա-
վարութեան մարմինների և բոլոր այլ անձանց հետ ունեցած հա-
րաբերութեանց մեջ, ընկերութեան բոլոր գործերում: Վարչութեան-
նը իրավունք ունի ընկերութեան գործառնութեանց շրջանակի մեջ
մտնող ամեն գործարք կնքելու: Նա պարտական է ընկերութեան
հաշվապահութեանը վարել և հաշիվ տալ ընդհանուր ժողովին՝ կա-
նոնադրութեամբ մատնանշված ժամանակին, իսկ յեթե այդ չկա՝
գործառնութեան տարին լրանալուց հետո յերեք ամսվա ընթացքում
ներկայացնել տարեկան տեղեկագիրը ընկերութեան գործունեու-
թեան մասին, կցելով ընկերութեան հաշվեկշիռը և շահ ու զեմնի հա-
շիվը:

358. Բաժնետիրական ընկերութեանը պարտավոր է ամեն
տարի հրատարակել իր տեղեկագիրն ու հաշվեկշիռը, սահմանված
ձևով:

359. Ծածկելու համար այն միասնները, վոր կարող են յերևան
գալ ըստ տարեկան տեղեկագրի՝ պիտի կազմվի պահեստի դրամա-
գլուխ, այդ նպատակի համար մասնատրելով զուտ ոգուտի առնը-
վազն մի քսանյերրորդ մասը, մինչև վոր դրամագլուխը համնի
կանոնադրությամբ վորոշված չափին։ Պահեստի դրամագլխի մեջ
մտնում է նաև բաժնետոմսերի անվանական արժեքի ավելին, լրա-
ցուցիչ բաժնետոմսեր բաց թողնելու դեպքում։

360. Վերատուգիչ հանձնաժողովն ընտրվում է մի տարով և
բաղկացած է լինում յերեք կամ ավելի բաժնետերերից։ Բաժնե-
տերերի փոքրամասնությունը, վոր ներկայացնում է առնվազն հիմ-
նական դրամագլխի մի տասներրորդը, կարող է պահանջել, վոր
վերատուգիչ հանձնաժողովի մեկ անդամը ընտրվի իրենցից։ Այս
գեպքում, փոքրամասնություն կազմող բաժնետերերը չեն մասնակ-
ցում վերատուգիչ հանձնաժողովի մյուս անդամների ընտրության։
Վերատուգիչ հանձնաժողովի պարտականությունն է քննել վարչու-
թյան տարեկան տեղեկագիրը, ստուգել ընկերության դրամարկը
և գույքը, իր ցանկացած յեղանակներով ու միջոցներով, անել
նախաքննությունը ընկերության ամեն տեսակի նախահաշիվների և
ծրագրների՝ առաջիկա տարվա համար և առհասարակ ստուգել ըն-
կերության ամբողջ գործավարությունը, հաշվապահությունը և հաշ-
վետվությունը։

Մանրագրում. — Վերատուգիչ հանձնաժողովի անդամներն իրենց
պարտազանցության հետևանքով առաջացած միասնների համար հա-
մապարտ պատասխանատվություն ունին ընկերության, իսկ ընկերու-
թյան անանկության դեպքում՝ նրա պարտատերերի առաջ։

361. Ընկերության գործերի ընդհանուր ղեկավարության հա-
մար նրա կանոնադրությամբ կարող է նախատեսվել խորհրդի
ընտրություն։ Խորհրդի անդամների թիվը, նրանց ընտրության կար-
գը, խորհրդի պարտականությունները և նրա գործունեյության
կարգը նախատեսվում են կանոնադրությամբ։ Խորհրդի անդամ-
ներն իրենց պարտազանցության հետևանքով առաջացած միասնների
համար պատասխանատու չեն ընկերության, իսկ ընկերության
անանկության դեպքում՝ նրա պարտատերերի առաջ։

362. Բաժնետիրական ընկերությունները, բացի ապահովա-
գրական և կարճժամանակյա վարկի վարկային հաստատություն-
ներից, կարող են փոխառություններ կնքել, պարտատոմսեր բաց

թողնելով, յեթե այդ իրավունքը նախատեսված է նրանց կանոնադրութեամբը, բաժնետերերի ընդհանուր ժողովի վորոշմամբ ոտնամանված պայմաններով: Այս վորոշումը պիտի մուծվի Տնտեսական Խորհրդակցութեան տոմարի մեջ և քաղվածորեն հրապարակվի: Պարտատոմսերի տերերը ընկերութեան գույքից բավարարություն ստանալու նախապատվություն ունին՝ հանդես պընկերութեան այն պարտատերերի, վորոնց պահանջները առաջ են յեկել փոխառութեան մասին ընդհանուր ժողովի արած վորոշման հրապարակումից հետո:

Ծանոթարյուն.— Պարտատոմսերով փոխառութեան կնքելը թույլ չի տրվում, քանի դեռ ամբողջութեամբ չե վճարված ընկերութեան հիմնական գրամագլուխը:

363. Ընկերութեան կանոնադրութեան կամ պարտատոմսերով փոխառութեան ստորագրվելու պայմանների մեջ կարող է նախատեսված լինել ընկերութեան պարտատոմսերի տերերի ընդհանուր ժողովներ գումարելը և նրանց միջից մի կամ մի քանի ներկայացուցիչ ընտրելը, վորոնց հանձնվում է պարտատոմսերի տերերի շահերի պաշտպանությունը թե՛ ընկերութեան և թե՛ յերրորդ անձանց հանդես: Պարտատոմսերի տերերի ընդհանուր ժողովի գումարման և գործունեութեան կարգի վերաբերմամբ, ըստ պատշաճի, կիրարկվում են բաժնետերերի ընդհանուր ժողովների մասին յեղած վորոշումները: Պարտատոմսերի տերերի ներկայացուցիչներն իրավունք ունին մասնակցելու բաժնետերերի ընդհանուր ժողովին և խորհրդակցական ձայնի իրավունքով և ժանոթանալու ընկերութեան գործերին, առանձին բաժնետերերին հավասար:

364. Բաժնետիրական ընկերութեանը լուծվում է. ա) յերբ լրանում է այն ժամանակը, վորով նա հիմնված է, բ) յերբ բաժնետերերի ընդհանուր ժողովը վորոշում է անում նրա գործունեութեանը վերջացնելու կամ այլ բաժնետիրական ընկերութեան հետ ձուլվելու մասին, գ) յերբ ընկերութեանը դատարանի վճռով փակվում է հայտարարվում, դ) կառավարութեան վորոշմամբ, յերբ ընկերութեանը շեղվում է կանոնադրութեան մեջ մատնանշված նպատակից, այլ և յերբ նրա մարմինները ընթանում են պետութեան շահերի հակառակ ուղղութեամբ (հոդ. 18):

Մանրագրութիւն. — 1. Ընկերութեան լուծումը տոմարագրութեան և հրապարակութեան նույն կարգով, ինչպէս վոր նրա հիմնարկութեանը:

Մանրագրութիւն. — 2. Ընկերութեան մի այլ ընկերութեան հետ ձուլվելու մասին պայմանագիր կնքում են վարչութեանները, բաժնետերերի ընդհանուր ժողովների սահմանած հիմունքներով, հետևելով բաժնետիրական ընկերութեան կանոնադրութեան փոփոխման կամ լրացման վերաբերյալ կանոններին:

365. Լիկվիդացիան այն ընկերութեան, վոր անանկ չե հայտարարված դատարանի կողմից, կատարվում է ընդհանուր ժողովից հատկապէս ընտրված հաշվեհարդար հանձնաժողովի ձեռքով, յերբ այլ քան չի վորոշված կանոնադրութեամբ: Յեթե հաշվեհարդարների ընտրութեանը ձգձգվում է, հաշվեհարդարները կարող են նշանակել վարչութեան գտնված վայրի ժողովրդական դատավորը, հիմնական գրամագլխի վոչ պակաս քան մեկ քսան յերրորդը ներկայացնող բաժնետերերի խնդիրքի հիման վրա: Դատարանի վճռով անանկ հայտարարված բաժնետիրական ընկերութեան հաշվեհարդարներին նշանակում է այն դատարանը, վոր յերևան է հանել ընկերութեան անանկութեանը: Հաշվեհարդարներն իրենց նշանակվելու որից փոխարինում են ընկերութեան վարչութեանը, գործում են ըստ ամենայնի ընդհանուր ժողովների հրահանգի կամ որենքի թելադրութեան համաձայն և պատասխանատու յեն իրենց պատճառած վնասների համար ընկերութեան պարտատերերի և բաժնետերերի առաջ նույն չափով, ինչ չափով որ վարչութեան անդամները:

366. Բաժնետիրական ընկերութեան լիկվիդացիան կատարվում է լիակատար ընկերութեանների լիկվիդացիայի համար սահմանված կարգով, այն տարբերութեամբ վոր լիկվիդացիայի յենթարկվող գույքի ազատ մնացորդները կարող են տրվել բաժնետերերին, վոչ վաղ քան լիկվիդացիայի վերջանալուց մի տարի անց:

Բաժնետերերը պարտավոր չեն վերագարձնել լիկվիդացիայի յենթարկվող մասային՝ իրենց ստացած շահաբաժինները, վոր իրենց հասել են կանոնավոր կազմված հաշվեկշռի հիման վրա: Լիկվիդացիայից մնացածը կարող է բաշխվել բաժնետերերի միջև, ըստ պարտատերերի պահանջները բավարարելուց կամ ապահովելուց հետո միայն:

367. Ապահովագրութեան պայմանագրով մի կողմը (ապահովագիրը) պարտավորվում է հատուցանել պայմանավորյալ վճարը (ապահովագինը), իսկ մյուս կողմը (ապահովագրողը) պարտավորվում է պայմանագրով նախատեսված պատահարի դեպքում վճարել պայմանագրին կամ յերրորդ անձին՝ (ոգտառուին) նրանց կրած վնասները, պայմանագրով պայմանավորյալ գումարի (ապահովագրական գումարի) սահմաններում, յեթե գույք է ապահովագրվածը, իսկ վճարել ապահովագրական գումարը՝ յեթե անձն է ապահովագրված:

368. Գույք ապահովագրելու դեպքում ապահովագրական գումարը չի կարող ավելի լինել այն ուղղակի վնասներից, վոր ապահովագիրը կամ ոգտառուն կարող են ունենալ պատահարի հետևանքով (ապահովագրութեան շահը): Կողմնակի վնասները կարող են ապահովագրվել միայն այն չափով, վորչափ վոր այդ թույլ է արվում ապահովագրութեան կանոններով:

Անձը բնական մահվան և դժբախտ դեպքերի առթիվ ապահովագրելու պարագային՝ ապահովագրական գումարը սահմանվում է փոխադարձ համաձայնութեամբ, պայմանագիր կնքելիս:

369. Յեթե գույք ապահովագրելիս պայմանագրում մատնանշված ապահովագրական գումարը ավելի լինի քան ապահովագրութեան շահը, պայմանագիրը վավերական է համարվում ապահովագրութեան շահի սահմաններում միայն, և ապահովագինը համապատասխան չափով նվազեցվում է, այս հանգամանքը պարզվելուց հետո յեկող ապահովագրական ժամանակաշրջանից սկսած: Յեթե ապահովագրական գումարի ավելի լինելը հետևանք է յեղել ապահովագրի խաբերայութեան, ապահովագրողը կարող է դատարանի միջոցով պահանջել, վոր պայմանագիրն անվավեր ճանաչվի, այլ և հատուցվին յուր վնասները, վորչափ վոր այդ վնասները ավելի յեն ստացված ապահովագններից. այս դեպքում նա պարտավոր չէ ապահովագրին վերադարձնել ապահովագները:

370. Յեթե գույք ապահովագրելիս կողմերը պայմանագրի մեջ ապահովագրական գումարը սահմանել են ապահովագրութեան շահ-

հից պակաս, տարբերութեան օրակը ընկնում է ապահովագրի իրեն վրա, իսկ ապահովագրողը պարտավոր է հատուցանել պատահարի հետևանքով առաջացած վնասների այն մասը միայն, վոր համաշափ է ապահովագրական գումարի ապահովագրութեան ամբողջ շահի հետ ունեցած հարաբերութեան:

371. Գույք ապահովագրելիս՝ արդեն ապահովագրված շահի համապատասխան մասի լրացուցիչ ապահովագրութեանը մի այլ ապահովագրողի հետ կնքված պայմանագրով թույլ է տրվում միայն այն ապահովագրողի գրավոր համաձայնութեամբ, վոր արդեն ապահովագրել է այդ շահի մի մասը: Անվավեր են այն պայմանագրերը, վոր կնքված են այս կանոնը խախտելով, իսկ ապահովագրի այսպիսի պայմանագրերի հիման վրա վճարած ապահովագները չեն վերադարձվում, յեթե հաջորդ պայմանագրողը տեղեկութեան չի ունեցել ոռաջուց կնքված ապահովագրութեան մասին:

372. Յեթե միևնույն ապահովագրական շահի վերաբերմամբ կնքված գույքի ապահովագրութեան մի քանի պայմանագրերի ապահովագրական գումարների ընդհանուր քանակը ավելի չէ այդ շահից (կրկնակի ապահովագրութեան), անվավեր է հաջորդ պայմանագրերի այն մասը, վոր վերաբերում է ապահովագրական շահիցն ավելի գումարին, իսկ վճարված ապահովագները չեն վերադարձվում: Իսկ յեթե ապահովագիրը հետաձգվում է յեղել անիքով շտի տառնալու պատահարից, այդ պարագային բոլոր կնքված պայմանագրերը անվավեր են, իսկ ապահովագրողները բացի դրանից կարող են պահանջել ապահովագրի իրենց պատճառած վնասների հատուցումը:

373. Գույքի ապահովագրութեան պայմանագիր կարող է կնքել ամեն վոք, վոր շահագրգռված է գույքի ամբողջութեան մասին, այն է՝ գույքի անփականատերը, գույքի վրա ընչական կամ վարձակալական իրավունք ունեցողը կամ պայմանագրով գույքի վտարանալուց կամ վոչնչանալուն համար պատասխանատու անձը: Պայմանագիր կնքելիս, ապահովագիրը պիտի ցույց տա յուր է պատահուի շահի ընդլիքը:

374. Անձի ապահովագրութեան պայմանագիրը կարող է կնք-

քվել ի դեպ ապահովագրի իրեն կամ յերրորդ անձի կյանքի հետ
կապ ունեցող պատահարներէ: Ի դեպ յերրորդ անձի մահվան պայ-
մանագիրը կարող ե կնքվել այդ յերրորդ անձի գրավոր համաձայ-
դությամբ, նշանակելով ապահովագրական գումարը և մասնանշելով
նոգառուին: Այսպիսի պայմանագիր կարող ե փոփոխվել կամ նրա
նով նախատեսված իրավունքները կարող են փոխանցվել ուրիշի,
նույնպէս ապահովագրված անձի գրավոր համաձայնութեամբ միայն:

375. Յեթե պատահարի դեպքում ապահովագրական գումարը
որենքով կամ պայմանագրով պիտի վճարվի վոչ թե ապահովա-
րին, այլ մի յերրորդ անձի (ոգտ և ուրիշ) այդ պիտի հիշատակված
լինի ապահովագրական անդորրագրի կամ ապահովագրի մեջ, ան-
վանելով ոգտառուին կամ առանց անվանելու (ուս հաշվով ապա-
հովագրութեւնը տեղի կունենա):

376. Ոգտառուի վրա պարտավորութեւններ են ընկնում ըստ
պայմանագրի, ապահովագրական անդորրագիրը կամ ապահովագիրը
նրան հանձնվելուց հետո, յեթե այլ բան չի բղխում որենքի վո-
րաշումներից կամ պայմանագրից:

377. Ապահովագրողը կարող ե անել ոգտառուի դեմ այն բո-
լոր առարկութեւնները, վոր նա ունի ապահովագրի դեմ:

378. Ապահովագրի մեջ պիտի սահմանված լինի, թե վիրքան
ժամանակի համար ե կնքվում պայմանագիրը կամ այն ժամանա-
կաշրջանները, վորոնց համեմատ տեղի պիտի ունենա ապահովագրի
հաշվարկութեւնը (ապահովագրական ժամանակաշրջան):

379. Ապահովագրութեան պայմանագիրը պիտի կնքվի գրավոր,
հակառակ պարագային անվավեր ե:

380. Պայմանագիր կնքելիս ապահովագրողը ապահովագրին
պիտի տա անդորրագիր կամ ապահովագիր, վորոնց մեջ պիտի ցույց
տրված լինին՝

- 1) Ապահովագրողի և ապահովագրի անունը:
- 2) Ապահովագրված շահը (ապահովագրված դույքի կամ անձի):
- 3) Այն ուիսկը, — վորի հանդեպ կնքվում ե ապահովագրութեւնը,
կամ պատահարը, վորի առթիւ ապահովագրողը պարտավոր
պիտի լինի վճարել ապահովագրական գումարը:

4) Ապահովագրութեան ներդրածութեան սկիզբն ու վախճանը:

5) Ապահովագրութեան դումարը:

6) Ապահովագրինը (վճարները), վճարման պայմանաժամը և տեղը:

Ապահովագրութեան առանձին տեսակների համար կարող են սահմանվել նաև այլ պարտադիր պայմաններ, վոր պիտի տրճանագրվին անդորրագրի կամ ապահովագրի մեջ:

381. Ապահովագրական անդորրագիրը կամ ապահովագիրը կարող են փոխանցվել ուրիշի՝ միայն համաձայն մասնավոր կանոնների, վոր սահմանվում են ապահովագրութեան յուրաքանչյուր առանձին տեսակի համար, բայց համեմատյալ դեպս ապահովագրողը կարող է ապահովագիր կամ ապահովագրական անդորրագիր ունեցող ամեն մարդու դեմ անել այն բոլոր սուարկությունները, վոր նա ունի ապահովագրի դեմ:

382. Պայմանագիր կնքելիս ապահովագիրը պարտավոր է ապահովագրողին հայտնել այն բոլոր հանգամանքները, վոր ետևան նշանակություն ունին պատահարի վտանգը վորոշելու կամ այդ պատահարի տեղի ունենալու հավանականութեան և կամ նրա տեղի ունենալու հետևանքով (պատահարի վտանգ) առաջանալիք վնասների չափը վորոշելու համար, վորչափ վոր այդ հանգամանքները հայտնի չեն յեղել կամ հայտնի պիտի լինեին ապահովագրին՝ ապահովագրութեան պայմանագիրը կնքելիս:

Այս տեսակետից ետևան են համարվում համեմատյալ դեպս այն բոլոր հանգամանքները, վոր ապահովագրողը վորոշակի հիշատակել է ապահովագրին ներկայացրած ապահովագրական կանոնների մեջ, կամ վորոնց մասին ապահովագրողը դրավոր հարցրել է ապահովագրից, պարզ և մեկին խոսքերով: Յեթե ապահովագրութեան պայմանագիրը կնքված է առանց ապահովագրողի կողմից դրավոր ձևով առաջարկված հարցերի պատասխանները ստանալու, այդ հանգամանքը հետագայում հիմք չի կարող լինել ապահովագրութեան պայմանագիրը լուծելու:

383. Յեթե ապահովագրութեան պայմանագիրը կնքելուց հետո հայտնվի, վոր ապահովագրական վտանգը վորոշելու համար ետևան նշանակություն ունեցող հանգամանքները իրապես չեն համապատասխանում ապահովագրի հայտարարութեանը, այդ դեպքում ապա-

հովազրոդը կարող ե գատարանի միջոցով պահանջել—թե՛ պատահարից առաջ ե թե՛ նրանից հետո—վոր պայմանագիրը անվավեր ճանաչվի: Յեթե այս հանգամանքի մասին ապահովագրողը տեղեկանա պատահարը տեղի ունենալուց առաջ, նա կարող ե պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին պահանջ ներկայացնել վոչ ուշ քան յերկու շաբաթվա ընթացքում: հակառակ պարագային դրելվում ե այդ հիման վրա պայմանագիրը անվավեր ճանաչելը պահանջելու իրավունքից:

384. Ապահովագրության պայմանագիրն անվավեր ե, յեթե նրա կնքման ժամանակ ապահովագրված գույքն այլևս գոյություն չունի, կամ արդեն չքացել ե ապահովագրի ապահովագրական շահը ե կամ գույքն այլևս յենթակա չե այն վտանգին, վորի դեմ ապահովագրված ե: Իսկ անձնական ապահովագրության դեպքում՝ նմանատեւ յեթե այլևս կենդանի չե այն անձը, վորի կյանքի հետ կապ ունի պատահարը կամ յեթե նա այլևս յենթակա չե պայմանագրով նախատեսված վտանգին:

385. Գույք ապահովագրելիս ապահովագիրը, այլև ոգտառուն—պայմանագրով նախատեսված պարտականությունները նրան փոխանցվելուց հետո—պարտավոր են անհապաղ տեղեկացնել ապահովագրողին իրենց հայտնի դարձած այն բոլոր խոշոր փոփոխությունների մասին, վոր տեղի յեն ունեցել պայմանագիրը կնքելիս ապահովագրողին հայտնված հանգամանքների մեջ ե վոր կարող են ետևան ազդեցություն ունենալ ապահովագրական վտանգի մեծանալու վրա: Այս տեսակետից ետևան են համարվում համեմայն դեպս այն բոլոր փոփոխությունները, վոր հիշատակված են ապահովագրին ներկայացված ապահովագրական կանոնների մեջ: Այս պարտականության զանցառության դեպքում, ապահովագրողը կարող ե պահանջել, վոր պայմանագիրը լուծվի կամ համապատասխան չափով փոփոխվին նրա պայմանները, վտանգի մեծանալու պահից սկսած:

386. Յեթե գույք ապահովագրելու դեպքում պատահարի վտանգը կամ նրա տեղի ունենալու հավանականությունը (ապահովագրական վտանգ) մեծանա պայմանագրի գործադրության մեջ յեղած ժամանակ պայմանագրով չնախատեսված պատճառներով,

այդ պարագային ապահովագրողը կարող է առաջարկել ապահովա-
դրին, այլ և ոգտառուին—պայմանագրով նախատեսված պարտա-
կանությունները նրան փոխանցվելուց հետո—վճարել համապատաս-
խան չափով ավելացրած ապահովագին. իսկ յեթե ապահովագիրը
այդ մասին գրավոր ծանուցումն ստանալուց հետո Մ որվա ընթաց-
քում հրաժարվի վճարելուց, ապահովագրողը կարող է պայմանագրի
լուծումը պահանջել:

387. Ապահովագրած գույքը ուրիշի փոխանցվելու դեպքում
ապահովագիրը կամ գույք ձեռք բերողը պարտական են անհապաղ
այդ մասին տեղեկացնել ապահովագրողին և հայտնել նրան ձեռք
բերողի անունն ու հասցեն:

388. Ապահովագրած գույքը նոր տիրոջ փոխանցվելու մասին
ծանուցում ստանալուց հետո ապահովագրողը Մ որվա ընթացքում
կարող է լուծել պայմանագիրը, յեթե ինքն ուղղակի կամ անուղ-
ղակի (որ., նոր տիրոջից ապահովագին ընդունելով և այլն) կեր-
պով համաձայնություն չի հայտնել ապահովագրության պայմանա-
գրով նախատեսված իրավունքների նոր տիրոջը փոխանցվելու մա-
սին: Յեթե ապահովագրողը չի ոգտվել այս իրավունքից, պայմա-
նագիրը պահում է իր ուժը և գույք ձեռք բերողը ստանձնում է
ապահովագրի բոլոր իրավունքներն ու պարտականությունները: Յե-
թե ապահովագրողը ոգտվել է հիշյալ իրավունքից, նա պարտական
է գույք ձեռք բերողին վերադարձնել առաջուց ստացած ապահո-
վագնի այն մասը, վոր համապատասխանում է գույքը փոխանցվե-
լու պահից մինչև հաջորդ վճարի պայմանագրումը մնացող ժամա-
նակին:

389. Ապահովագիրը պարտավոր է ապահովագրողին վճարել
ապահովագինը սահմանված պայմանագրամերում և պայմանավորյալ
տեղում:

Մինչև ապահովագին վճարելը կամ մինչև նրա առաջին մաս-
նավճարը, ապահովագրության պայմանագիրը դորություն չունի,
յեթե այլ բան չի նախատեսված պայմանագրով:

Ապահովագնի հետագա մասնավճարները ուղացնելու դեպքում
ապահովագրողը—յեթե այլ բան չի բղխում պայմանագրից—ա-
գտավում է ապահովագրական գումարը վճարելու պարտականությու-

նից, յեթե պատահարը տեղի ունենա նախ քան ժամանակը բաց
թողած ապահովագնի վճարումը:

Յեթե տոկոսների չափի մասին համաձայնություն չի յեղել,
ապահովադրողը կարող է որինական տոկոս պահանջել վճարումը
ուշացրած ապահովագնի համար:

390. Գույքի ապահովագրության պայմանագրով ապահովադի-
րը կամ ոգտառուն պատահարի տեղի ունենալու դեպքում պար-
տական են անհապաղ կամ համեմատյան դեպս վորոշյալ պայմանա-
ժամերում և ապահովագրության կանոններով մատնանշված յեղա-
նակով այդ մասին տեղեկացնել ապահովադրողին: Այս պարտակա-
նության զանցառության դեպքում ապահովադրողն ազատվում է
ապահովագրական գումարը վճարելուց:

391. Նախորդ հոդվածում մատնանշված անձինք նույնպես
պարտավոր են, հնարավոր յեղած չափով ապահովագրողի ցուցմունք-
ների համաձայն, ձեռք առնել իրենց մասշնի բոլոր միջոցները՝
պատահարից առաջանալիք վնասները նվազեցնելու համար:

Յեթե այդ միջոցները ձեռք են առնված ապահովագրողի ցուց-
մունքով, դրա համար յեղած ծախսերը օրիտի հատուցանե ապա-
հովագրողը:

392. Ապահովադիրն ու ոգտառուն իրավունք չունին միջոցներ
ձեռք առնելու կամ այնպիսի գործողություններ կատարելու, վոր
կարող են դժվարացնել վնասների իսկական չափի ճշգրտումը:

393. Ապահովադրողը ազատվում է ապահովագրական գումարը
վճարելուց, յեթե պատահարը տեղի յե ունեցել ապահովադիր կամ
ոգտառուի չար դիտավորության կամ կոպիտ անզգուշության հե-
տևանքով:

394. Ապահովադրողը պատասխանատու չե արտաքին կամ քա-
ղաքացիական պատերազմի հետևանքով առաջացած վնասների հա-
մար, յեթե այլ բան չի սահմանված պայմանագրով:

395. Ապահովագրական գումարը վճարած ապահովագրողին են փո-
խանցվում, այդ գումարի սահմաններում, այն պահանջներն ու ի-
րավունքները, վոր ունի ապահովադիրը կամ ոգտառուն
յերրորդ անձանց հանդեպ՝ դարմանելու համար այն վնաս-

ները, վորը ծածկելու համար վճարված է ապահովագրական գումարը:

Յեթե ապահովագիրը կամ ոգտառուն հրաժարվին յերրորդ ան-
ձանց վրա ունեցած այդ պահանջից կամ իրավունքից, այդ դեպ-
քում ապահովագրողը համապատասխան չափով ազատվում է ապա-
հովագրական գումարը վճարելու պատասխանատվությունից:

396. Ապահովագրության պայմագրից բխող բոլոր պահանջ-
ների վաղեմության պայմանաժամը յերկու տարի յէ:

397. Գույքի ապահովագրության առանձին տեսակների, այն
է՝ հրդեհի, անասունների համաճարակի, կարկասահարության դեմ և
փոխադրության ապահովագրության, այլ և անձնական ապահովա-
գրության, ի դեպ մահվան և վորոշ ժամանակ ապրելու, և դժբախտ դեպ-
քերի դեմ ապահովագրելու պայմանները վորոշվում են Թինանոնե-
րի Ժողովրդական Կոմիտարիատի հաստատած մասնավոր կանոնա-
դրություններով:

398. Սույն գլխի վորոշումները չեն տարածվում պարտադիր
ապահովագրության բոլոր տեսակների վրա, վորչափ վոր նրանց
վերաբերող կանոնների մեջ ցուցմունք չկա այս վորոշումների մա-
սին:

XII. ԱՆՀԻՄՆ ՇԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒՄՆԵՐ (ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

399. Առանց որեւքով կամ պայմանագրով սահմանված բու-
վարար հիմքի ուրիշի հաշվին շահվողը պարտավոր է վերադարձնել
անհիմն կերպով ստացածը: Վերադարձնելու պարտավորությունը
առաջ է գալիս նաև այն ժամանակ, յերբ անհիմն շահառության
հիմքը չքանում է հետագայում:

400. Անհիմն շահառուն պարտավոր է վերադարձնել այն
յեկամուտները կամ հատուցանել նրանց փոխարենը, վոր նա ու-
նեցել է կամ պիտի ունենար անհիմն կերպով ստացած գույքից,
այն ժամանակից՝ յերբ նա իմացել է կամ պիտի իմանար թե
անհիմն է իր շահառությունը: Նույն այդ ժամանակից նա պա-
տասխանատու յէ գույքը վատթարացնելու կամ նրա վատթարացումը
թույլ տալու համար: Մինչև այդ ժամանակը նա պատասխանատու
յէ միայն չար դիտավորության և կոպիտ անփութության համար:

Մյուս կողմից շահառուն իրավունք ունի պահանջելու վոր հա-
տուցվին գույքի վրա իր արած անհրաժեշտ ծախսերը այն որ-
վանից, յերբ նա պարտական և վերադարձնել յեկամուսնները:

401. Հանձնառություն կատարողը, յեթե նույնիսկ այդ հանձնա-
ռությունը զուրկ լինի քաղաքացիական դատի ուժից, բայց ան-
վավեր չլինի որեւի գորությամբ, իրավունք չունի պահանջելու
հատուցածի վերադարձումը:

402. Ուրիշի հաշվին այդ անձի ապուրինի կամ ի մնաս պե-
տության ուղղված գործողության հետևանքով շահվողը պարտավոր
և անհիմն կերպով ստացածը վճարել հոգում պետության:

XIII. ՈՒՐԻՇԻ ՎՆԱՍ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱ- ՋԱՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒՄՆԵՐ

403. Ուրիշի անձին կամ գույքին մնաս հասցնողը պարտավոր
և հատուցանել պատճառած մնասը: Նա ազատվում և այս պարտա-
վորությունից, յեթե ապացուցանե, վոր ինքը չեր կարող այդ
մնասի առաջը առնել, կամ վոր ինքը իրավազորված և յեղել այդ
մնասը հասցնելու, և կամ վոր այդ մնասը առաջացել և տուժողի
չար դիտավորությունից կամ կռախա անգղուշությունից:

404. Այն անձինք ու ձեռնարկությունները, վորոնց գործու-
նեությունը կարող և մեծապես վտանգավոր լինել շրջապատողնե-
րի համար, որ, յերկաթուղիները, տրամվեյը, գործարանային
ձեռնարկությունները, դյուրավառ նյութեր վաճառողները, վա-
րիկենդանիներ պահողները, շինություններ կառուցանողներն և այլն,
պատասխանատու յեն այն մնասի համար, վոր առաջացել և մեծ
վտանգի աղբյուրից, յեթե չապացուցանեն, վոր մնասը հետևանք և
յեղել մի անհաղթահարելի ուժի կամ տուժողի չար դիտավորու-
թյան կամ կռախա անփութություն:

Ծանոթություն.— Այս հոդվածի վրա հիմնված և պետական
մարմինների դեմ ուղղված պահանջների դատական վաղեմու-
թյունը մի տարի յե:

405. Անգործունակ անձը, ի բաց առյալ Թ-րդ հոդվածով նա-
խատեսված դեպքերը, պատասխանատու չե յուր պատճառած մնա-
սի համար: Նրա փոխարեն պատասխանատու յե նրա վրա հակո-
ղության պարտականություն ունեցող անձը:

406. Այն դեպքերում, յերբ 403 — 405 հոդվածների համաձայն, ֆնաս հասցնողը պարտավոր չե հատուցանելու այդ ֆնասի փոխարենը, դատարանը այնուամենայնիվ կարող ենրան պարտավորացնել ֆնասի փոխարենը հատուցանել, նայելով նրա և տուժողի տքնտեսական վիճակին:

407. Հիմնարկությունը պատասխանատու յե պաշտոնական անձի պաշտոնական անկանոն գործողությունների հետևանքով առաջացած ֆնասների համար, որենքով մասնավորապես մատնանշված դեպքերում միայն, այն ել՝ յեթե պաշտոնի գործողությանց անկանոնությունը ճանաչված ե դատական կամ վարչական պատշաճ մարմնի կողմից: Հիմնարկությունը ազատվում ե պատասխանատվությունից, յեթե տուժողը ժամանակին չե բողոքել անկանոն գործողության դեմ: Մյուս կողմից հիմնարկությունն իրավունք ունի տուժողին տված հատուցումը դնել պաշտոնի վրա:

408. Միասնաբար ֆնաս պատճառող անձինք համապարտությամբ պատասխանատու յեն տուժողի առաջ:

409. Մահ պատճառելու դեպքում հատուցումն ստանալու իրավունքը պատկանում ե այն անձանց, վորոնք ապրել են մեռնողի ծախքով և ապրուստի այլ միջոցներ չունին: Թաղման ծախքը պիտի վճարվի այդ ծախքն անողներին:

410. Վնասի հատուցումը պիտի լինի նախկին վիճակի վերականգնումը. իսկ յեթե այդ վերականգնումը անհնարին ե, պիտի հատուցվի պատճառած կորուստը:

411. Վնասի չափը վորոշելիս դատարանը բոլոր դեպքերում պարտական ե ուշադրության առնել տուժողի և ֆնաս պատճառողի տնտեսական վիճակը:

412. Սոցիալական ապահովագրության կարգով ապահովագրված անձը պատահարը տեղի ունենալու դեպքում՝ բավարարություն ե ստանում սոցիալական ապահովագրության մարմնից:

413. Այն անձը կամ ձեռնարկությունը, վոր սոցիալական ապահովագրության կարգով ապահովագրական տուրքեր ե վճարում տուժողի համար, պարտավոր չե հատուցանել պատահարը տեղի ունենալու հետևանքով առաջացած ֆնասը:

Բայց յեթե փառք հետեանք և ձեռնարկուի հանցավոր դոր-
ծողութեան կամ անդործութեան, առժողին բաժարարող սոցիալա-
ան ազատութեան մարմինն իրավունք ունի ձեռնարկուին պա-
հանջ ներկայացնելու՝ առժողին իր տված նպատակի չափով (յեռ-
դանձումն)։

Հիշյալ դեպքում առժողը իրավունք ունի լրացուցիչ պահանջ
ներկայացնելու ձեռնարկուին, յեթե նա սոցիալական ազատվա-
րութեան կարգով փաստի լիակատար հատուցումն չի ստանում։

414. Յեթե փաստ պատճառողը առժողի ազատվազիրը չէ,
այդ դեպքում առժողն իրավունք ունի լրացուցիչ պահանջ ներ-
կայացնելու փաստ պատճառողին, յեթե նա սոցիալական ազատ-
վազիրութեան կարգով փաստի լիակատար հատուցումն չի ստանում։
Սոցիալական ազատվազիրութեան մարմինը փաստ պատճառողին պա-
հանջ ներկայացնելու իրավունք ունի, առժողին տված նպատակի չա-
փով (յեռ դանձումն)։

415. Չազատվազրված անձը փաստ պատճառողից չի կարող
ավելի հատուցումն պահանջել քան ինչ, ինչ վեր կարող եր ստա-
նալ ազատվազրվածը սոցիալական ազատվազրութեան մարմնից
փաստ պատճառողից՝ 414-րդ հոդվածի կարգով։

Այս պարագային առժող անձը համարվում և բանվորների և
ստալյոզների համադրատեսիսան կառեղորիային պատկանող, նա-
կելով նրա անսեռական վիճակին և սոցիալական ազատվազրութեան
ստիճանին՝ դատարանի հայեցողութեամբ։

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

416. Թույլատրվում է ժառանգել ըստ որինի և ըստ կտակի, համաձայն հետադա հոգվածների, ժառանգական գույքի ընդհանուր արժեքի սահմաններում, վոր — գույքի հանելով մեռնողի բոլոր պարտքերը — 10,000 վոսկի ռուբլուց ավելի չպիտի լինի:

Ծանոթ. — Պետական մարմինների մասնավոր անձանց հետ կնքած պայմանագրերից (վարձակալական, կոնցեսիայի, կառուցողական և այլն) բղխող իրավունքները ժառանգության կարգով փոխանցվում են, ըստ որինի և ըստ կտակի, այդ պայմանագրերում մատնանշված պայմանաժամերի սահմաններում, առանց սույն հոգվածով վորոշված արժեքով սահմանափակվելու:

417. Յեթե ժառանգության ընդհանուր արժեքը ավելի չէ 10,000 վոսկի ռուբլուց, այդ պարագային մի կողմից պետության, ի դեմս ֆինանսների Ժողովրդական կոմիտեի և նրա մարմինների և մյուս կողմից ըստ որինի և ըստ կտակի ժառանգելու կոչված մասնավոր անձերի միջև, հոգուտ պետության շահադրդոված մարմինների՝ կառարվում է բաժանումը կամ լիկվիդացիան ժառանգական գույքի այն մասի, վոր ավելի չէ ժառանգության սահմանված արժեքից:

Յեթե ժառանգական գույքի բաժանումը իր բաղկացուցիչ մասերի բնույթովը տնտեսապես անշահավետ և անհարմար է, այդ դեպքում պետական մարմինների և մասնավոր անձանց միջև հաստատվում է միասնական տիրապետություն կամ իրավունք է տրվում գնելու համապատասխան մասը հոգուտ պետության կամ մասնավոր անձանց, յեթե այդ թույլատրելի չէ պետական շահերի տեսակետից:

418. 416-րդ. հոգվածում մատնանշված հիմունքներով ժառանգելու չեն կոչվում միմիայն ուղիղ գծով իջնող ժառանգները (գավակներ, թուռներ և ծուռներ) և մեռնողից հետո կենդանի մնացած ամուսինը, այլ և այն անաշխատունակ և չքավոր անձինք, վորոնց մեռնողը յուր ծախքովը պահել է իր մահից առաջ վոր պակաս քան մի տարի:

Ծանոթ. — Ժառանգ կարող են լինել ժառանգատուի մահվան պահուն կենդանի յեղողները, այլ և նրա կենդանության ժամանակ հղացված և նրա մահվանից հետո ծնված գավակները:

419. Ըստ որինի ժառանգելը 416-րդ հոգվածում մատնանշված

ված սահմաններում՝ տեղի չե ունենում բոլոր պարագաներում,
յերբ և վորչափով վոր այդ չի փոփոխված կտակով:

420. Ըստ որինի ժառանգելու պարագային ժառանգական
զույքը համասար շնչարածիներով բաշխվում և 418-րդ հոդվա-
ծում մասնանշված բոլոր անձանց միջև:

421. 418-րդ. հոդվածում թված անձերից նրանք, ովքեր ապ-
րել են մեռնողի հետ միասին, ստանում են տնային կահավորման
և դործածության վերաբերյալ զույք, բացի շքեղության առարկա-
ներից, առանց այդ հաշվելու 416-րդ հոդվածում սահմանված գու-
մարի մեջ:

422. Կտակ համարվում և վորևե անձի կողմից ի դեպ մահու
դրավոր կերպով արված այն կարգադրությունը, վորով զույքը
պետք և հանձնվի 418-րդ հոդվածում մասնանշվածներից մեկ կամ
մի քանի անձերի, կամ պետք և բաշխվի այդ անձանց մի քանիսի
և կամ բոլորի միջև, այլ կարգով քան վոր նախատեսված և 420-րդ
հոդվածի մեջ:

Ծանոթություն — Կտակարարը կարող և զրկել ըստ որինի ժա-
ռանգելու իրավունքից 418-րդ հոդվածում մասնանշված անձերից մե-
կին, մի քանիսին կամ բոլորին: Այդ պարագային ժառանգական զույ-
քը ամբողջությամբ կամ մասնակի անցնում և պետության 417 և
433-րդ հոդվածների կարգով:

423. Կտակարարը կարող և ըստ կտակի ժառանգական զույք
ստացողի վրա դնել պարտականություն՝ կատարել վորևե հանձնա-
ռություն հոգուտ որինական ժառանգորդներից մեկի, մեկ քանի-
սի կամ բոլորի (հոդ. 418), վորոնք այդ կարգադրության զորու-
թյամբ իրավունք են ստանում ըստ որինի ժառանգ հանդիսացողից
պահանջելու համապատասխան հանձնառության կատարումը:

424. Թույլատրվում են կտակներ, վորոնցով—այն դեպքում
յերբ կտակի մեջ նշանակված ժառանգը մեռել և նախ քան ժա-
ռանգության բացումը կամ չի ընդունել ժառանգությունը—կտա-
կարարը ժառանգելու չե կոչում ըստ որինի ժառանգներից վորևե
այլ մեկին (հոդ. 418):

425. Կտակը պետք և ստորագրված լինի կտակարարի կողմից
և ներկայացված նոտարության՝ նոտարական մատյանի մեջ մու-

ծելու համար:

Կտակարարի ստորագրութեան փոխարեն, անդրագրեաների կտակները նրանց փոխարեն ստորագրում և յերրորդ անձը:

Նոտարական մատյանից հանված քաղվածքը փոխարինում և խսկական կտակը:

426. Հետո կազմված կտակը ջնջում և հախորդը, ցորչափ հախորդի մեջ չեն մնում աշխարհի կարգադրութեաններ, վոր չեն հախատեալած հետագա կտակում: Կտակարարը կարող և վոչնչացնել կտակը առանց նոր կտակ կազմելու, այս մասին անելով նոտարական կամ դատարանական հայտարարութեան, վոր պետք և մուծվի նոտարական մատյանի կամ դատական արձանագրութեան մեջ:

427. Կտակի գործադրութեանը դրվում և նրա մեջ նշանակված ժառանգորդների վրա, յեթե կտակարարը իր կտակում վորոշ անձի—կտակակատարի չի հանձնել իր կամքի կատարումը: Այս պարագային պահանջվում և կտակակատարի համաձայնութեանը բուն իսկ կտակագրի վրա կամ նրան կցված առանձին հայտարարութեամբ:

428. Մասնավոր անձերի կամ մասնավոր անձերի ու պետական հիմնարկութեանների միջև ժառանգելի գույքի վնասատութեան, բաժանման և հաշվետվութեան կարգի վերաբերյալ տարաձայնութեաններն ու վեճերը լուծում և դատարանը:

429. Յեթե ժառանգութեան բացված տեղում զանազան ժառանգը ժառանգական գույքի պահպանութեան համար միջոցներ ձեռք առնելու որից 3 ամսվա ընթացքում պատշաճ դատարանին չհայտնե, վոր ինքը հրաժարվում և ժառանգութեանից, նա համարվում և ժառանգութեանը ընդունած:

Հրաժարվածի բաժինը անցնում և պետութեան:

Ներկա յեղող ժառանգները կարող են ստանձնել ժառանգական գույքի կառավարութեանը, առանց սպասելու մյուս ժառանգների գալուն, վորոնք ժամանակին գալով կարող են պահանջել իրենց բաժինը ժառանգական գույքից:

430. Ժառանգութեան բացման վայրից բացակայող ժառանգները կարող են ժառանգական գույքը ընդունել կամ անձամբ կամ փոխանորդների միջոցով ժառանգական գույքի պահպանութեան

համար միջոցներ ձեռք առնելու որից վեց ամսվա ընթացքում:

Ծանոթ.— Ժառանգության բացման պահուն դեռ չծնված ժառանգի բաժինը նրա ծնվելուց հետո յերեք ամսվա ընթացքում կարող և պահանջել նրա որինական ներկայացուցիչը:

431. Ժառանգները հայտարարությամբ կամ այլ յեղանակներով չեն կանչվում, բայց ժառանգության բացված վայրի ժողովրդական դատարանը ձեռք և առնում միջոցներ՝ ժառանգության պահպանության համար ժառանգատուի մահվան մասին տեղեկություն ստանալուց հետո անհապաղ: Ժառանգության պահպանությունը տևում է մինչև ժառանգների ներկայանալը, բայց վեց ամսից վոչ ավելի:

Ծանոթ.— 1. Ժառանգատուի վերջին բնակավայրի քաղաքացիական վիճակի արձանագրությանց բաժինը ժառանգատուի մահվան մասին տեղեկություն ստանալուն պես պարտական է անհապաղ հաղորդել այդ մասին համապատասխան ժողովրդական դատարանին:

Ծանոթ.— 2. Ժառանգության բացման տեղը համարվում է ժառանգատուի վերջին բնակավայրը:

432. Գործող ձեռնարկության (առևտրական և արդյունաբերական ձեռնարկություններ և արհեստանոցներ) ժառանգների բացակայության դեպքում, դատարանը նշանակում է հատուկ պատասխանատու հոգաբարձու: պետական այն մարմնի առաջարկությամբ, վորի վերատեսչության տակ գտնվում են համապատասխան ձեռնարկություններն ու արհեստանոցները:

433. Յեթե ժառանգները, ժառանգական գույքի պահպանության համար միջոցներ ձեռք առնելու թվականից մինչև վեց ամիս չներկայանան, այլ և յեթե ժառանգները հրաժարվին ժառանգությունից (ի բաց առյալ 434-րդ հոդվածով նախատեսված դեպքը), ժառանգությունը համարվում է անժառանգ և անցնում է պետության համապատասխան մարմինների տնօրինությունը:

434. Ժառանգությունը ընդունած ժառանգը, այլ և պետությունը, վորին անցել է անժառանգ գույքը, պատասխանատու յեն ժառանգության վրա ծանրացող պարտքերի համար, բայց ժառանգական գույքի իսկական արժեքի սահմաններում միայն:

Ծանոթ.— Ժառանգատուի պարտատերերը իրենց պահանջները պարտավոր են հայտնել պահպանության համար միջոցներ ձեռք առնվելու որից 6 ամսվա ընթացքում. հակառակ պարագային կորցնում են իրենց պահանջի իրավունքը:

435. Ըստ որինի կամ ըստ կտակի ժառանգելու կոչված անձինք կարող են տեղական ժողովրդական դատավորից խնդրել իրենց ժառանգական իրավունքը հաստատող վկայաթուղթ:

ՎՐԻՊԱԿՆԵՐ

ՏՊԱԳՐՎԱԾ Ե

ՊԻՏԻ ԼԻՆԻ

- Հոդ. 11 (6-րդ տող) կամ խնամա- (ծնողների կամ խնամակալների)
կալների
- Հոդ. 24 (3-րդ տող) կարգով և կարգով և
- Հոդ. 25-ից հետո պիտի լինի նոր IV. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ
պլուխ
- Հոդ. 29-ից հետո յեկող IV. ԳՈՐ-
ԾԱՐՔՆԵՐ գլուխը պիտի վե-
րանա
- Հոդ. 58-ի ծանոթութեան (4-րդ տող) Որենսդրքի 22-րդ
Որենսդրքի 21-րդ.
- Հոդ. 59 (7-րդ տող) յերբ նա ստա- յերբ նա իմացել և կամ պիտի իմա-
ցել և ծանուցագիր՝ սեփական- ցար, վոր յուր տիրապետութեանը
նատիրոջ դատ սկսած լինելու անիրավ և, կամ ստացել և ծանու-
մասին կամ այլ ճանապարհով ցագիր՝ սեփականատիրոջ գույքը վե-
իմացել և վոր յուր տիրապե- րադարցնելու վերաբերմամբ դատ
տութեանը անիրավ և սկսած լինելու մասին
- Հոդ. 97 (4-րդ տող) համար վեր- համար. վերջին
- Հոդ. 102 (1-ին տող) վոչնչանա տ- վոչնչանա
ղեօի հեռեվանքով
- Հոդ. 153 (6-րդ տող) 136-րդ հոդ- 136-րդ հոդվածի ծանոթութեան մեջ
վածի մեջ
- Հոդ. 185 (3-րդ տող) կոմունալ բաժ- Կոմունալ բաժնու. հակառակ
նում հակառակ
- Հոդ. 229 (8-րդ տող) ներկայացնե- ներկայացնելու համար պայմանադրով
լու պայմանադրով համար
- Հոդ. 311-ից հետո III. Կոմանդիտ 3. Կոմանդիտ ընկերութեան
ընկերութեան
- Հոդ. 340 (16-րդ տող) առանձին երե- առանձին բաժնեկերերի
նադիրների
- Հոդ. 349-ի ծանոթութեան վերջում Յս գեպում կիրառվում են ըս-
բայ և թողնված ցա գեպում կիրառվում են ըս-
պատեցի՝ վարչութեան կողմից բեզ-
հանու. ժողով գումարելու. վերա-
բերյալ կանոնները:

Հող. 374 (4-րդ տող)	համաձայնող- թյամբ	համաձայնող- թյամբ
Հող. 374 (5-րդ տող)	նդատառութիւն	ոգտառութիւն
Հող. 375 (2-րդ տող)	ապահովարիւն	ապահովադրիւն
Հող. 415 (2-րդ տող)	ստանալ	ստանալ
Հող. 415 (2-րդ տող)	քան	քան
Հող. 415 (3-րդ տող)	սոցիալական	սոցիալական

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՍԻՏԵԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

I.	Հիմնական սկզբունքներ	3
II.	Իրավունքների յենթակաները	3
III.	Իրավունքների առարկաները	6
IV.	Գործարքներ	7
V.	Քաղաքացիական դատի վաղեմությունը	10

ԸՆՁԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԲ

I.	Սեփականության իրավունք	12
II.	Կառուցման իրավունք	15
III.	Գույքի գրավը	18

ՊԱՐՏԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԲ

I.	Ընդհանուր սկզբունքներ	22
II.	Պայմանագրերից բխող պարտավորումներ	27
III.	Գույքի վարձակալություն	33
IV.	Առ ու ծախս	38
V.	Փոխանակություն	43
VI.	Փոխառություն	44
VII.	Կապալ	46
VIII.	Յերաշխարհություն	49
IX.	Հանձնարարություն	51

Բ. ՓՈԽԱՆԱՐԴԱԳԻՐ

X.	Ընկերություններ	54
1.	Պարզ ընկերություն	55
2.	Լիակատար ընկերություն	60
3.	Կոմանդիտ ընկերություն	64
4.	Ընկերություն սահմանափակ պատասխանատվությամբ	66
5.	Բաժնետիրական ընկերություն	67
XI.	Ապահովագրություն	81
XII.	Անհիմն շահառություն հետևանքով առաջացող պարտավորումներ	88
XIII.	Ուրիշի վնաս հասցնելու հետևանքով առաջացած պարտավորումներ	89

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԲ

92

ՎՐԻՊԱԿՆԵՐ

96

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0394680

[2043]

ЦЕНА

L 6 4
1124

ԳԻՆՆ Ե 1 ՌՈՒՔԼԻ